ՖԻՐՈՒԶԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱՅԻԼՅԱՆ



ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
«Տնտեսագետ»
2021

ՖԻՐՈՒԶԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱՅԻԼՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ
«Տնտեսագետ» հրատարակչություն
2021

ՀՏԴ 331.101.262(07)
ԳՄԴ 65.240g7
Մ 234

Հրատարակվում է
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

Մասնագիտական խմբագիր՝
Ս.Ա. Գրիգորյան
դոցենտ

Գրախոսներ՝ Մ.Ե. Պետրոսյան
տ.գ.դ., պրոֆեսոր
Վ.Ս. Ալեքսանյան
տ.գ.թ., դոցենտ

Մայիլյան Ֆիրուզա
Մ 234 Մարդկային կապիտալի տեսության հիմունքները: Ուսումնական ձեռնարկ / Ֆ. Մայիլյան.- Եր.: Տնտեսագետ, 2021.- 132 էջ:

Ուսումնական ձեռնարկում քննարկվել են մարդկային կապիտալի տեսության էվոլյուցիան, էությունը, դրա գնահատման ժամանակակից մոտեցումները, ձևավորման և արդյունավետ օգտագործման հիմնախնդիրները: Ներկայացվել են մարդկային կապիտալի դերակատարումը և ներդրումը տարբեր երկրների տնտեսական աճի ապահովման գործում, ինչպես նաև տնտեսական աճի նոր մոդելներ՝ մարդկային կապիտալի ընդգրկմամբ:

Գիրքը նախատեսված է տնտեսագիտական բուհերի ուսանողների, ասպիրանտների, պրոֆեսորադասախոսական կազմի և տնտեսագետ մասնագետների համար:

ՀՏԴ 331.101.262(07)
ԳՄԴ 65.240g7

ISBN 978-9939-61-230-0

© Մայիլյան Ֆ.,2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ 7

1.1. Մարդկային կապիտալի տեսության ձևավորման նախադրյալներն ու ելակետային դրույթները 7

1.2. Մարդկային կապիտալի էությունը և կառուցվածքը 20

1.3. Մարդկային կապիտալի չափման մեթոդները 31

1.4. Մարդկային կապիտալի գնահատման ցուցանիշների համակարգը 48

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 59

2.1. Մարդկային կապիտալում ներդրումների էությունը, տեսակները և դրանց առանձնահատկությունները 59

2.2. Մարդկային կապիտալում ներդրումների դերն ու նշանակությունը հետարդյունաբերական տնտեսությունում 66

2.3. Մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգը 84

2.4. Մարդկային կապիտալում ներդրումների տնտեսական արդյունավետության վերլուծության մեթոդները 92

ԳԼՈՒԽ 3. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆ 99

3.1. Մարդկային կապիտալի արտացոլվածությունը տնտեսական աճի ժամանակակից տեսություններում և մոդելներում 99

3.2. Մարդկային կապիտալը որպես տնտեսական աճի գործոն և դրա գնահատման մոտեցումները 114

Օգտագործված գրականության ցանկ 124

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսության զարգացման արդի փուլում առանձնակի նշանակություն են ստանում մարդկային կապիտալի ձևավորումը և իրացումը՝ որպես տնտեսական աճի կարևոր գործոններ: Տեխնոլոգիական զարգացման աննախադեպ տեմպերը լուրջ փոփոխությունների են հանգեցնում հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, և անհրաժեշտություն է առաջանում վերաիմաստավորելու մարդու տեղն ու դերը վերարտադրության ողջ գործընթացում: Գնալով ավելի շատ են քննարկվում հասարակական կյանքի գնահատման այնպիսի չափանիշներ՝ ըստ որոնց նոր մոտեցումներ են պահանջվում մարդկային կապիտալի վերարտադրությունն ապահովող ոլորտների (կրթություն, առողջապահություն, մշակույթ և այլն) դերի գնահատման համար:

Աշխարհի բոլոր երկրների զարգացման մակարդակն ու տեմպն օրըստօրե էլ ավելի են կանխորոշվում կուտակված մարդկային կապիտալի մեծությամբ և որակով, քանզի XX դարի տեղեկատվական հեղափոխությունը նոր պահանջներ է ներկայացնում գիտելիքի գեներացման, նորացման և ներդրման գործընթացներին: Հետարդյունաբերական տնտեսության կարևորագույն ռեսուրս է դառնում մարդկային կապիտալը, որն իր արտացոլումն է գտնում զարգացած երկրների տնտեսական քաղաքականության առաջնահերթություններում՝ առանձնակի ուշադրություն հրավիրելով կրթության, գիտության, առողջապահության զարգացման վրա: Վերջին տարիների ընթացքում իրականացվում են լայնածավալ հետազոտություններ՝ միտված մարդկային կապիտալում ներդրումների և տնտեսական աճի միջև եղած կապի բացահայտմանն ու այդ կապի քանակական գնահատմանը:

Մարդկային կապիտալի տեսությունն ունի տեսական և մեթոդաբանական շատ խոր արմատներ: Մարդկային ունակությունների՝ որպես կապիտալի հատուկ տեսակի ընկալման ելակետային դրույթները ներկայացված են դեռևս Վ. Պետիի, Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի, Կ. Մարքսի, այնուհետ՝ Ջ. Միլի, Հ. Սիդժվիկի, Ա. Մարշալի, Ռ. Ֆարի, Տ. Վիթստեյնի աշխատություններում: Սակայն, միայն XX դարի կեսերից սկսած, այն դարձել է ժամանակակից տնտեսագիտական մտքի կարևորագույն և հեռանկարային ուղղություններից մեկը: Մարդկային կապիտալի ժամանակակից տեսությունը ձևավորվել է 1950-

1960 թթ.-ին՝ շնորհիվ Նոբելյան մրցանակակիրներ Գ. Բեքերի, Թ. Շուլցի և Ջ. Մինցերի հետազոտությունների: Այդ ժամանակաշրջանից ի վեր նշված հիմնախնդրին նվիրված աշխատությունների թիվն արագորեն սկսել է աճել: Արտասահմանյան և հայրենական գիտնականների ներդրած ջանքերի արդյունքում լուրջ ձեռքբերումներ են ապահովվել մարդկային կապիտալի տեսության որոշ կողմերի ուսումնասիրության բնագավառում՝ ստեղծելով անհրաժեշտ տեսամեթոդաբանական հիմք այդ հիմնախնդրի հետագա հետազոտման համար:

Ուսումնական ձեռնարկի հիմնական նպատակն է ընթերցողին ներկայացնել մարդկային կապիտալի էությունը, դրանում կատարվող ներդրումների տեսակներն ու առանձնահատկությունները, դրանց արդյունավետության գնահատման խնդիրները, ինչպես նաև մարդկային կապիտալում ներդրումների և տնտեսական աճի փոխազդեցության կառուցակարգը:

ԳԼՈՒԽ 1

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

1.1. Մարդկային կապիտալի տեսության ձևավորման նախադրյալներն ու ելակետային դրույթները

Մարդկային կապիտալի տեսությունն ունի տեսական և մեթոդաբանական շատ խոր արմատներ, սակայն միայն XX դարի կեսերին էր, որ այն դարձավ ժամանակակից տնտեսագիտական մտքի կարևորագույն և հեռանկարային ուղղություններից մեկը: Մարդու ունակությունների, պահանջմունքների, տնտեսական վարքագծի, արտադրական հնարավորությունների, տնտեսական համակարգում նրա ունեցած տեղի ու դերի հիմնախնդիրները, այսպես ասած՝ «տնտեսական մարդու» կերպարը միշտ գրավել են գիտնականների ուշադրությունը: Սակայն, մարդու սոցիալ-տնտեսական դերն առավել ամբողջական կերպով քննարկվում է հենց մարդկային կապիտալի տեսության մեջ: Մարդկային ունակությունների՝ որպես կապիտալի հատուկ տեսակի ընկալման ելակետային նախադրյալները ներկայացված են դեռևս Վ. Պետիի, Ա. Սմիթի, Դ. Ռիկարդոյի, Կ. Մարքսի, Ջ. Միլի, Հ. Սիդժվիկի, Ա. Մարշալի, Ա. Ֆարի, Տ. Վիթստեյնի աշխատություններում: Վ. Պետին առաջինն էր, որ փորձեց քանակապես գնահատել մարդկանց՝ արհեստավորների, ծովայինների, զինվորների, «կենդանի գործող ուժերի» արժեքը՝ դա հավասարեցնելով ստացած տարեկան եկամտի քսանապատիկին[1]:

Ա. Սմիթը մարդու աշխատանքային ունակությունները, գիտելիքը դիտարկել է որպես անձի մեջ մարմնացած հիմնական կապիտալ[2]: Նրա բնորոշմամբ՝ աշխատողի արտադրական ունակությունները

---

[1] **Петти В.,** Экономические и статистические работы, М., "Соцэкгиз", 1940, т. 1, стр. 82, 154, 171.

[2] **Смит А.,** Исследование о природе и причинах богатства народов, М., "Наука", 1980, стр. 280.

մասնակցում են եկամտի ստեղծման գործընթացին նույն կերպ, ինչ մեքենաները, սարքավորումները, հողը, սակայն վերջիններս չեն ներառվում շրջանառության մեջ և անբաժան են սեփականատիրոջ անձից: Աշխատուժի ձևավորումը, որպես հիմնական կապիտալի բաղադրիչ տարր, լրացուցիչ ծախսեր է պահանջում, որոնք կապիտալիստը հավասարեցնում է այլ կապիտալ ծախսերի հետ: Այդպիսով՝ աշխատուժը դառնում է կապիտալի կառուցվածքային մաս: Միաժամանակ, աշխատանքի ու ժամանակի մեծ ծախսումներով որևէ մասնագիտություն ձեռք բերած մարդուն Ա. Սմիթը համեմատել է թանկարժեք մեքենայի հետ: Նրա պնդմամբ՝ մասնագիտական ձեռքբերումը որոշակի ծախսեր է պահանջում՝ ներառյալ դաստիարակության և ուսման ընթացքում կատարվածը: Եվ այդ ծախսերն էլ հենց ձևավորում են անհատի մեջ մարմնավորված հիմնական կապիտալը: Անհատի գիտելիքը, հմտություններն ու ունակությունները, կուտակած փորձը նրա հարստության մաս են: Բայց, միաժամանակ, դրանք նաև ազգային հարստության բաղկացուցիչներ են: Աշխատողի հմտությունները կարելի է դիտարկել նույն տեսանկյունից, ինչ աշխատանքի միջոցները և մեքենաները, որոնք կրճատում են աշխատաժամանակը և հեշտացնում գործը, թեպետ և որոշակի ծախսեր են պահանջում, որոնք հետգնվում են և ապահովում լրացուցիչ եկամուտ: Ուստի կարելի է ենթադրել, որ աշխատողի ստացած եկամուտը փոխհատուցում է նրա կատարած ծախսերը կամ առնվազն հավասարվում նույն մեծության կապիտալից ստացվող եկամտին[3]: Ա. Սմիթի այս դրույթը հետագայում կիրառվել է մարդկային կապիտալի ժամանակակից տեսության մեջ՝ մարդկային կապիտալում կատարված ներդրումների հատույցի ներքին նորմայի հաշվարկման համար:

Դ. Ռիկարդոն զարգացրել է Ա. Սմիթի գաղափարները, հիմնավորելով, որ աշխատողի որակավորման բարձրացման արդյունքում ստացվող հավելյալ արժեքը նույնքան իրական է, որքան մեքենաների կատարելագործումից ստացվողը: Նա նշել է, որ երկրի զարգացման մակարդակը մեծապես կախված է աշխատողների կրթական և զարգացածության աստիճանից:

Մարդու ունակություններին և առհասարակ արտադրության գործընթացում աշխատանքի դերին հանգամանորեն անդրադարձել է

[3] Նույն տեղում, էջ 179:

Կ. Մարքսը: Նրա կարծիքով՝ մարդու զարգացումը կարելի է դիտարկել որպես հիմնական կապիտալի արտադրություն:

Մարքսն աշխատուժի վերարտադրությունը որակել է որպես հասարակական արտադրության երկրորդ տեսակ՝ ըստ որի աշխատուժը զարգանում ու կատարելագործվում է, քանի որ տեղի է ունենում արտադրողական ուժերի «կուտակում»՝ առավելապես մտավոր ունակությունների տեսքով:

Կ. Մարքսի բնորոշմամբ՝ բարդ աշխատանքն աշխատուժի բնութագրիչ է: Զարգացած աշխատուժը կարող է իրացվել ինչպես բարդ, այնպես էլ պարզ աշխատանքում, մինչդեռ հասարակ աշխատուժը ոչ մի դեպքում չի կարող դրսևորվել բարդ աշխատանքում: Զարգացած աշխատուժը, ի տարբերություն հասարակի, ունակ է ստեղծելու ավելի մեծ արժեք, բայց քանի որ դրա պատրաստման համար ծախսվում է ավելի շատ հասարակական աշխատանք, ապա այն ունի վերարտադրության ավելի մեծ արժեք:

Կ. Մարքսը կարևորել է նաև ազատ ժամանակի դերն անհատի զարգացման գործում: Աշխատաժամանակի խնայողությունը հավասարազոր է ազատ ժամանակի ավելացմանը, որն անհրաժեշտ է անհատի լիարժեք զարգացման համար և նպաստում է վերջինիս աշխատանքի արտադրողականության մակարդակի բարձրացմանը[4]:

Ա. Մարշալը նշել է. «Այն դրդապատճառները, որոնք ստիպում են ներդրումներ կատարել մարդկային կապիտալում, նման են այն դրդապատճառներին, որոնք պայմանավորում են նյութական կապիտալի կուտակումը»[5]: Նրա համոզմամբ՝ ամենաարժեքավորն այն կապիտալն է, որը մարմնավորված է մարդկային էակներում: Խոսելով կրթության հասանելիության մասին՝ Ա. Մարշալը շեշտել է, որ այդ նպատակի համար պետական միջոցները պետք է հոսեն «գետի պես»[6]:

Վ. Պետին, կարևորելով պետության դերը կրթության և առողջապահության ֆինանսավորման գործում, գրել է. «Վատ չէր լինի, որ պետությունն աջակցեր տաղանդավոր մարդկանց, ինչպես նաև նրանց, ովքեր ի վիճակի չեն ապահովելու իրենց համար նվազագույն կենսապայմաններ, քանի որ աղքատներին պահելը հասարակության

[4] **Маркс К., Энгельс Ф.,** Сочинения,изд, второе, М., Издательство политической литературы, 1968, т. 46, стр. 15.

[5] **Маршалл А.,** Принципы экономической науки, М., “Прогресс”, 1993, стр. 542.

[6] Նույն տեղում, էջ 467-487:

համար ավելի թանկ է արժենում, քան համապատասխան աշխատանքով նրանց ապահովելը»[7]:

Ջ. Ռ. Մակ Կուլոքսը մարդկային էակներին շատ հստակորեն բնորոշել է որպես կապիտալ. «Սովորաբար, կապիտալը դիտարկվում է որպես արդյունաբերական արտադրանքի մի մաս, որը հեշտացնում է մարդու աշխատանքը և նպաստում արտադրության հետագա զարգացմանը: Եվ այս տեսանկյունից, կարծես թե, գոյություն չունի որևէ հիմնավոր պատճառ՝ ըստ որի մարդն ինքը չի կարող կապիտալ համարվել: Գործնականում գոյություն ունեն բազում պատճառներ, որոնք թույլ են տալիս մարդուն դիտարկել որպես ազգային հարստության մի մաս»[8]:

Ն.Ու. Սենիորն այն կարծիքին էր, որ մարդը կարող է դիտարկվել որպես կապիտալ: Բայց նա, որպես կապիտալ, դիտարկել է ոչ թե մարդուն, այլ նրա ունակություններն ու հմտությունները[9]: Հետագա շարադրանքում նա մարդուն համարել է կապիտալ, որի համար կատարվում են որոշակի ծախսեր՝ հետագայում եկամուտ ստանալու ակնկալիքով[10]: Նա նշել է, որ ազատ մարդու և ստրուկի արժեքի միջև սկզբունքային տարբերությունն այն է, որ ազատ մարդն իր աշխատանքային ծառայություններն ինքն է վաճառում միայն որոշ ժամանակահատվածում, և որոշակի պայմաններով, իսկ ստրուկը վաճառվում է մինչև իր կյանքի ավարտը:

Հենրի Դ. Մակլեոդն աշխատող մարդուն բնութագրել է որպես կապիտալ: Եթե մարդն ընդգրկված չէ հասարակական արտադրության մեջ, ապա նա ենթակա չէ տնտեսական վերլուծության[11]: Այս կարծիքը, ըստ էության, հակասում է Լ. Վալրասի մոտեցմանը՝ համաձայն որի բոլոր մարդիկ դիտարկվում են որպես կապիտալ, որի արժեքը որոշվում է այլ կապիտալ բարիքների արժեքի նման[12]:

---

[7] **Петти В.,** Трактат о налогах и сборах, Антология экономической классики в 2-х т., М., «ЭКОНОВ», 1993, т. 1, стр. 475.

[8] **McCullox J. R.,** The Principles of Political Economy, Alex Murrey @ Son, 1870, p. 57-67.

[9] **Nassay W. S.,** An Outline of the Science of Political Economy, N. Y., Farrar @ Rincart, 1939, p. 68-69, 204-226.

[10] Նույն տեղում, էջ 10:

[11] **Macleod H. D.,** The Elements of Economics, Vol 11, N. Y., D. Appleton, 1881, p. 134, 205-206, 213.

[12] **Walras L.,** Elements of Pure Economics, Translated by William Jaffe, Homewood, Richard D. Irwin, 1954, p. 40, 214-216, 271.

Ի. Ֆիշերի պնդմամբ՝ կապիտալը «եկամտի հոսք ապահովող բարիք է», և քանի որ մարդը նույնպես օժտված է այդ հատկությամբ, հետևաբար՝ նրան պետք է դիտարկել որպես կապիտալ: Ավելին, անհատի և՛ բնածին, և՛ ձեռքբերովի հմտություններն ու ունակությունները պետք է դիտարկել որպես կապիտալ[13]:

Է. Դենիսոնը նշել է. «Ֆիզիկական կապիտալում մարմնավորված գիտատեխնիկական առաջընթացը ենթադրում է կապիտալ բարիքների որակական փոփոխություն: Դա ընդունելի է նաև մարդկային կապիտալի համար: Բնածին հմտություններն ու ունակությունները մարմնավորված են մարդկանց մեջ և պայմանավորում են նրանց արտադրական ունակությունները: Հետևաբար՝ ունակություններն ու հմտություններն անբաժանելի են անհատից, և չի կարելի խոսել դրանց մասին՝ իբրև կապիտալի. կապիտալ է միայն որոշակի գիտելիք ձեռք բերած անհատը»[14]:

Որոշ տնտեսագետներ մարդուն, որպես «կապիտալ արժեք», բնութագրել են Առաջին համաշխարհային պատերազմում կրած կորուստները գնահատելու համար[15]: Հարոլդ Բոագը, ուսումնասիրելով մարդկային կյանքի՝ որպես կապիտալ արժեքի խնդիրը, հանգել էր այն կարծիքին, որ ֆիզիկական և մարդկային կապիտալների միջև գոյություն ունեն լուրջ նմանություններ[16]: Բացի այդ, նա առաջ էր քաշել մի քանի կարևոր հարցեր՝ կապված մարդկային կապիտալի գնահատման հիմնախնդրի հետ: Ըստ այդմ՝ նախևառաջ, գնահատման մեթոդը պետք է բխի այն նպատակներից, որոնց համար դա օգտագործվում է, երկրորդ՝ պետք է շատ ուշադիր լինել ինչպես ֆիզիկական, այնպես էլ մարդկային կապիտալի վրա կատարվող ծախսերի հոդվածների հաշվարկման հարցում, և երրորդ՝ անհրաժեշտ է հաշվի առնել ֆիզիկական և մարդկային կապիտալի փոխներգործության բնույթն ու աստիճանը: Ըստ Բոագի՝ մարդկային կապիտալի գնահատման համար առավել նպատակահարմար է կիրառել եկամուտների կապիտալացման մեթոդը, քանի որ այդ դեպքում գնահատվում է մարդու կողմից ստեղծված նյութական իրերի արժեքը: Մինչդեռ

[13] **Fisher Ir.,** The Theory of Interest, New York, Augustus M. Kelley, 1965, p. 12-13.

[14] **Denison E.,** The Unimportance of the Embodied Question, A.E.R.m, LIV March, 1964, p. 91.

[15] **Boag J. Harald A.,** Human Capital and the Cost of War, Royal Statis Col., January, 1916, p. 17.

[16] Նույն տեղում, էջ 9:

արտադրության արժեքի մեթոդը կարող է հաշվի առնել անհատի համար կատարվող այն ծախսերը, որոնք չեն ազդում նրա աշխատունակության բարձրացման վրա: «Համախառն» (եկամուտների կապիտալացման) մեթոդը, Ջ. Բոագի կարծիքով, առավել նպատակահարմար է կիրառել պատերազմում կրած կորուստների գնահատման համար, քանի որ այդ պարագայում հաշվարկվում է ոչ թե կորցրած ավելացված, այլ համախառն արժեքը (կապիտալացված եկամուտը):

Չնայած այն հանգամանքին, որ Ն.Ու. Սենիորն ավելի վաղ էր դա նկատել, Ջ. Բոագն առաջինն էր, որ անդրադարձավ մարդկային կապիտալի գնահատման հետ կապված բարդություններին: Նրա կարծիքով, ըստ արտադրության արժեքի մեթոդի, դժվար է հստակ կերպով որոշել, թե որքան գումար է ծախսվել խնամքի, կրթության, դաստիարակության և այլնի ուղղությամբ, քանի որ ծախսերի մի մասն անմիջականորեն չի ազդում մարդու արտադրողականության աճի վրա[17]:

Ջ. Ուոլշն առաջիններից մեկն էր, որ XX դարում «վերակենդանացրեց» մարդկային կապիտալի տեսությունը և իրականացրեց կոնկրետ հաշվարկներ ազգային եկամտի վրա կրթության մակարդակի ազդեցությունը գնահատելու համար: Առաջին անգամ, մարդկային կապիտալի համատեքստում, նա օգտագործեց «արտադրության այլընտրանքային ծախսեր», «բարիքների ժամանակային նախապատվություն» հասկացությունները, որոնք լայնորեն կիրառվել են մարդկային կապիտալի ժամանակակից տեսության մոտեցումներում[18]:

Ինչպես տեսնում ենք, տնտեսության մեջ մարդու արտադրական ունակությունների ունեցած դերի վերաբերյալ գիտական հայացքները շատ բազմազան են, երբեմն էլ՝ հակասական ու անավարտ:

Իհարկե, յուրաքանչյուր հասարակարգում մարդն ինքն է կանխորոշում տնտեսական զարգացումը՝ իր փորձի, գիտելիքի շրջանակում: Բայց, այնուամենայնիվ, նախաարդյունաբերական և արդյունաբերական դարաշրջաններում մարդու դերն այդ գործընթացում անհրաժեշտ խորությամբ չի գիտակցվել:

XIX-XX դարերում ձևավորվել են մարդկային կապիտալի տեսու-

[17] **Boag J., Harald A.,** Human Capital and the Cost of War, Royal Statis. Soc., January, 1916, p. 17.

[18] **Wolsh J. R.,** Capital Concerp appled to Man. The Quarterly Journal of Economics, 1935, N 2, p. 255-285.

թյան հիմքերն ու նախանշվել դրա հետագա զարգացման հիմնական ուղղությունները:

Մասնավորապես՝ տեխնիկայի և տեխնոլոգիայի արմատական փոփոխությունների արդյունքում տնտեսագիտական հասկացությունների վերանայման և վերարժևորման հրամայական է ներկայացվել. կատարելագործվել են տնտեսական վերլուծության մեթոդները, մշակվել տնտեսագիտության տեսության նոր ուղղություններ, արագացել է տնտեսական գիտությունների տարանջատման գործընթացը: Տնտեսական իրականության նոր պայմաններն առաջադրել են մարդու դերի գնահատման նորովի մոտեցում:

Տնտեսական գիտության և մենեջմենթի փորձում ծագել և ամրապնդվել են «մարդկային հարաբերությունների» տեսությունները (Է. Մեյո, Ռ. Լայկերտ, Մ. Մակգրեգոր և այլք), աշխատավորների կյանքի որակի հայեցակարգը (Լ. Դևիս, Դ. Ռիսմեն, Ջ. Գելբրեյթ և այլք), աշխատողների՝ կառավարմանը մասնակցելու համակարգերը (Ռ. Լայկերտ, Չ. Բարնարդ և այլք): Այս բոլոր հայեցակարգերն ու տեսությունները սոցիալիստական մոտեցումների յուրօրինակ այլընտրանք էին և, միաժամանակ, հանդես էին գալիս որպես մարդկային կապիտալի տեսության զարգացման գաղափարական հիմք:

1929-1933 թթ. տնտեսական ճգնաժամի հետևանքով ի հայտ եկան մրցակցային շուկայի սահմանափակումները: Ջ.Մ. Քեյնսը մակրոտնտեսական վերլուծության օբյեկտ դարձրեց այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնային տնտեսությունների, ձեռնարկությունների վարքագիծը, համազգային մարդկային կապիտալը և այլն:

Այսպիսով՝ գիտատեխնիկական հեղափոխությունը մարդու դերի վերաիմաստավորման դրդապատճառ դարձավ: Գիտությունը վերածվեց անմիջական արտադրողական ուժի: Արագորեն զարգացան մտավոր սեփականության ինստիտուտը և «նոու-հաուն»՝ որպես ձեռնարկությունների կապիտալի հատուկ մաս: Մտավոր կապիտալը դարձավ կազմակերպության մրցունակության գլխավոր գործոն: Եվ, ի վերջո, տեղեկատվական հեղափոխությունը տեղեկություններն ընկալելու, վերամշակելու, վերլուծելու և նոր գիտելիք ստեղծելու ունակությունների կատարելագործման և գործնական կիրառման հրամայական ներկայացրեց մարդկությանը:

Նշված օբյեկտիվ նախադրյալներն էլ հենց նպաստեցին մարդկային կապիտալի տեսության ձևավորմանն ու հետագա զարգացմանը:

Այդ տեսությունը ծագեց XX դարի 50-90-ական թթ.-ին՝ մարմնավորվելով Տ. Շուլցի, Գ. Բեքերի, Բ. Վեյսբրոդի, Ջ. Մինցերի, Լ. Հանսենի, Մ. Բլաուգի, Ս. Բոուրսի և այլոց աշխատությունների մեջ և հարստանալով առավելապես արևմտյան տնտեսագիտական մտքի նորդասական ուղղության շրջանակներում:

Մարդկային կապիտալի տեսության հիմնադիրն է համարվում Տ. Շուլցը: Իր հոդվածներում («Կրթական կապիտալի ձևավորումը» (1960), «Ներդրումները մարդկային կապիտալում» (1961)) նա ներկայացրել է ժամանակակից տնտեսության մեջ մարդու տնտեսական դերի իր ըմբռնումը: Տնտեսական աճի գործում Տ. Շուլցը կարևորել է կրթության դերը՝ վերջինիս ուղղությամբ կատարված ներդրումները նույնացնելով տեխնիկական առաջընթացի համար կատարված ներդրումների հետ, քանի որ երկու դեպքում էլ աճում է արտադրողականության մակարդակը:

Մարդկային կապիտալի տեսությունը համակարգված տեսք է ստացել Գ. Բեքերի «Մարդկային կապիտալ. տեսական և էմպիրիկ վերլուծություն» աշխատության մեջ: Հեղինակի համոզմամբ՝ շատ երկրներում ֆիզիկական կապիտալի աճը պայմանավորում է եկամտի աճի աննշան մասը, իսկ այդ եկամտի մեծ մասն ապահովվում է մարդկային կապիտալի շնորհիվ: Գ. Բեքերի աշխատություններում լայնորեն կիրառվել են մարդկային կապիտալում կատարված ներդրումների և դրանցից ստացվող հատույցի քանակական վերլուծության մեթոդներն ու մոդելները: Բացի տնտեսականից, մարդկային կապիտալում կատարված ներդրումները բերում են նաև լրացուցիչ սոցիալական արդյունք (կյանքի որակի լավացում, սոցիալական լավատեսություն և այլն): Մարդկային կապիտալի տեսությունը շատ երկրներում նպաստել է պետության սոցիալական քաղաքականության դերի վերագնահատմանը, հետևաբար՝ կրթության, առողջապահության, մշակույթի և այլ բնագավառներում կատարված ծախսերն արդեն դիտարկվում են ոչ թե որպես բյուջեի անվերադարձ ծախսեր, այլ բարձր արդյունավետ ներդրումներ:

Մ. Բլաուգի կարծիքով՝ մարդկային կապիտալի հայեցակարգի հիմնական գաղափարն այն է, որ մարդիկ ռեսուրսներ են ծախսում ոչ միայն ընթացիկ պահանջմունքների բավարարման համար, այլև հետագայում դրամական և ոչ դրամական որոշակի օգուտներ ստանալու ակնկալիքով: Մարդիկ կարող են ներդրումներ կատարել իրենց

առողջության պահպանման, կրթության ձեռքբերման, թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկություններ ստանալու և այլ նպատակներով: Մ. Բլաուգն առաջ է քաշել սկրինինգի վարկածը՝ ըստ որի, երբ գործատուն անձնակազմի ընտրություն է կատարում, նա չի կարող հստակ կերպով կանխորոշել հայցորդների ապագա վարքագիծն ու արտադրողականությունը, ուստի և հակված է հաշվի առնելու վերջիններիս կրթական մակարդակը՝ որպես սկրինինգավորող՝ «ֆիլտրող» գործիք, որի օգնությամբ կարելի է դատել հավակնորդների ունակությունների, նպատակասլացության և սոցիալական ծագման մասին: Այսպիսով՝ կրթության ներդրումը տնտեսական աճի ապահովման գործում գործատուների համար ընտրությունը դյուրացնող գործիք է դառնում[19]: Է. Դոլանի կարծիքով՝ մարդկային կապիտալը կրթության կամ փորձի միջոցով ձեռք բերված մտավոր ունակություններն են[20]:

Ի. Բեն Պորետը մարդկային կապիտալը բնորոշել է որպես մի հիմնադրամ, որի գործառույթն աշխատանքային ծառայությունների տրամադրումն է չափման ընդունված միավորներով, որով էլ նա նմանվում է ֆիզիկական կապիտալին[21]:

Լ. Թարոուն կարևորել է մարդկային կապիտալի այնպիսի հատկանիշ, ինչպիսին է քաղաքական և սոցիալական կայունության ձգտումը, ինչը ձեռք է բերվում համապատասխան կրթության և դաստիարակության միջոցով[22]:

Խորհրդային տնտեսագիտական միտքը երկար ժամանակ քննադատորեն էր վերաբերվել մարդկային կապիտալի տեսությանը՝ մեծ ուշադրություն դարձնելով տվյալ հայեցակարգի գաղափարական և քաղաքական կողմերին: Նման մոտեցումներն առայսօր զարգացնում են մի շարք ռուս գիտնականներ՝ Վ.Գ. Դոլգովը, Վ.Յա. Ելմեևը, Մ.Վ. Պոպովը և այլք, որոնք պնդում են, որ այս կամ այն ապրանքի մեջ

[19] **Блауг М.,** Методология экономической науки, или как экономисты объясняют, пер. с англ./ науч. ред. Автономов. В. С., М., "Дело" ЛТД, 2004, стр. 395-460.

[20] **Долан Э. Дж.,** Почему ставки заработной платы так различны?, Долан Э. Дж., Линдсей Д. Е., Рынок: микроэкономическая модель, пер. с англ./ -СПб., "Печатный двор", 1992, стр. 496.

[21] The role of Human Capital in Economic Crowth:The Case of Spain // Working Paper of International Monetary Fund, https://www.imf.org/external/pubs/ft/wp/2000/wp0008.pdf

[22] **Thurow L.,** Investment in Human Capital, Belmont, 1970, p. 104.

առարկայացած աշխատանքը կապիտալ չէ, քանի որ վերջինս հասարակական, արտադրական հարաբերություն է, որի միջոցով յուրացվում է աշխատանքով ստեղծված հավելյալ արժեքը: Ուստի, նրանց համոզմամբ, մարդկային գործունեությունը չի կարելի սահմանել որպես կապիտալ[23]:

XX դարի 90-ական թթ.-ին տնտեսագիտական միտքը ձերբազատվել է քաղաքական և գաղափարական կապանքներից, վերահիմաստավորվել են արևմտյան տնտեսագիտական դպրոցների տեսությունները: Խորհրդային հետազոտողներն իրենց ուշադրությունը սևեռել են մարդկային կապիտալի հիմնախնդիրների ուսումնասիրության վրա: Մարդկային կապիտալի վերարտադրական կողմերին են նվիրված Մ.Մ. Կրիտսկու աշխատությունները: Նա առաջարկել է անհատական մարդկային կապիտալի մեծության գնահատման որոշակի մեթոդներ՝ ըստ վերջինիս շարժման փուլերի: Կրիտսկու գաղափարներն իրենց զարգացումն են գտել Ի. Իլյինսկու, Լ. Սիմկինայի աշխատություններում: Ի. Իլյինսկին քննարկել է գիտատեխնիկական հեղափոխության դերը մարդկային կապիտալի տեսության ծագման հարցում և հիմնավորել հետարդյունաբերական հասարակության մեջ մարդկային կապիտալում կատարվող ներդրումների մեծացման անհրաժեշտությունը: Լ. Սիմկինայի աշխատություններում արծարծվել են տեխնոկրատականից նորարարական հասարակության անցման օրինաչափությունները, և մարդկային կապիտալը դիտարկվել է որպես մարդու կենսագործունեության հարստացում՝ բարիքների «արտադրություն-սպառում» միասնության մեջ: Հետարդյունաբերական տնտեսության մեջ մարդկային պահանջմունքների և ունակությունների բազմազանությունը հանդես է գալիս որպես գործունեության նախադրյալ, նպատակ և արդյունք:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ դասական դպրոցի ներկայացուցիչները ձևակերպել են մի շարք մեթոդաբանական դրույթներ, որոնք մարդկային կապիտալի հետագա ուսումնասիրության համար կարևոր հիմք են հանդիսացել:

Նախևառաջ, շնորհիվ նրանց ուսումնասիրությունների, հստակեցվել է մարդու դերը հասարակական արտադրության մեջ: Նրանց հա-

[23] **Долгов В. Г., Ельмеев В. Я., Попов М. В.,** Будущее за обществом труда, СПБ., С.-Петербург ун-т, 2003, стр. 131-133.

ջողվել է ապացուցել, որ մարդկանց արտադրական ունակություններն ազգային հարստության կարևոր տարր են, և դրանք նույնպես անհրաժեշտ է հաշվառել վերջինիս կազմում:

Երկրորդ, նրանք հիմնավորել են այն դրույթը, որ մարդկային հմտությունների, ունակությունների զարգացմանն ուղղվող ծախսերն արտադրողական են, հետևաբար՝ արդյունավետ են նաև ներդրումները մարդկային կապիտալում:

Երրորդ, նրանք առաջ են քաշել մարդկային ունակությունների զարգացմանն ու կատարելագործմանն ուղղվող ծախսերի արդյունավետության քանակական գնահատման մոտեցումները:

Մարդկային կապիտալի տեսության հետագա զարգացումն ընթացել է հիմնականում նորդասական դպրոցի շրջանակներում: Այս ուղղության ներկայացուցիչները տնտեսագիտական վերլուծության գործիքներն ու մեթոդները կիրառել են մարդկային գործունեության այնպիսի ոլորտների ուսումնասիրության համար, որոնք մինչ այդ հոգեբանության, սոցիոլոգիայի, ժողովրդագրական այլ գիտությունների տիրույթում էին: Նշված մոտեցումը մարդկային կապիտալի տեսության հետագա զարգացման լայն դաշտ է ստեղծել:

Մարդկային կապիտալի տեսությունն ունի տեսական և գործնական շատ մեծ նշանակություն: Նախևառաջ, նշված տեսության շրջանակներում վերաիմաստավորվել է «կապիտալ» եզրույթի էությունը: Շնորհիվ Ի. Ֆիշերի, Տ. Շուլցի, Ու. Բոուենի և այլոց՝ լայն ընդունելության է արժանացել այն դրույթը, որ կապիտալ է համարվում բարիքների յուրաքանչյուր պաշար, որի արտադրողական օգտագործումը տեղի է ունենում երկար ժամանակահատվածի կտրվածքով և ապահովում եկամտի հոսք: Այսպես՝ Ու. Բոուենը նշել է, որ վերջին տասնամյակի ընթացքում վերափոխվել է այն կարծիքը, որ կապիտալը բաղկացած է միայն նյութական ակտիվներից, և գնալով իշխում է այն ընկալումը՝ համաձայն որի կապիտալ է համարվում յուրաքանչյուր ակտիվ՝ ֆիզիկական կամ մարդկային, որն օժտված է եկամտի հոսք ապահովելու հատկությամբ[24]: Նման մոտեցումը սոցիալական համագործակցության ձևավորման և զարգացման գաղափարական

[24] **Дятлов С. А.,** Основы теории человеческого капитала, СПБ, изд. СПбУЭФ, 1994, стр. 156.

հենք է հանդիսացել, քանի որ բոլոր տնտեսավարող սուբյեկտները, ըստ էության, կապիտալի այս կամ այն տեսակի սեփականատերեր են:

Երկրորդ, կրթական մակարդակի բարձրացումը սկսել է դիտարկվել որպես եկամուտների բաշխման անհավասարության համահարթման միջոց:

Երրորդ, մարդկային կապիտալն ընդգրկվել է ազգային հարստության կազմում, իսկ մարդկային կապիտալում կատարվող ներդրումներն ընկալվել են որպես արտադրողական:

Չորրորդ, մարդկային կապիտալի տեսության շնորհիվ՝ առանձնացվել են դրանում կատարվող ներդրումների տարբեր մակարդակներ՝ տնային տնտեսություն, կազմակերպություն և պետություն:

Հինգերորդ, նշված գիտական հայեցակարգի շրջանակում մշակվել են բազմաթիվ տնտեսամաթեմատիկական մոդելներ, որոնք թույլ են տալիս տարբեր տեսանկյուններից գնահատել մարդկային կապիտալում կատարված ներդրումների արդյունավետությունը:

Վեցերորդ, «մարդկային կապիտալ» եզրույթը պատմական համատեքստում դիտարկվում է որպես մարդկային քաղաքակրթության զարգացման ժամանակակից փուլին բնորոշ երևույթ:

Ընդհանուր առմամբ, կարելի է նշել, որ մարդկային կապիտալի տեսությունը մեծապես նպաստել է տնտեսագիտական մտքի հարստացմանն ու հետագա զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, այն ունի որոշ բացթողումներ, որոնք հետագա զարգացման ու կատարելագործման ճանապարհ են նախանշում:

Մասնավորապես՝

1. *Մեթոդաբանական ինդիվիդուալիզմի (անհատապաշտության) սկզբունքը ենթադրում է, որ անհատը ռացիոնալ ընտրություն է կատարում՝ համադրելով իր նախապատվությունները գոյություն ունեցող սահմանափակումների հետ: Տնտեսական մարդու գործունեության սահմանափակումներն են եկամտի մեծությունն ու ապրանքների գները: Սակայն, մարդը ոչ միայն կենսաբանական, այլև սոցիալական էակ է, ուստի հնարավոր չէ նրա վարքագիծը բացատրել միայն տնտեսական խթաններով:*

2. *Մարդկային կապիտալի տեսության շրջանակներում ենթադրվում է, որ անհատներն իրենց ունակությունների կատարելագործման համար անհրաժեշտ սահմանափակ ռեսուրսներն օգտագործելու են արդյունավետ կերպով: Այլ կերպ ասած, այս մոտեցումը հանգում է*

ռացիոնալության: Սակայն, անհատները չեն կարող գործել ռացիոնալ կերպով, քանի որ իրական կյանքում նրանք բախվում են տեղեկատվական անհամամասնության, օպորտունիստական վարքագծի և այլ սահմանափակումների:

3. *Նորդասական մոտեցումը ելնում է այն դրույթից, որ մարդկային կապիտալի վերարտադրության գործընթացում անհատն առաջնորդվում է միայն սպասվելիք դրամական եկամտի մեծությամբ: Գործնականում միշտ չէ, որ այդպես է: Հաճախ մարդու վարքագիծը պայմանավորված է հասարակության սոցիալական կառուցվածքում սոցիալապես նշանակալի ինստիտուցիոնալ դերին համապատասխանելու ձգտմամբ, քանի որ նրա կողմից որոշակի սոցիալական նորմերի խախտումը նվազեցնում է սոցիալական կապիտալը:*

4. *Մարդկային կապիտալի տեսությունն ունի վառ արտահայտված միկրոտնտեսական ուղղվածություն: Ըստ այդմ՝ ենթադրվում է, որ մարդկային կապիտալի աճը հանգեցնում է անհատի եկամտի համամասնական աճի: Բայց այս օրինաչափությունը միշտ չէ, որ պահպանվում է, առավել ևս՝ զարգացող երկրներում, որտեղ ձևավորված ինստիտուցիոնալ միջավայրը լուրջ խեղաթյուրումներ է առաջացնում մարդկային կապիտալից սպացվող հատուցման համամասնություններում՝ միկրո- և մակրոմակարդակներում:*

5. *Մարդկային կապիտալը, ըստ էության, այս տեսության շրջանակներում քննարկվում է միայն արտադրողական ունակությունների իրացման տեսանկյունից՝ անտեսելով համարժեք վարձատրության խնդիրը, ինչը սահմանափակ մոտեցում է:*

Նշված բացթողումներն առավելապես պայմանավորված են այն հանգամանքով, որ մարդկային կապիտալի տեսությունը զարգացել է հիմնականում նորդասական տեսության շրջանակում, որի մեթոդաբանական հիմքը բավարար չէ վերջինիս համակողմանի հետազոտման համար: Հետարդյունաբերական տնտեսության «պարադոքսները» մարդկային կապիտալի էության նոր ըմբռնում են պահանջում, որը չի կարող իրականացվել միայն մեկ հայեցակարգի շրջանակում: Անհրաժեշտ է կիրառել սկզբունքորեն նոր մոտեցումներ, որոնք մշակված կլինեն ըստ ինստիտուցիոնալիզմի, սիներգետիկայի, էվոլյուցիոն տնտեսագիտության և այլ ժամանակակից ուղղությունների:

1.2. Մարդկային կապիտալի էությունը և կառուցվածքը

Մարդկային կապիտալի հայեցակարգի ձևավորումը հիմնվում է կապիտալի էության վերաբերյալ ավանդական պատկերացումների վերաիմաստավորման վրա՝ հանդես գալով որպես տարբեր տնտեսագիտական դպրոցների ձեռքբերումների համադրություն: Մասնավորապես՝ XX դարի ամերիկացի տնտեսագետ Ի. Ֆիշերն առաջարկել է կապիտալ համարել այն ամենը, ինչը համապատասխանում է հետևյալ չափանիշին. որոշակի ժամանակահատվածում եկամտի հոսքի առկայություն: Ընդ որում, ամեն մի եկամուտ միշտ կապիտալի որևէ տեսակի արդյունք է[25]: Ելնելով վերը նշվածից՝ մարդկային ունակությունները, գիտելիքն ու հմտությունները տնտեսագիտության տեսության մեջ մեկնաբանվում են որպես կապիտալի յուրահատուկ տեսակ, քանի որ.

1. դրանք յուրաքանչյուր անհատի անբաժան հարստությունն են,
2. դրանք անհատի կյանքի ընթացքում ապահովում են եկամտի հոսք, ընդ որում, ոչ միայն դրամական, այլև հոգեբանական բավարարման իմաստով՝ նրա համար հասարակության սոցիալական կառուցվածքում ստեղծելով որոշակի դիրք և այլն,
3. ունակությունների, գիտելիքի, հմտությունների և փորձի ձևավորման համար մեծ ծախսեր են պահանջվում և՛ անհատից, և՛ ողջ հասարակությունից,
4. գիտելիքը, փորձն ու հմտություններն օժտված են կուտակվելու հատկությամբ և իրենցից ներկայացնում են որոշակի պաշար:

Ինչպես նշվեց, XX դարի 50-ական թթ. վերջերին արևմտյան տնտեսագիտական մտքի շրջանակներում ծագեց և ձևավորվեց ազգային հարստության և կապիտալի ընդլայնված մեկնաբանության հայեցակարգը՝ համաձայն որի առանձնացվում են կապիտալի չորս հիմնական տարատեսակներ.

- ֆիզիկական կապիտալ,
- մարդկային կապիտալ,
- կոլեկտիվ (հասարակական) ֆիզիկական կապիտալ,

[25] **Fisher I.,** The Nature of Capital and Income, London, "Macmillan", 1927, p. 5-87.

- ազգային մարդկային (ինտելեկտուալ) կապիտալ (գիտելիք, տեղեկություն, որոնք հավասարապես հասանելի են հասարակության բոլոր անդամներին):

Կապիտալի և ազգային հարստության ընդլայնված հայեցակարգի կողմնակից է նաև ամերիկացի տնտեսագետ Ջ. Քենդրիկը, որը կապիտալը բնորոշում է որպես որոշակի ժամանակահատվածում արդյունք և եկամուտ ստեղծելու ունակություն՝ ներառյալ նաև եկամտի ոչ շուկայական ձևերը[26]: Նման մեկնաբանությունից ելնելով՝ ազգային հարստության բոլոր տարրերը, որոնք կուտակվում, օգտագործվում են արտադրության մեջ և ապահովում որոշակի եկամուտ, դիտարկվում են որպես կապիտալ: Դա, իր հերթին, «թույլ է տալիս ամբողջը բաժանել երկու մասի, այսինքն՝ մարդկային և ոչ մարդկային կապիտալի»[27]:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն «մարդկային կապիտալ» եզրույթի բազում բնորոշումներ: Ըստ Հ. Բոուենի՝ մարդկային կապիտալը բաղկացած է ձեռքբերովի գիտելիքից, հմտություններից, էներգիայից և շահամիտվածությունից, որոնցով օժտված են մարդիկ և որոնք կարող են օգտագործվել որոշակի ժամանակահատվածում՝ ապրանքների և ծառայությունների արտադրության նպատակով[28]: Է.Ջ. Դոլանը մարդկային կապիտալը բնորոշում է որպես ֆորմալ կրթության կամ փորձի միջոցով ձեռք բերված մտավոր ունակություններ[29]: Լ. Թարոուն, ամփոփելով մարդկային կապիտալի վերաբերյալ առաջին ուսումնասիրությունները, նշում է. «Մարդկային կապիտալն ապրանքներ և ծառայություններ արտադրելու մարդկային ունակություններն են»[30]: Նա մարդկային ունակությունների մեջ առանձնացնում է վերջինիս գենետիկական առանձնահատկությունները, որոնք ներդրումների արդյունք չեն, սակայն մեծապես պայմանավորում են մարդկային կապիտալում կատարվող ներդրում-

[26] **Кендрик Дж.,** Совокупный капитал США и его фомирование, М., Прогресс, 1978, стр. 8-27.

[27] **Shultz T.,** Investment in Human Capital. The American Economic Review, Vol. 51, N 1, Mar., 1961.

[28] **Bowen H. R.,** Investment in Learning, San Francisco, Joossey-Bass, 1977, p. 362.

[29] **Долан Дж., Линдсей Д. Е.,** Рынок: микроэкономическая модель, СПб., "Печатный двор", 1992, стр. 260.

[30] **Turow L.,** Investment in Human capital, Belmont, 1970, p. 15.

ների արդյունավետությունը: Ֆ. Մախլուպն առանձնացնում է առաջնային և կատարելագործված ունակություններ՝ ասելով. «Ոչ կատարելագործված աշխատանքն անհրաժեշտ է տարբերել կատարելագործվածից, որն առավել արտադրողական է՝ շնորհիվ ներդրումների, որոնք բարելավում են մարդու մտավոր և ֆիզիկական ունակությունները: Նման բարելավումների արդյունքում էլ ստեղծվում է մարդկային կապիտալը»[31]: Նա հողը համեմատում է մարդկային կապիտալի հետ՝ նշելով, որ, ինչպես հողը՝ որպես բնության կողմից տրված բարիք, նույնպես և մարդու բնածին ունակությունները կապիտալ չեն: Կապիտալ են հողի վրա կատարված ծախսերը և մարդկային ունակությունների ու գիտելիքի կատարելագործմանն ուղղված միջոցները:

Է. Տոֆլերը տնտեսական զարգացման աղբյուր է համարում հարստության ստեղծման նոր համակարգի հիմնադրումը, որտեղ օգտագործվում է ոչ թե մարդու ֆիզիկական ուժը, այլ առավելապես՝ մտավոր ունակությունները: Նա ներմուծել է նաև «խորհրդանշական կապիտալ (գիտելիք)» հասկացությունը՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ, ի տարբերություն կապիտալի ավանդական տեսակների, վերջինս անսպառ է և, միաժամանակ, հասանելի օգտագործողների անվերջ մեծ թվի՝ առանց սահմանափակումների[32]:

Գ. Բեքերը «Մարդկային կապիտալ» աշխատության մեջ առանձնացնում է «յուրահատուկ մարդկային կապիտալ» և «ընդհանուր մարդկային կապիտալ» հասկացությունները: Յուրահատուկ մարդկային կապիտալը վերապատրաստման ընթացքում ձեռք բերված գիտելիքը և հմտություններն են, որոնք հետաքրքրություն են ներկայացնում միայն այն կազմակերպության համար, որտեղ դրանք օգտագործվում են[33]:

Ռուսական հեղինակներից Վ.Ն. Կոստյուկը, զարգացնելով էվոլյուցիոն տեսության հայեցակարգը, մարդկային կապիտալը որակում է որպես անձնային հատկանիշներ, որոնք հնարավորություն են ընձե-

[31] **Machlup F.,** The Economics of information and Human Capital. Princeton, 1984, p. 419.

[32] **Тоффлер Э.,** Метаморфозы власти, изд-во Аст., М., 2003, стр. 88-97.

[33] **Беккер Г.,** Человеческий капитал (главы из книг), Воздействие на заработки инвестиции в человеческий капитал, США, "Экономика, политика, идеология", 1993, N 11, стр. 109-119.

ռում մարդուն գործելու անորոշության պայմաններում[34]: Մարդկային կապիտալի կազմում նա առանձնացնում է ռացիոնալ (արդյունավետ) և ինտուիտիվ (ներըմբռնողական) բաղադրիչները, որոնց փոխներգործությունը թույլ է տալիս մարդկային կապիտալի տիրոջը հաջողության հասնել այնտեղ, որտեղ բավարար չեն միայն բարձր պրոֆեսիոնալիզմն ու գիտելիքը: Անհրաժեշտ է նաև որոշակի տաղանդ, որն առանձին վարձատրություն է պահանջում: Այդ իսկ պատճառով էլ մրցակցային շուկայում մարդկային կապիտալի սեփականատերը կարող է վարձատրվել տվյալ ճյուղում ձևավորված աշխատավարձի մակարդակից ավելի բարձր:

Ի.S. Կորոգոդինը, ուսումնասիրելով սոցիալ-աշխատանքային ոլորտի գործողության կառուցակարգերը, մարդկային կապիտալը բնորոշում է որպես գիտելիքի, հմտությունների և այլ ունակությունների ամբողջություն, որը ձևավորվել, կուտակվել և կատարելագործվել է համապատասխան ներդրումների միջոցով: Նա կարծում է, որ կապիտալի էությունն արտահայտող կարևոր հատկանիշ է կուտակումը: Բոլոր դեպքերում կապիտալը կուտակված միջոցներն են՝ դրամական, նյութական, տեղեկատվական և այլն: Բացառություն չէ նաև մարդկային կապիտալը[35]:

Մարդկային կապիտալի տեսության հիմնադիրների սահմանումների առանցքում այն գաղափարն է, որ մարդիկ արտադրողական ունակությունները կատարելագործում են իրենց մարդկային կապիտալում ներդրումներ իրականացնելու միջոցով, և այդ ներդրումների աճը փոփոխում է նրանց եկամուտների կառուցվածքը: Ըստ այդմ՝ մարդկային կապիտալը ոչ թե բնածին, այլ ձեռքբերովի հատկանիշների ամբողջություն է: Մարդը չի կարող ծնվել արդեն պատրաստի կապիտալով, և այն անհրաժեշտ է ստեղծել կյանքի ընթացքում: Իսկ բնածին հատկանիշները կարող են միայն նպաստել մարդկային կապիտալի ձևավորմանը[36]: Նմանատիպ կարծիք են հայտնում նաև Ա.Ն. Դոբրինինն ու Ս.Ա. Դյատլովը, որոնք մարդկային կապիտալը սահմանում են որպես ներդրումների արդյունքում ձևավորված և

[34] **Костюк В.,** Теория эволюции и социоэкономические процессы, М., Едиториал УРСС, 2004, стр. 120-121.

[35] **Корогодин И.,** Социально-трудовая система: вопросы методологии и теории, монография, М., 2005, стр. 120.

[36] Նույն տեղում, էջ 116-117:

մարդու կողմից կուտակված գիտելիքի, առողջության, հմտությունների, ունակությունների ամբողջություն, որն օգտագործվում է աշխատանքային գործընթացում և նպաստում աշխատանքի արտադրողականության, հետևաբար նաև աշխատավարձի աճին»[37]:

Արևմտյան հետազոտողները, սովորաբար, մարդկային կապիտալը դասակարգում են ըստ դրանում կատարված ներդրումների: Տ. Շուլցը նշում է, որ մարդկային ունակությունները զարգանում են գործունեության որոշակի տեսակների միջոցով, որոնք ունեն ներդրումների ատրիբուտներ (հատկանիշներ)[38]: Որպես ներդրումային գործունեության տեսակներ՝ նա առանձնացնում է դպրոցական կրթությունը, աշխատավայրում ուսուցումը, առողջապահության պահպանումն ու ամրապնդումը, տեղեկության ձեռքբերումը:

Շատ հետազոտողներ մարդկային ունակությունների ձևավորման և կուտակման հարցում կարևորում են այնպիսի կարևոր ռեսուրսի դերը, ինչպիսին է «մարդկային ժամանակը»: «Մարդկային ժամանակի պաշարը նույնքան կարևոր է, որքան այլ ռեսուրսներինը: Դա մարդկային կապիտալի գլխավոր ակտիվն է, որը թույլ է տալիս անհատին ձեռք բերել մարդկային կապիտալի այլ ակտիվներ»[39]:

Մարդկային կապիտալը ոչ միայն ներդրումների արդյունքում ձեռք բերված գիտելիքի, փորձի և հմտությունների, այլև բնածին և ձեռքբերովի ունակությունների ամբողջություն է: Մարդիկ, ծննդյան պահից սկսած, արդեն իսկ տարբերվում են իրենց գենետիկական հատկանիշներով, որոնք շատ մեծ դեր են խաղում հետագա կյանքի ընթացքում՝ և՛ գիտելիքի ձեռքբերման, և՛ դրա օգտագործման տեսանկյունից: Հոգեբանների վերջին տարիների հետազոտությունները վկայում են, որ ինտելեկտը, ինչպես և գրեթե բոլոր անձնային հատկանիշները հիմնականում ժառանգվում է: Ընդ որում, ինտելեկտն ունի պոլիգեն (բազմագեն) հատկություն, այսինքն՝ պայմանավորված է մի քանի գեների համախմբով[40]: Ինտելեկտի ժառանգման փաստին առա-

[37] **Добрынин А., Дятлов С.,** Человеческий капитал в транзитивной экономике: формирование, оценка, эффективность использования, СПб., "Наука", 1999, стр. 6-7.

[38] **Shultz T.,** Investment in Human Capital: The Role of Education and of Research, N. Y., 1971, p. 272.

[39] **Turow L.,** Investment in Human capital, Belmont, 1970, p. 86.

[40] **Фролов Р.,** 25 фактов о человеческом интеллекте: заявление ведущих экспертов о состоянии дел в современной науке, 2010, http://warrax.net/93/10/iq.html

ջին անգամ անդրադարձել է Ֆրենսիս Գալտոնը 1869 թ.-ին իր «Տաղանդի ժառանգականությունը, դրա օրենքներն ու հետևանքները» հիմնարար աշխատության մեջ: Իհարկե, դա չի նշանակում, որ ներդրումները մարդկային կապիտալում կարևոր դեր չեն խաղում անհատի գիտելիքի, ունակությունների, հմտությունների և այլնի զարգացման համար: Առանց համապատասխան ներդրումների (ընդ որում, ոչ միայն ֆինանսական ներդրումների մասին է խոսքը, կարևոր է նաև ընտանեկան սոցիալական կապիտալը, ինչը կքննարկվի հաջորդ բաժնում)՝ անգամ լավ գենետիկ հատկանիշներով օժտված անձինք չեն կարող կատարելագործել և զարգացնել իրենց ունակությունները: Պարզապես, խնդիրն այն է, որ անհատի բնածին հատկանիշներն անհրաժեշտ է դիտարկել որպես մարդկային կապիտալի կարևոր տարր: Բնածին հատկանիշներն (առողջություն, ինտելեկտ, հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններ) այն հենքն են, որի վրա կառուցվում, ձևավորվում և իրացվում է մարդկային կապիտալը:

Ուշագրավ է, որ մարդկային կապիտալի տեսության շրջանակում առհասարակ չի քննարկվում անձի բարոյահոգեբանական հատկանիշների դերը: Մինչդեռ հենց դրանք են կանխորոշում նրա մտավոր ունակությունների, գիտելիքի, հմտությունների կիրառման դաշտն ու ուղղությունը: Ինչպես Ֆ. Դոստոևսկին էր նշում. «Մարդու մեջ կարևորը ոչ թե ինտելեկտն է, այլ այն, ինչն ուղղորդում է վերջինս՝ բարի սիրտը և մաքուր մտադրությունները»: Եվ այս առումով, մարդկային կապիտալի կազմում պետք է ընդգրկել նաև այնպիսի էական բաղադրիչ, ինչպիսին անձի արժեքային համակարգն է:

Բարոյական և տնտեսական հիմնախնդիրների փոխկախվածությունն առաջին անգամ քննարկել է Արիստոտելը՝ «Նիկոմախյան էթիկա» աշխատությունում[41]: Այնտեղ նույնպես ընդգծվել են այն սկզբունքային տարբերությունները, որոնք առկա են տնտեսագիտության և հարստություն կուտակելու արվեստի՝ խրեմատիստիկայի միջև: Վերջինիս մասին նա գրում է. «Հարստություն կուտակելու արվեստի մեջ երբեք նպատակային սահման չկա, քանի որ նպատակը հենց անսահման հարստությունն է»[42]: Արիստոտելը բացասաբար է վերաբերվել նման ձգտմանը՝ այն դիտարկելով որպես անխուսափելի

[41] **Аристотель,** Соч., В 4-х т., М., "Наука", 1983, том.4.
[42] Նույն տեղում, էջ 25:

չարիք:

Բնականոն տնտեսական գործունեության ապահովման համար մարդկային մղումների կարևորությունը բազմիցս շեշտադրել են դասական տնտեսագիտական դպրոցի ներկայացուցիչները: Այդ մասին է վկայում նաև այն փաստը, որ Ա. Սմիթի «անտեսանելի ձեռքի» հայեցակարգն առաջին անգամ ներկայացվել է ոչ թե «Հետազոտություն ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին», այլ «Բարոյական զգացմունքների տեսություն» աշխատության մեջ:

Այս կապակցությամբ Ջ. Քեյնսը նշել է. «Մարդկային վտանգավոր հակումները կարելի է ուղղորդել դեպի հարաբերականորեն անվնաս շավիղ, որտեղ փող ստեղծելու և անձնական հարստություն կուտակելու հնարավորություն կա: Այդ հակումները, եթե դրանք չեն բավարարվում այդ միջոցով, կարող են դրսևորվել դաժանության, անսահման իշխանության անմիտ ձգտման և ինքնամեծարման ձևով»[43]: Դրա հետ մեկտեղ, նա իր հայտնի աշխատության վերջում հավելել է. «Վստահ եմ, որ գաղափարների ազդեցության աստիճանական մեծացման հետ մեկտեղ, գնալով աճում է շահապաշտությունը, բայց ուշ թե շուտ հենց գաղափարներն են դառնում առավել վտանգավոր, քան շահապաշտությունը»[44]:

Կրոնի և ազգային մտածելակերպի ազդեցությունը տնտեսության վրա ուսումնասիրել է Մ. Վեբերը (1864-1920)՝ «Բողոքական էթիկան և կապիտալիզմի ոգին» աշխատության մեջ: Նա եվրոպական քաղաքակրթության զարգացումը պայմանավորել է բողոքականության սկզբունքներով:

Անգլիացի պատմաբան և սոցիոլոգ Ա.Ջ. Թոյնբին (1898-1975) վերլուծել է Արևելքի քաղաքակրթությունների (իսլամական, հինդուիստական, բուդդիստական) տնտեսական զարգացումը՝ կրոնի ազդեցության համատեքստում: Նա, որպես քաղաքակրթության շարժիչ ուժ, համարում էր ստեղծագործ փոքրամասնությանը, որն իր հետևից կարող էր տանել հասարակությանը: Նրա կարծիքով՝ հենց վերջինս էլ կանխորոշում է երկրի անկումը կամ ծաղկումը:

Դարերի ընթացքում յուրաքանչյուր երկրի մարդկային կապիտալի

[43] **Кейнс Дж.,** Общая теория занятости, процента и денег. Антология экономической классики, М., 1994, т. 2, стр. 425.

[44] Նույն տեղում, էջ 132:

ձևավորման վրա մեծ ազդեցություն են ունեցել ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները, ինչպիսիք են կրոնը, մշակույթը, ազգային գաղափարախոսությունը և այլն: Արդյունքում ձևավորվել է անհատի արժեհամակարգ, որը մեծապես պայմանավորում է անձի վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ, շարժառիթների համակարգը, աշխատանքային էթիկան և այլն: Անհատը կարող է կուտակել «բարձրորակ մարդկային կապիտալ», այսինքն՝ կարող է օժտված լինել բարձր մասնագիտական գիտելիքով, հմտություններով, սակայն այդ մարդկային կապիտալը որքանով կնպաստի երկրի տնտեսության զարգացմանը, մեծապես պայմանավորված է անձի արժեհամակարգով: Վերջիվերջո, գիտելիքը կարող է օգտագործվել և՛ կառուցողական, և՛ ապակառուցողական նպատակով: Եվ այս համատեքստում մարդկային կապիտալը կարելի է բնորոշել որպես մարդու բնածին ու ձեռքբերովի հատկանիշների, գիտելիքի, հմտությունների, փորձի և որոշակի ինստիտուցիոնալ միջավայրում ձևավորված արժեքային համակարգի ամբողջություն:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն մարդկային կապիտալի տեսակների դասակարգման տարբեր մոտեցումներ: Ելնելով հետազոտության նպատակից և հիմք ընդունելով այս կամ այն չափանիշը՝ մարդկային կապիտալի տարբեր հետազոտողներ տարբեր դասակարգումներ են կատարել: Այսպես՝ արևմտյան տնտեսագետները մարդկային կապիտալը դասակարգել են ըստ դրանում կատարված ներդրումների տեսակների: Օրինակ՝ Տ. Շուլցն առանձնացրել է ներդրումային բնույթի ծախսերի հետևյալ հոդվածները՝ դպրոցական կրթություն, ուսուցում աշխատավայրում, առողջության ամրապնդում, տնտեսական տեղեկությունների ձեռքբերում[45]: Գործունեության այս տեսակներ ուղղված են մարդկային որոշակի ունակությունների ձևավորմանը, ունեն արժեք և կարող են կիրառվել որպես մարդկային կապիտալ:

Ջ. Քենդրիկն ամբողջական կապիտալը տարանջատել է որպես նյութական և ոչ նյութական: Նյութական կապիտալն ունի իրային բնույթ, ոչ նյութականը չունի սեփական նյութական ձև, այլ մարմնավորվում է նյութական կապիտալում՝ բարձրացնելով վերջինիս որակը

[45] **Schultz T.,** Investment in Human Capital: The Role of Education and of Research, N. Y., 1971, p. 64-65.

կամ արտադրողականությունը: Ամբողջական կապիտալի այդ երկու մասերն իրենց հերթին տարբաժանվել են որպես մարդկանց մեջ մարմնավորված կապիտալ և մարդկանց մեջ չմարմնավորված կապիտալ: Մարդկանց մեջ չմարմնավորված իրային կապիտալի կազմում Ջ. Քենդրիկն ընդգրկել է շենքերը, շինությունները, հողը և այլ բնական ռեսուրսներ: Մարդկանց մեջ մարմնավորված նյութական կապիտալը բնորոշվել է որպես մարդու ֆիզիկական ձևավորման համար կատարվող ծախսեր: Դրանց մեջ չեն ընդգրկվել կրթության համար կատարվող ծախսերը, սակայն հաշվի են առնվել երեխայի ձևավորման ուղղությամբ կատարվածները՝ մինչև նրա 14 տարին լրանալը: Մարդկանց մեջ մարմնավորված ոչ նյութական կապիտալն ընդգրկում է ընդհանուր և մասնագիտական կրթության համար կատարված ծախսերը, առողջապահության համար կատարված ծախսերի մի մասը և միգրացիայի ուղղությամբ կատարված ծախսերը: Մարդկանց մեջ չմարմնավորված ոչ նյութական կապիտալին են դասվում հիմնարար և կիրառական հետազոտություններն ու մշակումները[46]:

Մ. Կրիտսկին, մարդկային կապիտալը դիտարկելով որպես ժամանակակից հասարակության հիմնական արտադրական հարաբերություն, առանձնացնում է վերջինիս հետևյալ փոխակերպված ձևերը՝ արտադրական, սպառողական և ինտելեկտուալ[47]:

Բեն Փորետն առանձնացնում է մարդկային կապիտալի երկու տեսակ.

1. մարդկային կապիտալի արտադրության գործընթացին մասնակցողների գիտելիք ու հմտություններ,
2. ապրանքների և ծառայությունների արտադրության գործընթացին մասնակցող մարդկային կապիտալ, որի ծառայություններն առաջարկվում են շուկայում[48]:

Ի. Իլյինսկին մարդկային կապիտալը դասակարգում է՝ հիմք ընդունելով դրա ձևավորման համար կատարված ծախսերը: Այդ չափանի-

[46] **Кендрик Дж.,** Совокупный капитал США и его формирование, М., “Прогресс”, 1978, стр. 15-17.

[47] **Критский М. М.,** Человеческий капитал, Л.: Изд-во ЛГУ, 1991, стр. 71-115.

[48] Ben-Porath Y., The Production of human Capital and the Life Cycle of Earnings, Vol. 75, No. 4, Part 1, (Aug., 1967y.), p. 352-365.

շից ելնելով՝ նա առանձնացնում է «կրթության կապիտալ», «առողջության կապիտալ» և «մշակութային կապիտալ»[49] հասկացությունները:

Մարդկային կապիտալը դասակարգվում է նաև ըստ մարմնավորման ձևի: Այդ չափանիշի հիման վրա առանձնանում են.

1. Կենդանի կապիտալ, որը ներառում է մարդու մեջ մարմնավորված գիտելիքը, փորձը, հմտությունները:
2. Ոչ կենդանի (առարկայացած) կապիտալ, երբ գիտելիքն առարկայանում է նյութական բարիքներում:
3. Ինստիտուցիոնալ կապիտալ, որը բաղկացած է կենդանի և առարկայացած մարդկային կապիտալից և ներառում է բոլոր այն ինստիտուտները, որոնք նպաստում են կապիտալի այլ տեսակների արդյունավետ օգտագործմանը[50]:

Մարդկային կապիտալի հետաքրքիր դասակարգում է կատարել Օ. Նորդհոգն իր «Մարդկային կապիտալը կազմակերպություններում» (1993) աշխատության մեջ, որտեղ առաջարկել է անհատի ամբողջականությունն ու որակավորումն առանձնացնել նրա աշխատանքային շարժառիթներից և կազմակերպությանը նվիրվածության աստիճանից: Առաջին երկու տարրերն աշխատողի ներուժն են, իսկ վերջին երկուսն արտացոլում են նրա աշխատելու ցանկությունը և պայմանավորում փաստացի աշխատանքի արդյունքը:

Այս երկու բաղկացուցիչները, իրար հետ միասին, կազմում են աշխատողի աշխատունակությունը[51]:

Հիմք ընդունելով մարդկային կապիտալի ձևավորման վրա կատարվող ծախսերի աղբյուրները՝ մարդկային կապիտալը կարելի է դասակարգել ըստ անհատական մարդկային կապիտալի, կազմակերպության մարդկային կապիտալի և ազգային մարդկային կապիտալի: Անհատական մարդկային կապիտալի բաղադրիչներ են անհատի առողջությունը, մտավոր ունակությունները, արժեհամակարգը և սոցիալական կապիտալը: Կազմակերպության մարդկային կապի-

---

[49] **Ильинский И. В.,** Инвестиции в будушее: образование в инвестиционном воспроизводстве, СПб, СПбУЭФ, 1996, стр. 163.

[50] **Добрынин А. И., Дятлов С. А., Цыренова Е. Д.,** Человеческий капитал в транзитивной экономике: формирование, оценка, эффективность использования, СПб, “Наука”, 1999, стр. 44.


[51] **Nordhaug O.,** Human Capital in Organizations, Competence Training and Learning, Oslo, Scandinavian University Press, 1993, p. 19-20.

տալի կառուցվածքում կարելի է առանձնացնել կազմակերպական կապիտալը և սոցիալական կապիտալը: Կազմակերպական կապիտալը կազմակերպության կազմակերպական կառուցվածքի որոշակի սահմաններում ինքնակառավարվելու ունակությունն է՝ կազմակերպությունում ձևավորված հնասովորույթների, ավանդույթների սահմաններում: Կազմակերպական կապիտալը մեծ է այնքանով, որքանով բարձր է կազմակերպության աշխատակիցների ազատության աստիճանը և արժեքավորվում է այնքանով, որքանով բարձր է անորոշության աստիճանը: Արդյունավետ կազմակերպական կապիտալը կարող է ծագել միայն այնտեղ, որտեղ գաղափարները գնահատվում են ավելի շատ, քան կազմակերպության աստիճանակարգության համակարգում զբաղեցրած դիրքը[52]: Ըստ էության, դա կազմակերպության ստեղծագործական արդյունավետությունն ապահովող համակարգերի ամբողջությունն է, որը ներառում է նորարարական կապիտալ (պաշտպանված առևտրային իրավունքներ, մտավոր սեփականություն և այլ ոչ նյութական ակտիվներ): Կազմակերպական կապիտալն այն գիտելիքի ամբողջությունն է, որին տիրապետում են ոչ թե առանձին աշխատակիցներ, այլ ամբողջ կազմակերպությունը: Դա այն գիտելիքն է, որ կարող է պահպանվել տվյալների բազայում, գործընթացների իրականացման հրահանգներում: Այդ գիտելիքի շարքին կարելի է դասել նաև այն չգրված օրենքները, որոնք կարգավորում են միջանձնային հարաբերությունները[53] կազմակերպության ներսում: Բրենդ կապիտալը, ըստ էության, կազմակերպության վարկանիշն է, հեղինակությունը: Դա ձեռնարկության կազմակերպական և սոցիալական կապիտալի գնահատումն է արտաքին միջավայրում՝ տվյալ ձեռնարկության գործընկերների կողմից:

Մարդկային կապիտալի ընդլայնված կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

[52] **Picot G.,** Building Community in the Workplace. The Community of the Futur, San Francisco, 1998, p. 99-135.

[53] **Армстронг М.,** Практика управления человеческими ресурсами, 8-е издание, перев. с англ. под ред. С. К. Мордовина, СПб. Питер, 2004, стр. 71-72.



Գծապատկեր 1. ***Մարդկային կապիտալի ընդլայնված կառուցվածքը***[54]

Հարկ է նշել նաև, որ ազգային ինտելեկտուալ կապիտալը մարդկային որոշակի կապիտալների պարզ հանրագումար չէ, այլ որակապես նոր երևույթ, որն առաջանում է մարդկային կապիտալի և համապատասխան ինստիտուտների սիներգետիկ փոխներգործության արդյունքում:

1.3. Մարդկային կապիտալի չափման մեթոդները

1970-ական թթ. սկզբին ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերով խորհուրդը, ընդհանրացնելով և համակարգելով տնտեսագետների, սոցիոլոգների և այլ մասնագետների առաջարկները, մշակեց մարդկային հասարակության հետագա զարգացման ռազմավարություն, որի առանցքում են մարդկային գործոնի դերն ու նշանակությունը՝ համաշխարհային տնտեսական զարգացման համատեքստում:

[54] Գծապատկերը կազմել է հեղինակը:

Նշված ռազմավարական փաստաթղթերում հիմնավորված են մարդկային կապիտալի հաշվարկման կարևորագույն միասնական սկզբունքները, որոնք հիմնականում առնչվում են ժողովրդագրական բաղադրիչներին, ինչպիսիք են կյանքի միջին տևողությունը, ակտիվ աշխատանքային տարիքի սահմանները և այլն: Մարդկային գործոնի գնահատման հիմքում դաստիարակության, կրթության, վերապատրաստման, տեղեկությունների ձեռքբերման, միգրացիայի ուղղությամբ կատարված ծախսերի, ինչպես նաև հիվանդությունների, մահվան հետ կապված կորուստների հաշվառումն է: Սակայն, մարդկային կապիտալի արտադրության և վերարտադրության համար կատարված ամբողջական ծախսերի հաշվառումը բարդ խնդիր է, քանի որ այդ ծախսերի մեծ մասը վիճակագրորեն արտացոլվում է ընթացիկ սպառման ցուցանիշի, այլ ոչ թե կուտակման մեջ: Նշենք, որ ամփոփ տնտեսական ցուցանիշների հաշվարկման միջազգային հանձնարարականների նախագծի քննարկման ընթացքում, 1993 թ.-ին, ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովում համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) սպառվող և կուտակվող մասերի սահմանազատման խնդիր ծագեց: Ազգային հարստության ընդլայնված հայեցակարգի կողմնակիցներն առաջարկեցին մարդկային կապիտալում կատարվող ներդրումները հաշվարկել ՀՆԱ կուտակային մասում: Ընդ որում, այդ ժամանակ դեռևս բացակայում էր «մարդկային կապիտալ» եզրույթի էության վերաբերյալ միասնական մոտեցումը, բացի այդ, բոլոր երկրների վիճակագրական ծառայությունները նման ներդրումները հաշվառում էին ընթացիկ սպառման կազմում: Եվ քանի որ խնդրի լուծման մեթոդաբանական հիմքերն առկա չէին, դրա լուծումը հետաձգվեց:

Բանն այն է, որ առայսօր տնտեսագետները միակարծիք չեն «մարդկային կապիտալ» եզրույթի բնորոշման և գնահատման հարցում: Քննարկենք մարդկային կապիտալի գնահատման առավել տարածված մոտեցումները:

Տնտեսագիտության մեջ, այս առումով, հայտնի է Շուլցի տեսությունը, որը մարդկային կապիտալ էր համարում մարդու վերարտադրության համար կատարված բոլոր ծախսերը՝ անկախ դրանց ֆինանսավորման աղբյուրից: Նման ներդրումներն արտացոլվում են մարդկանց կուտակած աշխատանքային ունակությունների ու փորձի մեջ: Շուլցը կարծում էր, որ մարդկային կապիտալն ունի կուտակվելու

և վերարտադրվելու հատկություն[55]: Նա հիմնավորել է, որ անհրաժեշտ է վերահիմաստավորել վերարտադրության որոշ կատեգորիաներ, մասնավորապես՝ «ներդրումը», ապացուցել, որ մարդկային կապիտալում կատարվող ներդրումները հասարակության մեջ ստեղծված ամբողջական արդյունքի ոչ թե 1/4 մասն են կազմում, ինչպես պնդում էին XX դարի վերարտադրության տեսությունների մեծ մասի կողմնակիցները, այլ ամբողջական արդյունքի 3/4-ը:

Զարգացած երկրներում ներկայում կուտակված են բավական հարուստ վիճակագրական տեղեկություններ, որոնք թույլ են տալիս գնահատել մարդկային կապիտալի արժեքն ազգային հարստության ընդլայնված հայեցակարգի համատեքստում: Բայց այստեղ խնդիրն այն է, որ առայսօր գոյություն չունի «մարդկային կապիտալ» եզրույթի միասնական բնորոշում: Տնտեսագետների մի մասը դա բնութագրում է որպես մարդկանց մեջ ամփոփված գիտելիք, հմտություններ ու հատկանիշներ, որոնք նպաստում են անձնական սոցիալական և տնտեսական բարեկեցության ապահովմանը[56], իսկ մյուս մասը համարում է, որ մարդկային կապիտալն անհատի հմտությունների, փորձի և որոշ հատկանիշների ամբողջությունն է, որը թույլ է տալիս նրան եկամուտ ստեղծել[57]: Լ. Թարոուի բնորոշմամբ՝ մարդուն որպես արտադրողի ուսումնասիրելու համար հարկավոր է հիմնվել այնպիսի մի մեթոդի վրա, որը հնարավորություն կտա չափելու նրա արտադրական ունակությունները: Մարդկային կապիտալն անհատի գիտելիքի, հմտությունների, ունակությունների ամբողջություն է և չափվում է նրա կողմից արտադրված ապրանքների ու ծառայությունների շուկայական գնով[58]:

Մեկ այլ բնորոշման համաձայն՝ մարդկային կապիտալը բնության պարգև չէ, այլ այն ստեղծում է մարդը: Այսինքն՝ ինչպես ֆիզիկական կապիտալը ստեղծվում է բնական նյութերի վերափոխման ընթացքում, այնպես էլ մարդկային կապիտալը՝ մարդկանց վերափոխման

---

[55] **Shultz T.,** Investment in Human Capital, N. Y., London, 1971, p. 26-28, Shultz T., "Human Capital" International Encyclopedia of the Social Sciences, N. Y. 1968, vol. 6.

[56] The Well-being of Nations: The Role of Human and Social Capital/OECD. 2001, p. 18.

[57] **Bannock G., Baxter R.,** The Penguin Dictionary of Economics, Penguin Books, 2004, p. 36.

[58] **Thurow L.,** Investment in Human Capital, Belmont, Wadsworth Publishing Company, 1970, p. 1-15.

արդյունքում, ինչը նրանց հնարավորություն է տալիս ձեռք բերելու գործունեության նոր տեսակների և մեթոդների յուրացման հմտություններ և ունակություններ[59]: Հայտնի է նաև Գ. Բեքերի մոտեցումը՝ ըստ որի մարդկային կապիտալը ձևավորվում է մարդու համար ներդրումներ իրականացնելու արդյունքում: Այդ ներդրումներն են կրթության ստացման, առողջության պահպանման, միգրացիայի ուղղությամբ և գների ու եկամուտների վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերման ծախսերը[60]:

Այսօր ավելի արդիական են մարդկային կապիտալի ընդլայնված մեկնաբանումները: Մարդկային կապիտալի կազմում շատ տեսաբաններ ներառում են անձնային հատկանիշները, որոնք անուղղակիորեն ներազդում են արտադրության արդյունքի վրա[61]: Որոշ տնտեսագետներ մարդկային կապիտալի կազմում ընդգրկում են ոչ միայն անհատի անձնային հատկանիշները, այլև մարդկանց փոխհարաբերություններում մարմնավորված սոցիալական կապիտալը[62]: Հարկ է նշել, որ Գ. Բեքերը, ընդունելով սոցիալական կապիտալի հայեցակարգը, այն չի ընդգրկում մարդկային կապիտալի կազմում: Մարդկային և սոցիալական կապիտալների տարանջատման փաստն ամրագրված է նաև ՀԲ մեթոդաբանական փաստաթղթերում, որտեղ դրանք դասակարգվում են որպես համաշխարհային հարստության առանձին տարրեր՝ մարմնավորված ամբողջական մարդկային ռեսուրսներում[63]:

Մարդկային կապիտալի բնորոշումների բազմազանությունը պայմանավորում է դրա չափման տարբեր մոտեցումների գոյությունը: Մարդկային կապիտալի ընկալումը, որպես ներդրումների արդյուն-

---

[59] **Machlup F.,** Knowledge: Its Greation, Distribution and Economic Significance, Vol. 11, The economics of Information and Human Capital. Princeton: Princeton Universition Press, 1984, p. 419.

[60] **Беккер Г. С.,** Человеческое поведение: экономический подход. Избранные труды по экономической теории, М., ГУ-ВШЭ, 2003, стр. 39.

[61] **Bovenbeng A. L.,** The Life-Course Perspective and Social Policies: An Overview of the Issues. CESifo Economic Studies, 2008, Vol. 54, N 4, p. 600.

[62] **Курганский С. А.,** Человеческий капитал: сущность, структура, оценка, Иркутск, ИГЭА, 1999, Полищук Е. А., Человеческий капитал в экономике современной России, проблемы формирования и реализации, Ижевск, изд-во ГТУ, 2005, стр.168.

[63] **Dicson Y. A., Hamilton K.,** Expanding the Measure of Wealth. Finance and Development, December, 1996, p. 15-18.

քում ձևավորված և վերարտադրվող հարստություն, ենթադրում է վերջինիս հաշվառումն ըստ նախկինում դրանում կատարված ներդրումների ամբողջության: Այդ ներդրումները կարող են չափվել կա՛մ բնաիրային, կա՛մ արժեքային ցուցանիշների հիման վրա: Այս մոտեցման բարդությունն այն է, որ դժվար է հաշվարկել մարդկային կապիտալի համար կատարված անուղղակի և ոչ ակնհայտ ծախսերը:

Նշված թերություններից զերծ է մարդկային կապիտալից ստացվող հատույցի գնահատման մեթոդը: Ակնհայտ է, որ մարդկային կապիտալն ապահովում է ինչպես դրամական եկամուտ, այնպես էլ ոչ դրամական օգուտներ: Բայց գործնականում գրեթե անհնար է դրամական միավորներով չափել ոչ դրամական օգուտները: Եվ քանի որ այս մեթոդը հաշվառում է միայն դրամական եկամուտները, ապա երբեմն մարդկային կապիտալի ցուցանիշը կարող է թերագնահատվել:

Հաճախ օգտագործվում է նաև բնակչության որոշ պարամետրերի ուղղակի գնահատման մեթոդը, որն ըստ էության մարդկային կապիտալի գնահատում է: Բայց այս մեթոդի լայն կիրառությունը սահմանափակվում է տեխնիկական և մեթոդաբանական բնույթի բարդություններով՝ կապված անհրաժեշտ տվյալների հավաքագրման, մշակման, դասակարգման և միասնական հիմքի բերման հետ:

Հատկանշական է, որ էական տարբերություններ կան մարդկային կապիտալի՝ ոչ միայն տարբեր մեթոդներով իրականացված գնահատման արդյունքների, այլև մեկ մեթոդի շրջանակում կատարված գնահատումների միջև՝ կախված որոշակի մոտեցումներից: Կարծիք կա, որ դա պայմանավորված է չափման տեխնոլոգիայի, տեղեկատվական բազայի անկատարությամբ: Տեսականորեն, տարբեր եղանակներով հաշվարկված մարդկային կապիտալի արժեքները պետք է համընկնեն[64]:

Այդուհանդերձ, գոյություն ունեն նաև անհամապատասխանության այլ պատճառներ: Ուղղակի չափման դեպքում չափման օբյեկտ են մարդկանց պոտենցիալ (ներուժային) ունակությունները, անկախ այն բանից՝ դրանք բնածին են, թե ներդրումների արդյունք և անկախ այն բանից՝ դրանք կիրառվում են, թե ոչ: Ներդրումային մոտեցման շրջանակում գնահատվում է միայն ներդրումների արդյունքում ձևա-

[64] **Stroombergen A., Rose D., Nana G.,** Review of fhe Statistical Measurement of Human Capital/Statistics New Zealand, 2002, p. 4-8.

վորված մարդկային կապիտալը, սակայն այս դեպքում ներդրումների և ստացվող արդյունքի միջև ուղղակի կախվածություն կարող է և չլինել, քանի որ դա մեծապես պայմանավորված է անձի բնածին հատկանիշներով, որոնք քանակապես գնահատելը բավական բարդ խնդիր է: Ըստ մարդկային կապիտալից ստացվող հատույցի մեթոդն ունի այն բարդությունը, որ այդ հատույցի նորման մեծապես կախված է ինստիտուցիոնալ միջավայրից, աշխատաշուկայի գործունեության առանձնահատկություններից, քաղաքական իրավիճակից, ազգային առանձնահատկություններից և այլ գործոններից:

Մարդկային կապիտալի չափման մեթոդները միմյանցից տարբերվում են նաև կիրառվող չափման միավորներով: Առավել ընդունելի են արժեքային ցուցանիշները, և մարդկային կապիտալի տեսության կողմնակիցներն ի սկզբանե հակված էին դրան:

Մարդկային կապիտալի բնորոշման տեսական մոտեցումների տարբերությունները և գնահատման մեթոդների բազմազանությունը հանգեցրել են նրան, որ այսօր լայն տարածում են ստացել դրա ներկայացուցչական (փոխարինող, proxies) գնահատականները: Դրանք, իհարկե, ամբողջությամբ չեն արտացոլում մարդկային կապիտալի արժեքը, բայց թույլ են տալիս որոշ միջազգային համեմատություններ իրականացնել: Այս մեթոդն առավելապես կիրառում են տնտեսական աճի էնդոգեն տեսության կողմնակիցները:

Առավել ժամանակակից մոտեցում է մարդկային կապիտալի չափումը համաթվերի միջոցով, որը թույլ է տալիս որոշ չափով համահարթել արժեքային և բնաիրային ցուցանիշների թերությունները և միավորել դրանց առավելությունները: Այս մեթոդը կիրառվում է մարդկային կապիտալի պաշարների՝ ըստ տարբեր երկրների դասակարգման համար:

Նշված մեթոդների առանձնահատկությունները ներկայացնենք առավել մանրամասն:

1. Բնական ինդիկատորներ (ներկայացուցչական գնահատականներ) (proxies, representative assessments)

Ամենատարածված ներկայացուցչական ցուցանիշները, որպես կանոն, արտահայտում են բնակչության ուսման միջին տևողությունը: Թեև նշված ցուցանիշի թվացյալ պարզությանը, այնուամենայնիվ, դրա հաշվարկումը կապված է տեխնիկական մեծ բարդությունների հետ: Կրթության տևողության վերաբերյալ տվյալները, սովորաբար,

հավաքագրվում են բնակչության մարդահամարի ժամանակ, ըստ էության՝ տասը տարին մեկ: Ընդ որում, որոշ երկրներում, այդ թվում՝ և՛ Ռուսաստանի Դաշնությունում (ՌԴ), և՛ ՀՀ-ում լրացվում են միայն կրթական մակարդակի վերաբերյալ տվյալները, որոնց հիման վրա հետագայում հաշվարկվում է ուսման միջին տևողությունը: Դա շատ աշխատատար գործընթաց է, և ստացված տվյալները լիարժեք պատկերացում չեն տալիս երկրի բնակչության կրթության որակի վերաբերյալ: Այնուամենայնիվ, այս մեթոդը զանգվածային կիրառում է ստացել: Ցուցանիշը համարվում է «ամենաառաջադեմը» և միջազգային համեմատություններ կատարելիս լայնորեն օգտագործվում է ռեգրեսիոն մոդելներում, որոնց միջոցով փորձում են գնահատել կրթության և տնտեսական աճի միջև եղած կապը: Այն հաշվարկել են Բերոու Լին և Կոեն դե Սոտոն մի շարք երկրների համար[65]: Շատ տնտեսագետներ քննադատորեն են մոտենում նշված ցուցանիշին՝ պնդելով, որ դա չի բացատրում տնտեսական աճի տարբերությունները ռեգրեսիոն հավասարումներում[66]: Եվ խնդիրը միայն այդ ցուցանիշի հաշվարկման տեխնիկական բարդությունները չեն: Բանն այն է, որ նշված մոտեցման շրջանակում հնարավոր չէ գնահատել ուսման որակը, մարդկային կապիտալի բաշխվածությունը բնակչության տարբեր խավերի միջև: Բացի այդ, մարդկային կապիտալի բարձր որակը կարող է փոքր չափով նպաստել տնտեսական աճին՝ կապված տվյալ երկրում մարդկային կապիտալի իրացման ինստիտուցիոնալ առանձնահատկությունների հետ:

Էկոնոմետրիկ վերլուծության տեսանկյունից, նման ցուցանիշի ներմուծումը որևէ մոդելի մեջ պահանջում է առնվազն երեք սահմանափակման առկայություն.

1. բոլոր աշխատողներն ամբողջությամբ փոխարինում են միմյանց,
2. մեկ տարի տևողությամբ կրթությունն ապահովում է գիտելիքների և հմտությունների նույնածավալ աճ տարբեր մարդկանց համար,

[65] **Cohen D., Soto M.,** Growth and Human Capital: Good Data, Good results. Journal of Economic Growth, 2007, Vol. 12, p. 71.

[66] **Le T., Gibson G., Oxley L.,** Measures of Human Capital, A Review of the Literature. New Zeland Treasury Workig Paper, 05/10 2005, p. 24.

3. աշխատողի արտադրողականությունն ուղիղ համեմատական է նրա ուսման տարիների քանակին[67]:

Այդուհանդերձ, գործնականում, նշված ցուցանիշի կիրառմամբ կառուցված մոդելը չի կարող ամբողջությամբ արտացոլել իրականությունը: Այդ իսկ պատճառով էլ երբեմն կուտակված մարդկային կապիտալի չափման համար օգտագործում են լրացուցիչ անուղղակի ցուցանիշներ, մասնավորապես՝ հետազոտողների, գիտաշխատողների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր կառուցվածքում:

Առայսօր ամենահասարակ և միջազգային համեմատություններում գործածվող ցուցանիշներից է բնակչության գրագիտությունը: Բայց այսօր գրագիտության դասական չափանիշը՝ գրագետների տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր կազմում, արդիական է առավելապես զարգացող երկրների համար: Այն իր տեղն աստիճանաբար զիջում է, այսպես կոչված, գործառութային գրագիտության ցուցանիշին, որը որոշվում է հատուկ թեստերի միջոցով: Այսպես՝ 1970-ական թթ. կեսերին մշակվեցին հատուկ թեստեր, որոնց միջոցով գնահատվում էին տնտեսապես ակտիվ բնակչության գիտելիքն ու ունակությունները: Այդ թեստերը կիրառվեցին չափահասների գործառութային գրագիտության միջազգային հետազոտության (International Adult Literacy Test (IALS) ժամանակ: Նշենք, որ IALS-ը պարբերաբար իրականացվում է աշխարհի 36 զարգացած երկրներում: Դա շատ աշխատատար և ռեսուրսատար գործընթաց է, ուստի նման գնահատումները մատչելի են միայն զարգացած երկրների համար: Շատ հետազոտողներ, սակայն, կարծիք են հայտնում, որ նշված գնահատումները հաճախ հակասում են միմյանց, ավելի շատ բարդացնում մարդկային կապիտալի հաշվարկման գործընթացը, քան նպաստում համապատասխան խնդրի լուծմանը: Հարկ է նշել, որ նշվածներից բացի, կիրառվում են նաև մարդկային կապիտալի գնահատման այլ ցուցանիշներ:

2. Մարդկային կապիտալում կատարված ներդրումների գնահատման մեթոդ

Մարդկային կապիտալի գնահատումն ըստ այս մեթոդի կապ-

[67] **Mulligan C., Sala-i-Martin X.,** Measuring Aggregate Human Capital, NBER Working Paper, N 5016, 1995, p. 2-4.

ված է ներդրումային տեսանկյան հետ: Դրա գործնական կիրառման համար անհրաժեշտ է հստակ կերպով որոշել, թե կոնկրետ որ ծախսերն են համարվում ներդրումներ մարդկային կապիտալում: Այս հարցի վերաբերյալ գոյություն ունի երկու մոտեցում, որոնք, տարբեր ձևերով համակցվելով, առաջացնում են բազում մեթոդներ: Առաջին մոտեցման համաձայն՝ մարդկային կապիտալի ուղղությամբ կատարված ծախսերն ընդգրկում են մարդու՝ որպես ֆիզիկական և սոցիալական էակի վերարտադրության համար կատարվող բոլոր ծախսերը: Երկրորդ մոտեցման համաձայն՝ այդ ծախսերի մեծ մասը դասվում է սպառողական ծախսերի շարքին, իսկ մարդկային կապիտալում կատարված ներդրումներ են համարվում միայն այն ծախսերը, որոնք նպաստում են մարդկանց արտադրողական ունակությունների աճին: Առաջին մոտեցման կողմնակիցները մարդկային կապիտալը դիտարկում են որպես երկրի բնակչության ագրեգացված արժեք: Համապատասխանաբար՝ մարդկային կապիտալում կատարվող ներդրումների շարքին են դասվում մարդու կենսագործունեության ապահովման նպատակով կատարված բոլոր ծախսերը: Առաջին անգամ այդ մոտեցումն առաջարկել է Է. Էնգելը՝ 1883 թ.-ին: Նա մարդկային կապիտալի պաշարը հաշվարկել է որպես երեխաների դաստիարակության և կրթության ուղղությամբ կատարված ծախսերի ամբողջություն (մինչև երեխաների 25 տարին լրանալը)[68]: Երկրորդ մոտեցման կողմնակիցները մեծ ուշադրություն են դարձնում կրթությանն ու արտադրական փորձի կուտակմանը՝ կրթության համար կատարված ծախսերի ամբողջությունը համարելով ազգի կրթական ֆոնդ[69]:

Այս երկու մոտեցման հետաքրքրիր համադրման օրինակ է Ջ. Քենդրիկի՝ մարդկային կապիտալի պաշարի հաշվարկը[70]: Նա ամբողջական հասարակական հարստությունը մի կողմից ստորաբաժանում է ըստ շոշափելիի և ոչ շոշափելիի, իսկ մյուս կողմից՝ ըստ մարդու մեջ մարմնավորվածի և մարդուց անջատվածի: «Շոշափելի

---

[68] Մարդկային կապիտալի հաշվարկման առաջին փորձերի մասին առավել մանրամասն ներկայացված է՝ **Kiker B. F.,** The Historical Roots of the Concept of Human Capital, Journal of Political Economy, 1966, Vol. 74, N 5.

[69] **Марцинкевич В. И.,** Образование в США, Экономическое значение и эффективность, М., “Наука”, 1967, стр. 198.

[70] **Кендрик Дж.,** Совокупный капитал США и его формирование, М., “Прогресс”, 1978, стр. 275.

մարդկային կապիտալում» կատարված ներդրումների շարքին Քենդրիկը դասում է երեխաների խնամքի և դաստիարակության համար կատարված ծախսերը՝ մինչև նրանց 14 տարին լրանալը: Դրանց թվին են դասվում նաև աշխատանքային ռեսուրսների որակական բարելավմանը և արտադրողականության բարձրացմանը, առողջապահությանը, կրթությանը, մասնագիտական պատրաստմանը ուղղված ծախսերը, ինչպես նաև ուսանողների բաց թողնված եկամուտը (այն եկամուտը, որ նրանք կարող էին ստանալ, եթե նախընտրեին աշխատանքը, այլ ոչ թե ուսումը):

Նման մոտեցումը, պետք է նշել, նույնպես զերծ չէ հակասություններից և թերություններից:

Առաջին, հետազոտողները, միաժամանակ, սպառողական ծախսերը և ներդրումները մարդկային կապիտալում սահմանազատում են՝ ելնելով իրենց նախընտրություններից: Այսպես՝ Ջ. Քենդրիկը մարդկային կապիտալում ներդրումներ է համարում առողջապահության և աշխատանքի պաշտպանության համար կատարվող ամբողջական ծախսերի 50%-ը:

Երկրորդ, ի տարբերություն ֆիզիկական կապիտալի, մարդկային կապիտալի արտադրությունը պահանջում է և՛ դրամական միջոցներ, և՛ ներդրման օբյեկտի (մարդու) լուրջ ջանքեր: Միևնույն դրամական ներդրումների արդյունքում ձևավորվում է տարբեր որակի մարդկային կապիտալ:

Երրորդ, մարդկային կապիտալի հաշվարկման ներդրումային մեթոդները հաշվի չեն առնում դրամական համարժեք չունեցող այնպիսի ծախսեր, ինչպիսիք են երեխաների դաստիարակությունն ու խնամքն ընտանիքում, կրթության ընթացքում ուսանողների ջանքերը, ընտանիքի սոցիալական կապիտալը և այլն:

Չորրորդ, նշված մեթոդի շրջանակում բաց թողնված հնարավորությունների (եկամուտների) արժեքը հաշվարկվում է մարդկային կապիտալի կազմում: Սակայն, այստեղ հարց է ծագում. ո՞ր տարիքից սկսած՝ պետք է հաշվի առնել այդ ծախսերը: Զարգացած երկրներում այսօր այդ ծախսերը հաշվարկում են՝ սկսած 25 տարեկանից, քանի որ երիտասարդների մեծ մասն այդ տարիքում է ձեռք բերում մասնագիտություն և ներկայացնում կայուն զբաղվածության պահանջ: Այլ է իրավիճակը զարգացող երկրներում, որտեղ աշխատանքային գործունեության տարիքային շեմն ավելի ցածր է: Փաստորեն, զարգա-

ցող երկրներում հետդպրոցական ուսուցումը կապված է ավելի մեծ ծախսերի հետ, և հետևաբար՝ միևնույն կրթական մակարդակ ունեցողների մարդկային կապիտալի պաշարները տարբեր են:

Հարկ է նշել նաև, որ մարդկային կապիտալում կատարված ներդրումների մի մասը ոչ թե նպատակային, գիտակցված ջանքերի արդյունք է, այլ, պարզապես, աշխատանքային գործունեության «արտաքին էֆեկտ»: Խոսքն աշխատանքի գործընթացում փորձի և հմտությունների ձեռքբերման մասին է: Այս ամենը վկայում է այն մասին, որ մարդկանց մեջ մարմնավորված բազմաբնույթ գիտելիքը հնարավոր չէ ճշգրիտ կերպով գնահատել որևէ մեթոդի օգնությամբ: Շատ հետազոտողներ գիտակցելով, որ մարդկային կապիտալում կատարված ներդրումների և ստացվող արդյունքի որակի միջև կապը կայուն չէ, գերադասում են այդ խնդրին մոտենալ այլ կողմից՝ գնահատելով մարդկային կապիտալից հատույցը:

3. *Մարդկային կապիտալի գնահատումն ըստ հատույցի*

Մարդկային կապիտալի գնահատման կողմնակիցները հետհատույցի ցուցանիշի միջոցով իրենց մոտեցումը հիմնավորում են նրանով, որ մարդու կողմից կուտակված գիտելիքը, փորձը, հմտությունները անհրաժեշտ է չափել և գնահատել այն չափով, որ չափով որ դրանք ընդգրկված են տնտեսությունում և ապահովում են համապատասխան եկամուտ[71]: Հետազոտողները, իհարկե, հասկանում են, որ մարդկային կապիտալն ապահովում է ոչ միայն դրամական եկամուտներ, այլև ոչ դրամական օգուտներ, ինչպիսիք են գործազրկության ռիսկի նվազումը, կարիերայի ստեղծման հեռանկարները, աշխատանքից բավարարվածությունը և այլն: Բացի այդ, որպես կանոն, բարձր կրթական կապիտալ ունեցող անձանց կյանքի որակի, դրա միջին տևողության մակարդակը բարձր է: Բայց այդ, լրացուցիչ օգուտների հոսքը դժվար է քանակապես չափել և հանգեցնել մեկ միասնական հիմքի: Ինչպես Լ. Թարոուն էր նշում. «Եթե հաշվի առնենք, որ մարդիկ մաքսիմալացնում են ոչ թե որոշակի դրամական արտահայտություն ունեցող օգուտները, այլ ուղղակի օգտակարության հոսքը, ապա պետք է ընդունենք, որ յուրաքանչյուր, այդ թվում՝ մարդկային կապիտալում ներդրումներ իրականացնելու վերաբերյալ

[71] **Le T., Gibson G., Oxley L.,** A Forward-Looking Measure of the Stock of Human Capital in New Zealand. The Manchester School, 2006, N 5, p. 16.

որոշումն այս կամ այն չափով լինելու է իռացիոնալ: Հետևաբար՝ լավ և վատ որոշումների տարբերակման համար ստիպված ենք հաշվի առնել միայն դրամական եկամուտների մաքսիմալացումը: Բոլորն էլ հասկանում են, որ դա ճիշտ չէ, բայց քիչ թե շատ որոշակի արդյունք ստանալու միակ միջոցն է»[72]:

Հարկ է նշել, որ մարդկային կապիտալի չափումը հետհատույցի ցուցանիշի միջոցով նույնպես առնչվում է մի շարք մեթոդաբանական բարդությունների: Նախևառաջ, հնարավոր չէ ամբողջությամբ հաշվառել և մեկ ընդհանուր հայտարարի բերել մարդկային կապիտալից ակնկալվող ապագա ոչ դրամական եկամուտների հոսքը:

Երկրորդ, հնարավոր չէ հստակորեն հաշվառել նաև ապագայում ակնկալվող դրամական եկամտի մեծությունը, քանի որ ապագան կապված է անորոշության հետ, ուստի անհրաժեշտ է հաշվառել նաև հնարավոր ռիսկերը:

Երրորդ, աշխատավարձի և աշխատանքային այլ եկամուտների վրա ազդում են բազում գործոններ, որոնց ազդեցությունը երբեմն հնարավոր չէ արտահայտել որոշակի ցուցանիշների միջոցով: Եվ բացի այդ, առկա են մեթոդաբանական և տեխնիկական բնույթի բարդություններ՝ կապված մարդկային կապիտալից և արտադրության այլ գործոններից ստացվող եկամուտների սահմանազատման հետ: Այս բարդությունը կասկածի տակ է դնում մարդկային կապիտալի գնահատման հավաստիությունն ըստ հետհատույցի ցուցանիշի:

Նշված մոտեցումը հիմնվում է այն ենթադրության վրա, որ աշխատավարձերի մակարդակների միջև եղած տարբերությունները, իրոք, արտահայտում են տարբեր աշխատողների աշխատանքի արտադրողականության մակարդակների միջև եղած տարբերությունները: Իսկ եթե դա այդպես չէ, ապա մոդելը կիրառելի չէ[73]: Բացի այդ, մարդկային կապիտալից ստացվող հատույցը կախված չէ միայն մարդկային կապիտալի որակից: Դրա վրա էական ազդեցություն են թողնում տնտեսական, սոցիալական, քաղաքական բնույթի բազում գործոններ: Մարդկային կապիտալը կարող է թերօգտագործվել (գործազրկության, ոչ լրիվ զբաղվածության պարագայում), օգտագործվել ոչ

[72] **Thurow L.,** Investment in Human Capital, Belmond, Wadsworth Publishing Company, 1970, p. 122.

[73] **Le T., Gibson G., Oxley L.,** Measures of Human Capital: A review of the Literature, New Zealand Treasury Working Paper 05/10, p. 8-10.

արդյունավետ կերպով, շահագործվել, գերշահագործվել: Միաժամանակ, մարդկային կապիտալից ստացվող եկամուտը կարող է տարբեր կերպ բաշխվել մարդկային կապիտալի սեփականատերերի, ֆիզիկական կապիտալի սեփականատերերի և պետության միջև: Դա մեծապես պայմանավորված է ինստիտուցիոնալ գործոններով:

Այս առումով, հետաքրքրական հետազոտություն է իրականացրել Լ. Հենդրիքսը: Ուսումնասիրելով ԱՄՆ-ի իմիգրանտների աշխատավարձերի մակարդակները՝ նա ապացուցել է, որ երկրների մարդկային կապիտալների պարամետրերի միջև եղած տարբերությունները թույլ են տալիս բացատրել զարգացող և զարգացած երկրների ՀՆԱ-ների միջև եղած տարբերությունների միայն չնչին մասը: Աղքատ երկրների պարագայում (որտեղ ՀՆԱ-ն ԱՄՆ-ի ՀՆԱ 18%-ն է) մարդկային կապիտալի պաշարների միջև եղած տարբերությունները թույլ են տալիս բացատրել մեկ շնչին ընկնող ՀՆԱ տարբերությունների միայն 1/5, իսկ մարդկային կապիտալի և ֆիզիկական կապիտալի ամբողջական պաշարների միջև եղած տարբերությունը՝ միայն եղած տարբերության 1/3 մասը: Մնացյալը Լ. Հենդրիքսը վերագրել է ԸԳԱ-ին[74]:

Այսօր ԸԳԱ-ն մեկնաբանվում է որպես ներդրված ռեսուրսների օգտագործման արդյունավետության չափանիշ, որը հաշվի է առնում ոչ միայն տեխնոլոգիական փոփոխությունների ազդեցության աստիճանը վերջնական արդյունքի վրա, այլև սոցիալական և քաղաքական համակարգերի ազդեցությունը:

Ս. Մալիգանը և Ս. Մարտինը փորձել են գնահատել մարդկային կապիտալի զուտ էֆեկտն աշխատողների աշխատավարձերի տարբերակման մեջ: Նրանք չափել են մարդկային կապիտալի կուտակված մակարդակն ԱՄՆ-ի տարբեր շրջաններում՝ ըստ դրա համաթվի (կշռված աշխատանքային եկամտով՝ labour-income based): Նրանց մոդելի հիմքում եկամուտների կապիտալացման մեթոդն է: Չեզոքացնելու համար մարդկային կապիտալի հետ կապ չունեցող գործոնների ազդեցությունն աշխատանքի վարձատրության մակարդակի վրա նրանք ԱՄՆ-ի զարգացած և թույլ զարգացած շրջանների համար փորձել են օգտագործել հարաբերական մեծություններ: Յուրաքանչ-

[74] **Hendricks L.,** How Important is Human Capital for Development? Evidence from Immigrant Earnings //American Economic Review, 2002., Vol. 92, N 1, p. 200-217.

յուր նահանգի դեպքում որպես հիմք է ընդունվել կրթություն չունեցող անձանց աշխատավարձը: Մյուսների աշխատավարձի մեծությունը համեմատվել է այդ բազային մեծության հետ: Արդյունքները վկայել են այն մասին, որ մարդկային կապիտալի պաշարների աճի տեմպը գերազանցում է այլ եղանակներով հաշվարկված մարդկային կապիտալի աճի տեմպը: Հիմնվելով սեփական հետազոտությունների ցուցանիշների վրա՝ նրանք պնդել են, որ նշված երևույթը վկայում է կրթության որակի բարձրացման և ազգային տնտեսության պահանջներին վերջինիս համապատասխանության մասին[75]:

Մարդկային կապիտալի գնահատման խնդիրն առանձնակի նշանակություն ունի ԱՊՀ երկրների համար, որտեղ շուկայական վերափոխումներից առաջ կուտակված էր բավական որակյալ մարդկային կապիտալ: Նախկին ԽՍՀՄ-ում բարձր մակարդակի վրա էր գտնվում ընդհանուր և մասնագիտական կրթության համակարգը: Սակայն, բարեփոխումների ընթացքում լուրջ փոփոխություններ տեղի ունեցան նշված ոլորտում: Այսպես՝ 1999 թ.-ին 1990 թ.-ի համեմատությամբ ՌԴ-ում գիտական հետազոտությունների ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կրճատվել է երկու անգամ: Կրթության և մասնագիտական պատրաստման ուղղությամբ կատարվող ծախսերն ԱՊՀ երկրներում 2000 թ. կազմում էին ՀՆԱ 4%-ը, ընդ որում, ամենամեծ ցուցանիշն է գրանցվել Բելառուսում՝ 6.2%, իսկ ամենացածրը՝ Տաջիկստանում՝ 3.2%[76]:

ԱՊՀ երկրներում կրճատվել է նաև գիտաշխատողների թիվը. 1991-2000 թթ.-ին այդ ցուցանիշն ԱՊՀ կտրվածքով նվազել է կրկնակի, ՀՀ-ում՝ 3.5 անգամ, Ղազախստանում, Ուզբեկստանում, Բելառուսում՝ 2.8 անգամ: Այս իրավիճակը պայմանավորված է ոչ միայն բնական վերարտադրությամբ, այլև, այսպես կոչված, «ուղեղների» արտահոսքով, երբ բարձր որակավորում ունեցող մարդիկ, չկարողանալով իրացնել իրենց մարդկային կապիտալը, լքեցին հայրենիքը՝ վերջինիս իրացման առավել բարենպաստ պայմաններ գտնելու ակնկալիքով: Այդուհանդերձ, ԱՊՀ երկրների փորձագիտական գնահատականները ցույց են տալիս, որ գրեթե ամենուրեք մարդկային կապի-

[75] **Mulligan C., Sala-i-Martin X.,** Measuring Aggregate Human Capital, WBER Working Paper, N 5016, 1995, p. 20.

[76] **Аширова Г. Т.,** Современные проблемы оценки человеческого капитала, "Вопросы статистики", 2003, N 3, стр. 26-31.

տալն ազգային հարստության կեսից ավելին է:

Նշենք, որ Ս. Ֆիշերի և Վ. Իստերլի՝ ԽՍՀՄ երկրների տնտեսական զարգացման վերաբերյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ ՌԴ-ում, Բելառուսում և կովկասյան հանրապետություններում մարդկային կապիտալն ավելի մեծ դեր է խաղացել տնտեսական զարգացման հարցում, քան միջինասիական հանրապետություններում[77]:

Աղյուսակ 1

ԱՊՀ երկրների մարդկային կապիտալի փորձագիտական գնահատականները XXI դարի սկզբին [78]

Երկրներ	*Մարդկային կապիտալ*		*Մարդկային կապիտալի տեսակարար կշիռն ազգային հարստության կազմ.*
	տրլն դոլար	*մեկ շնչի հաշվով՝ հազ. դոլար*	
ԱՊՀ երկրներ ընդամենը	39.9	142.2	49.1
Ադրբեջան	0.6	70.0	42.2
Հայաստան	0.2	58.0	54.3
Բելառուս	1.8	181.6	55.4
Վրաստան	0.3	58.8	52.2
Ղազախստան	1.5	100.7	35.4
Ղրղզստան	0.2	50.0	45.9
Մոլդովա	0.2	53.5	51.4
ՌԴ	28.7	197.1	50.9
Տաջիկստան	0.2	26.8	53.7
Թուրքմենստան	0.3	55.0	10.2
Ուզբեկստան	1.4	58.6	50.2
Ուկրաինա	4.5	91.8	53.1

Տարբեր մեթոդներով գնահատված մարդկային կապիտալի մեծություններն էականորեն տարբերվում են միմյանցից աշխարհի բոլոր երկրների դեպքում: Բայց առավել մեծ շեղում նկատվում է անցումային տնտեսությամբ երկրներում: Այսպես՝ եթե հիմնվենք մարդկային

[77] **Easterly V., Fisher S.,** The Soviet Economic Decline, Historical and Republican Data, 1994, WBER Working Paper, N 4735, p. 3-46.

[78] **Аширова Г. Т.,** Современные проблемы оценки человеческого капитала, “Вопросы статистики”, 2003, N 3, стр. 29.

կապիտալի ներկայացուցչական գնահատումների վրա (ուսման տարիների քանակ, բնակչության բաշխում՝ ըստ կրթական մակարդակի, գիտահետազոտական աշխատանքներում (ԳՀԱ) կատարվող ներդրումներ և այլն), ապա ՀՀ-ն, մարդկային կապիտալի զարգացման տեսանկյունից, դասվում է բարձր կարգի երկրների շարքին (ՀՀ-ի համար մարդկային ներուժի զարգացման համաթիվը տատանվում է 0.733-0.768-ի սահմաններում): Իսկ եթե հիմնվենք մարդկային կապիտալի դրամական գնահատումների վրա՝ ըստ հետհատույցի մեթոդի, ապա կնկատենք, որ երկրում մարդկային կապիտալից ստացվող հատուցումը միկրոմակարդակում շատ ցածր է: Բանն այն է, որ ՀՀ-ում մարդկային կապիտալի շուկայում ստեղծվել է այնպիսի իրավիճակ, որ աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության միջև եղած համամասնությունները ձևախեղվել են: Վերջին տասնամյակների ընթացքում լուրջ տեղաշարժեր են նկատվել բնակչության զբաղվածության կառուցվածքում, ինչի արդյունքում մարդկային կապիտալը հոսում է դեպի այն ճյուղեր, որոնք մարդկային կապիտալի համեմատաբար բարձր հատույց են ապահովում միկրոմակարդակում, սակայն չեն նպաստում երկարաժամկետ նորարարական զարգացմանը:

Բացի այդ, ՀՀ-ից արտագաղթի հետևանքով բարձրորակ մարդկային կապիտալն արտահոսում է դեպի զարգացած երկրներ, որտեղ դրա իրացման պայմաններն ապահովում են բարձր եկամուտ: ՀՀ-ում մարդկային կապիտալի շուկայում ձևավորված իրավիճակը հանգեցրել է նրան, որ մարդկային կապիտալից ստացվող հատույցը մակրոմակարդակում բավական բարձր է, բայց այն չի վերածվում անձնական եկամտի, քանի որ յուրացվում է ոչ թե մարդկային կապիտալի տիրոջ, այլ տնտեսավարող այլ սուբյեկտների կողմից:

Այսօր մարդկային կապիտալի գնահատման խնդիրը տնտեսագետների ուշադրության կենտրոնում է, բայց, այդ առումով յուրաքանչյուր մոտեցում ունի իր բացթողումները: Դա պայմանավորված է նրանով, որ մարդկային կապիտալն ինքնին բարդ և բազմակողմանի կատեգորիա է, և հնարավոր չէ միակողմանի վերլուծություն իրականացնել: Տարբեր մոտեցումների հիման վրա գնահատված ցուցանիշների միջև եղած տարբերությունների մի մասը բացատրվում է տեխնիկական խնդիրներով, մյուս մասն արտացոլում է բնածին և ձեռքբերովի հատկանիշների արդյունքում ձևավորված մարդկային կապի-

տալի սահմանազատման անհնարինությունը: Յուրաքանչյուր հետազոտող կարող է կիրառել այս կամ այն մեթոդը՝ կախված իր առջև դրված խնդիրներից: Ելնելով մեր առջև դրված խնդիրներից՝ նպատակահարմար է համեմատել մարդկային կապիտալում կատարված ներդրումների ցուցանիշը դրանից ստացվող հատույցի մեծության հետ: Մարդկային կապիտալում կատարվող ներդրումների թվին են դասվում կրթության, գիտության, առողջապահության, մշակույթի ուղղությամբ կատարված և սպառողական ծախսերը: Խնդիրն այն է, որ առայսօր ԱՀՀ-ում բացակայում է մարդկային կապիտալի տարրերի դասակարգումը: Ցուցանիշների մի ամբողջ խումբ արտացոլվում է ընթացիկ սպառման կառուցվածքում, ինչը թույլ չի տալիս հստակորեն հաշվառել մարդկային կապիտալում կատարված ներդրումները: Ուստի տարբեր հետազոտողներ իրենց սեփական մոտեցումն են ցուցաբերում այդ հարցում: Արդյունքում նրանց կատարած գնահատումներն էականորեն տարբերվում են միմյանցից: Մարդկային կապիտալում կատարվող ներդրումները կարելի է բաժանել ըստ դրանց աղբյուրի՝ ընտանիք, ձեռնարկություններ և պետություն: Մարդկային կապիտալում ընտանիքի մակարդակով կատարվող ներդրումներն արտացոլվում են սպառողական ծախսերի ցուցանիշի (C), ձեռնարկությունների մակարդակով կատարվող ներդրումները՝ աշխատողների վերապատրաստման համար ձեռնարկության ծախսերի ցուցանիշի, իսկ պետության մակարդակով կատարվող ներդրումները՝ գիտության և ԳՀԱ, կրթության, մշակույթի, առողջապահության ծախսերի միջոցով: Բայց եթե ընտանիքի մակարդակով մարդկային կապիտալում կատարվող ներդրումներ կարող ենք համարել ապառողական ծախսերի մեծ մասը, ապա պետության մակարդակով, այս առումով, կան որոշ վերապահումներ: *Այսպես՝ առողջապահական ծախսերի այն մասը, որն ուղղվում է տարեցների և հաշմանդամների առողջության պահպանմանն ու վերականգնմանը, պալիատիվ բժշկությանը, ներդրումներ են ոչ թե մարդկային, այլ սոցիալական կապիտալում: Խնդիրն այն է, որ հասարակության նշված խմբերը չեն կարող մասնակցել հասարակական արդյունքի արտադրության գործընթացին, հետևաբար՝ այդ ծախսերն ուղղակիորեն չեն նպաստում մարդկային կապիտալի աճին: Սակայն, դրանք խթանում են հասարակության սոցիալական կապիտալի աճը, ինչն իր հերթին տնտեսական աճի ապահովման կարևոր գործոն է: Իհարկե, ընտանիքի մակարդակում*

կատարվող ծախսերի մի մասը ևս ներդրում է ընտանիքի սոցիալական կապիտալում (սոցիալական կապիտալի միկրոմակարդակ), բայց դրա հաշվառումը բավական բարդ խնդիր է, և պարզության համար այն դիտարկվում է որպես ներդրում մարդկային կապիտալում:

1.4. Մարդկային կապիտալի գնահատման ցուցանիշների համակարգը

Տնտեսության տարբեր մակարդակներում մարդկային կապիտալը համակարգված ձևով գնահատելու համար պետք է դասակարգել վերջինս բնութագրող ցուցանիշները: Կախված ընտրված չափանիշից՝ մարդկային կապիտալը բնութագրող ցուցանիշները կարելի է դասակարգել ըստ 3 խմբի.

1. ըստ ակտիվների (ֆոնդի),

2. ըստ ագրեգացման աստիճանի,

3. ըստ բնաիրային և արժեքային ձևի:

1. Մարդկային կապիտալն ունի ներքին բարդ կառուցվածք: Ըստ ակտիվների՝ այն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

ա) ինտելեկտուալ (մտավոր) կապիտալ,

բ) արտադրությունում վերապատրաստման ֆոնդ,

գ) առողջության ֆոնդ,

դ) միգրացիայի ֆոնդ,

ե) տնտեսապես արժեքավոր տեղեկության ֆոնդ,

զ) տնտեսական գործունեության շահադրդման ֆոնդ,

է) ձեռներեցության ֆոնդ,

ը) սոցիալական կապիտալի ֆոնդ:

Նշված ակտիվներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները և կարող է ներկայացվել համաձայն մարդկային կապիտալի ներքին կառուցվածքի համապատասխան ցուցանիշների:

2. Ելնելով մարդկային կապիտալի արտադրության մակարդակից՝ վերջինս պետք է գնահատել ինչպես յուրաքանչյուր անհատի, այնպես էլ ամբողջ հասարակության տեսանկյունից: Ագրեգացման և վերլուծության տարբեր մակարդակներում առանձնանում են մարդկային կապիտալի գնահատման հետևյալ ցուցանիշները.

ա) միկրոմակարդակի, որոնք բնութագրում են որոշակի անհատների մարդկային կապիտալը,

բ) մեզոմակարդակի, որոնք բնութագրում են խոշոր կորպորացիաների և տարածաշրջանների մարդկային կապիտալը,

գ) մակրոմակարդակի, որոնք բնութագրում են մարդկային կապիտալն ամբողջ ազգային տնտեսության առումով,

դ) մեգամակարդակի, որոնք բնութագրում են մարդկային կապիտալը գլոբալ, համաշխարհային մասշտաբով:

3. Ըստ գնահատման եղանակի՝ մարդկային կապիտալի ցուցանիշները լինում են.

ա) բնաիրային,

բ) արժեքային:

4. Ըստ վերծանման հնարավորության՝ մարդկային կապիտալի ցուցանիշները դասակարգվում են որպես.

ա) քանակական,

բ) որակական:

5. Ըստ բնութագրման աստիճանի՝ մարդկային կապիտալի ցուցանիշները լինում են.

ա) ուղղակի,

բ) անուղղակի:

6. Ստացման եղանակից ելնելով՝ մարդկային կապիտալի ցուցանիշները դասակարգվում են որպես.

ա) փորձնական (էմպիրիկ),

բ) հաշվարկային (ըստ նախորդ ժամանակաշրջանի տվյալների),

գ) փորձագիտական:

7. Ըստ կառուցման եղանակի՝ մարդկային կապիտալի ցուցանիշները լինում են.

ա) պարզ,

բ) ագրեգացված,

գ) սինթետիկ:

8. Ըստ արտահայտման ձևի՝ մարդկային կապիտալի ցուցանիշները լինում են.

ա) բացարձակ,

բ) հարաբերական:

Աղյուսակում արտացոլված են վերը թվարկված ցուցանիշները: Դրանցից յուրաքանչյուրը համապատասխանում է որոշակի ակտիվի (բնա-

իրային և արժեքային)՝ ինչպես բացարձակ, այնպես էլ հարաբերական արտահայտությամբ, դասակարգված ըստ ագրեգացման աստիճանի:

Ինտելեկտուալ կապիտալը բնութագրող ցուցանիշները ներառված են երեք ենթախմբում՝ ըստ իրենց յուրահատկությունների.

1. կրթական կապիտալ (ֆոնդ),

2. գիտական կապիտալ (ֆոնդ),

3. նորարարական կապիտալ (ֆոնդ):

Միաժամանակ, ձեռներեցության ֆոնդը նպատակահարմար է քննարկել ոչ թե առանձին, այլ նորարարական ֆոնդի կազմում:[79]

Աղյուսակ 2

Ինտելեկտուալ կապիտալ

Կրթական ֆոնդ		
Բնաիրային ցուցանիշներ		
Անհատ	*Ֆիրմա*	*Ազգային տնտեսություն*
1. Ֆորմալ կրթության մակարդակը (ուսման տարիների տևողություն): **2.** Գիտելիքի, ինտելեկտի մակարդակը (գրագիտությունը գնահատող թեստ):	**1.** Միջին, բարձրագույն և հետբուհական կրթությամբ մասնագետների թիվն ու տեսակարար կշիռն ընդհանուրում: **2.** Արտադրության գիտատարությունը (ֆիրմայի կրթական ֆոնդ /համախառն թողարկում):	**1.** Կրթական հաստատությունների թիվը (ըստ տարբեր մակարդակի): **2.** Ուսուցիչների և պրոֆեսորադասախոսական համակազմի թիվն ու տեսակարար կշիռը տնտեսապես ակտիվ բնակչության կազմում: **3.** Ուսումնական հաստատությունների շրջանավարտների թիվը (ըստ մակարդակի): **4.** Բուհերի ուսանողների ընդհանուր թիվը 100.000 բնակչի հաշվով: **5.** Միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ անձանց տեսակարար կշիռը: **6.** Բնակչության ուսման միջին տևողությունը:

[79] **Курганский С. А.,** Структура человеческого капитала и его оценка на макроуровне, http://izvestia.bgu.ru/reader/article.aspx?id=14572

Արժեքային ցուցանիշներ		
1. Անձնական ուղղակի ծախսերը կրթություն ստանալու համար: **2.** Կորսված (բաց թողնված հնարավորությունների ծախսերը) եկամուտները կրթություն ստանալու ընթացքում: **3.** Եկամտաբերության անհատական ներքին նորման:	**1.** Աշխատակիցների ուսուցման ծախսերը: **2.** Մեկ աշխատակցի ուսուցման միջին տարեկան ծախսերը: **3.** Գիտատարությունը (ֆիրմայի կրթական ֆոնդ/համախառն հասույթ): **4.** Եկամտաբերության ներքին նորման (ձեռնարկությունների մակարդակով):	**1.** Կրթական ծրագրի վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը պետբյուջեից՝ ՀՆԱ-ի նկատմամբ: **2.** Մեկ ուսանողի համար կատարվող ծախսերը մեկ տարում: **3.** Կրթության ֆոնդ՝ ուսման մարդ-տարի թիվ x յուրաքանչյուր մակարդակի ուսուցման արժեք: **4.** ՀՆԱ գիտատարությունը (կրթական ֆոնդ /ՀՆԱ): **5.** Եկամտաբերության հասարակական ներքին նորման:
Գիտության ֆոնդ		
Բնաիրային ցուցանիշներ		
1. Անձի գիտական նվաճումները (հրատարակումներ, դրամաշնորհներ, մեջբերման ցուցիչ): **2.** Անձի գիտական կարգավիճակը՝ գիտական աստիճան, կոչում, պաշտոն,անդամակցություն գիտական կազմակերպություններին:	**1.** Գիտական հետազոտություններով զբաղված անձնակազմի թիվն ու տեսակարար կշիռը: **2.** Գիտական արդյունքի ելքը:	**1.** Գիտության բնագավառում զբաղվածների թիվն ու տեսակարար կշիռը զբաղվածների կազմում: **2.** Գիտական աշխատողների թիվը գիտության ոլորտում զբաղվածների նկատմամբ (տեսակարար կշիռ): **3.** Գիտությունների դոկտորի կամ թեկնածուի աստիճան ունեցողների թիվը գիտաշխատողների և գիտության ոլորտում զբաղվածների կազմում: **4.** ԳԱԱ գիտաշխատողների թիվն ու տեսակարար կշիռը գիտաշխատողների մեջ: **5.** Գիտական կազմակերպությունների քանակը:

Արժեքային ցուցանիշներ		
1. Գիտական գործունեությունից ստացվող եկամուտները:	**1.** Գիտնականների (խորհրդականներ, փորձագետներ) պատրաստման ծախսերը: **2.** Գիտական արդյունքի իրացումից եկամուտները:	**1.** Գիտության վրա կատարված ծախսերի ծավալը և մասնաբաժինը ՀՆԱ կազմում: **2.** Գիտության ծախսերի մասնաբաժինը պետական բյուջեում: **3.** Գիտության ոլորտում զբաղվածների համար կատարվող ծախսերը:
Նորարարական ֆոնդ և ձեռներեցություն		
Բնաիրային ցուցանիշներ		
1. Բնատուր ունակությունները, տաղանդը: **2.** Ձեռնարկատիրական ունակությունները:	**1.** ԳՀՄ-ում զբաղված անձնակազմի թիվը: **2.** Նոր արտադրանքի տեսակարար կշիռն ընդհանուր արտադրանքի կազմում: **3.** Արտադրանքի որակը: **4.** Գյուտերի, պատենտների, հեղինակային իրավունքների, աշխատողների ռացիոնալ առաջարկների թիվը:	**1.** ԳՀՄ-ում զբաղվածների թիվն ու տեսակարար կշիռը զբաղված բնակչության կազմում: **2.** SS ոլորտի աշխատակիցների մասնաբաժինը զբաղված բնակչության կազմում: **3.** Նոր տեղեկատվական տեխնոլոգիաների արտադրության և տարածման ծավալները: **4.** Գյուտերի, պատենտների, հեղինակային իրավունքների քանակը 1000 զբաղված բնակչի հաշվով: **5.** Նոր տեխնիկայի ստեղծման քանակը: **6.** Տեխնիկայի նոր տեսակների յուրացման քանակը: **7.** Գյուտերի, արտոնագրերի հայտերի քանակը: **8.** Առաջին անգամ օգտագործված գյուտերի թիվն ու մասնաբաժինն ընդհանուր հայտերի նկատմամբ: **9.** Նորարարական գործունեությամբ զբաղված ֆիր-

		մաների թիվը: **10.** Գրանցված ֆիրմաների և ձեռներեցների թիվը:
Արժեքային ցուցանիշներ		
1. Գյուտարարական գործունեության համար կատարված անձնական ծախսերը: **2.** Գյուտարարական գործունեությունից ստացվող եկամուտները: **3.** Ձեռնարկատիրական եկամտի մեծությունը: **4.** Եկամտաբերության ներքին նորման:	**1.** Ինտելեկտուալ սեփականության մասնաբաժինը հիմնադիր կապիտալի կազմում: **2.** ԳՀՄ-ի համար կատարված ծախսերը: **3.** Նորարարական գործունեության խթանման ֆոնդը: **4.** Մարքեթինգային ծախսերը: **5.** Հեղինակային իրավունքի վաճառքից ստացվող եկամուտը: **6.** Նորարարական արտադրանքի իրացումից ստացվող եկամտի մեծությունն ու կշիռը եկամտում: **7.** «Նոու-հաու»-ի օգտագործումից մենաշնորհային ռենտան: **8.** Եկամտաբերության մակարդակը: **9.** Եկամտաբերության ներքին նորման:	**1.** Ինտելեկտուալ սեփականության ծավալը: **2.** ԳՀՄ ծախսերի մասնաբաժինը ՀՆԱ-ում և պետբյուջեում: **3.** Նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման ծախսերը: **4.** Նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրման միջոցառումների արդյունավետությունը: **5.** Գյուտերի օգտագործման տնտեսական էֆեկտը: **6.** Հեղինակային իրավունքների վաճառքից ստացվող եկամուտները (պատենտ, արտոնագիր): **7.** Գիտատար տեխնիկայի և տեխնոլոգիայի արտահանումից եկամուտը: **8.** Փոքր և միջին բիզնեսի աջակցման ֆոնդերի ծախսերը: **9.** Ձեռնարկատիրական եկամտի մասնաբաժինն ազգային եկամտում: **10.** Եկամտաբերության հասարակական նորման:

Արտադրությունում վերապատրաստման ֆոնդ		
Բնաիրային ցուցանիշներ		
1. Արհեստավարժությունը: **2.** Որակավորումը: **3.** Արտադրական փորձը (ստաժ): **4.** Տարվա ընթացքում զբաղվածության ծավալը (մարդ-ժամ): **5.** Արտադրությունում ուսման տևողությունը:	**1.** Անձնակազմի թիվն ու մասնագիտական որակական կազմը: **2.** Մեկ զբաղվածի հաշվով թողարկումը: **3.** Ընդհանուր աշխատած ժամերի քանակը (մեկ զբաղվածի հաշվով): **4.** Արտադրանքի որակը: **5.** Աշխատավայրում վերապատրաստման ժամային ֆոնդը: **6.** Պատրաստի արտահանվող արտադրանքի առկայությունն ու ծավալը:	**1.** Զբաղվածների մասնագիտական-որակական կառուցվածքը: **2.** Տնտեսապես ակտիվ բնակչության գրագիտության մակարդակը: **3.** Աշխատանքային կյանքի սպասվելիք միջին տևողությունը: **4.** Զբաղվածների և գործազուրկների թիվն ըստ մասնագիտությունների և որակավորման: **5.** Տարվա մեջ աշխատած ժամերի քանակը: **6.** Արտահանման ծավալն ու կառուցվածքը:
Արժեքային ցուցանիշներ		
1. Մասնագիտության և որակավորման ձեռքբերման վրա կատարված անձնական ծախսերը: **2.** Եկամտի հավելաճն արտադրությունում վերապատրաստման արդյունքում: **3.** Եկամտաբերության ներքին նորման (մասնավոր):	**1.** Անձնակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման ծախսերը: **2.** Անձնակազմի վերապատրաստման միջոցառումների արդյունավետությունը: **3.** Հասույթի հավելաճն աշխատակիցների վերապատրաստման արդյունքում: **4.** Աշխատողների աշխատանքի արտադրողականությունը: **5.** Խոտանից կորուստները: **6.** Անձնակազմի պատճառով առաջացած վթարներից կորուստները:	**1.** Աշխատանքի արտադրողականությունը (ՀՆԱ/բնակչության թիվ): **2.** Զբաղվածության ֆոնդից ֆինանսավորման ծախսերը (վերապատրաստում, գործազրկության նպաստ և այլն): **3.** ՀՆԱ-ում աշխատողների պատրաստման և վերապատրաստման ծախսերը (բոլոր աղբյուրներից): **4.** Արտահանումից հասույթը: **5.** Մարդկային գործոնի պատճառով ի հայտ եկած վթարներից կորուստը: **6.** Գործազրկության պատճառով ՀՆԱ կորուստները: **7.** Եկամտաբերության հասարակական նորման:

Առողջության ֆոնդ		
Բնաիրային ցուցանիշներ		
1. Ժառանգականությունը: **2.** Ռիսկի գործոնները (կենսակերպ, վնասակար սովորություններ, ավելորդ քաշ և այլն): **3.** Աշխատունակությունը: **4.** Անաշխատունակության օրերի թվաքանակը տարվա կտրվածքով: **5.** Անձի մարզական ձեռքբերումները:	**1.** Հիվանդությունների պատճառով աշխատաժամանակի կորուստը (տարեկան): **2.** Առողջապահական և սպորտային բնույթի միջոցառումների թիվը: **3.** Աշխատանքի հիգիենայի միջոցառումների ծավալը:	**1.** Կյանքի միջին տևողությունը: **2.** Բնակչության մահացությունն ըստ տարբեր պատճառների: **3.** Բնակչության բնական հավելաճը/նվազումը: **4.** Անաշխատունակ բնակչության թիվն ու տեսակարար կշիռն աշխատանքային ռեսուրսների կազմում: **5.** Բնակչության հիվանդացության մակարդակը: **6.** Աշխատաժամանակի կորուստները՝ կապված հիվանդությունների հետ: **7.** Հոգեկան առողջության մակարդակը: **8.** Ինքնասպանությունների մակարդակը: **9.** Վնասակար սովորույթների տարածվածությունը (ալկոհոլիզմ, թմրամոլություն և այլն): **10.** Կյանքի բնապահպանական պայմանները: **11.** Սննդամթերքի հիմնական տեսակների սպառման ցուցանիշները: **12.** Զինվորական ծառայության համար ոչ պիտանի անձանց թիվը: **13.** Կանխարգելիչ միջոցառումների ծավալը: **14.** Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զանգվածային զարգացման մակար-

		դակը: **15.** Մարդկային զարգացման համաթիվը:
Արժեքային ցուցանիշներ		
1. Առողջության պահպանման և ֆիզիկական կուլտուրայի ուղղությամբ կատարվող անձնական ծախսերը: **2.** Անաշխատունակության պատճառով եկամուտների կորուստները: **3.** Առողջապահական բնույթի ներդրումների եկամտաբերության ներքին նորման:	**1.** Առողջապահական և սպորտային միջոցառումների ուղղությամբ կատարվող ծախսերը: **2.** Աշխատանքային հիգիենայի և անվտանգությանն ուղղված ծախսերը: **3.** Առողջության ապահովագրության հետ կապված ծախսերն ու անաշխատունակության համար վճարումները: **4.** Աշխատակիցների անաշխատունակության պատճառով եկամտի կորուստը: **5.** Առողջ ապրելակերպի ապահովմանն ուղղված ծախսերը: **6.** Եկամտաբերության ներքին նորման:	**1.** Առողջապահության և ֆիզիկական կուլտուրայի ուղղությամբ կատարվող ծախսերի ծավալն ու մասնաբաժինը ՀՆԱ կազմում: **2.** Աշխատանքային տարիքում անաշխատունակության և մահացության պատճառով ՀՆԱ կորուստները: **3.** Կանխարգելիչ առողջապահական միջոցառումների համար կատարվող ծախսերը: **4.** Բնապահպանական ծրագրերի իրականացման համար կատարվող ծախսերը: **5.** Առողջապահության ներդրումների եկամտաբերության ներքին հասարակական նորման:
Միգրացիայի ֆոնդ		
Բնաիրային ցուցանիշներ		
1. Հարմարվողականության ներուժը: **2.** Անձնական շարժունությունը (մասնագիտական, միջճյուղային, տարածքային): **3.** Մեկ աշխատավայրում աշխատելու ստաժը:	**1.** Ներֆիրմային շարժունությունը (կադրերի փոխատեղում՝ հորիզոնական և ուղղահայաց): **2.** Կադրերի հոսունությունը: **3.** Անձնակազմի միջին արտադրական ստաժը, 1-10 տարի և 10-ից ավելի տարիների աշխատանքային ստաժ ունեցող աշխատակիցների	**1.** Մասնագիտական շարժունության ծավալները: **2.** Միջճյուղային շարժունության ծավալը: **3.** Տարածքային շարժունության ծավալները: **4.** Միջազգային շարժունության ծավալները (էմիգրացիա, իմիգրացիա, «ուղեղների արտահոսք» և այլն): **5**.Ամբողջական աշխատուժի հոսունությունը:

	տեսակարար կշիռը: **4.** Գործուղումների ընդհանուր թիվը, տևողությունը մեկ աշխատակցի հաշվով: **5.** Կապի միջոցներով անձնակազմի հագեցվածությունը:	**6.**Մեկ աշխատավայրում աշխատողների աշխատանքի միջին տևողությունը: **7.**Գործազուրկի կարգավիճակում գտնվելու միջին տևողությունը: **8.**Նոր աշխատավայրի փնտրման միջին տևողությունը:
Արժեքային ցուցանիշներ		
1. Բնակության վայրի փոփոխության հետ կապված անձնական ծախսերը: **2.** Նոր աշխատավայրի փնտրման հետ կապված անձնական ծախսերը: **3.** Աշխատավայրի փոփոխման արդյունքում եկամտի հավելաճը: **4.** «Կորսված եկամուտներն» աշխատանքի և բնակության վայրի փոփոխման հետևանքով: **5.** Եկամտաբերության մասնավոր ներքին նորման:	**1.** Անձնակազմի հավաքագրման ծախսերը: **2.** Աշխատանքային հոսունության պատճառով ծախսերը: **3.** Ներֆիրմային շարժունության ծախսերը: **4.** Տեղափոխվող աշխատողների վրա կատարվող ծախսերը: **5.** Գործուղումների հետ կապված ծախսերը: **6.** Անձնակազմի ներքին շարժունության խթանման արդյունքում եկամտի հավելաճը: **7.** Շարժունության ծախսերի (ներդրումների) եկամտաբերության ներքին նորման:	**1.** Շարժունության արդյունքում եկամտի հավելաճը /կորուստը: **2.** «Ուղեղների արտահոսքից» ՀՆԱ կորուստները: **3.** Իմիգրանտների ընդունման ծախսերը: **4.** Աշխատանքի շուկայի գործարքային (տրանսակցիոն) ծախսերը: **5.** Շարժունության ֆոնդի եկամտաբերության հասարակական նորման:

Այլ ֆոնդեր		
Բնաիրային ցուցանիշներ		
1. Բարեկրթության մակարդակը: **2.** Հաղորդակցման ունակությունը: **3.** Կազմակերպվածությունը: **4.** Կարգապահությունը: **5.** Աշխարհայացքը: **6.** Բարոյաէթիկական հատկանիշները: **7.** Ոչ տնտեսական բնույթի այլ հետաքրքրությունները և նախասիրությունները:	**1.** Արտադրական մշակույթի մակարդակը: **2.** Կարգապահության մակարդակը: **3.** Կազմակերպական կառուցվածքը: **4.** Աշխատակիցների միջև փոխհարաբերությունները: **5.** Այլ:	**1.** Սոցիալական լարվածության մակարդակը հասարակությունում: **2.** Հասարակությունում հանցավորության մակարդակը: **3.** Ազգային հոգեկերտվածքը (մենթալիտետ): **4.** Հասարակության վերաբերմունքը քաղաքական և սոցիալական կառույցների նկատմամբ: **5**. Այլ:
Արժեքային ցուցանիշներ		
1. Օգուտները և կորուստները ոչ տնտեսական բնույթի հետաքրքրություններից և նախասիրություններից:	**1.** Կարգապահության խախտման և բախումների հետ կապված կորուստները: **2.** Կազմակերպական կառուցվածքի օգուտները/վնասները: **3.** Ֆիրմայի հեղինակության հետ կապված օգուտները/վնասները:	**1.** Հանցավորության, հակահասարակական վարքագծի հետ կապված կորուստները: **2.** Սոցիալական բախումներից կորուստները (գործադուլ և այլն): **3.** Սոցիալական կայունությունից օգուտները:

ԳԼՈՒԽ 2

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Մարդկային կապիտալում ներդրումների էությունը, տեսակները և դրանց առանձնահատկությունները

Ներդրումները, ամենալայն իմաստով, նպաստում են կապիտալի պաշարի ավելացմանը, որն ինքնին տնտեսական աճի ներքին աղբյուր է ու նյութական հիմք: Մարդկային կապիտալում կատարվող ներդրումներն ունեն որոշակի առանձնահատկություններ՝ կապված դրանց կառուցվածքի, հատույցի և մարդկային կապիտալի կուտակման ու պաշարներն ավելացնելու հետ: Նախորդ բաժնում ներկայացված մարդկային կապիտալի կառուցվածքի դասակարգումը հնարավորություն է տալիս նաև առանձնացնելու մարդկային կապիտալում կատարվող ներդրումների երեք՝ միկրո-, մեզո- և մակրոմակարդակ: Ընդհանրապես, մարդկային կապիտալում կատարվող ներդրումների հոդվածները կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. առողջության պահպանում և վերականգնում,
2. կրթության ձեռքբերման վրա կատարվող ծախսեր,
3. միգրացիա,
4. տնտեսապես արժեքավոր տեղեկության ձեռքբերման ծախսեր:

Ջ. Քենդրիկը մարդկային կապիտալում կատարվող ներդրումների թվին է դասում նաև ուսման ընթացքում ուսանողների բաց թողնված վաստակը: Կորսված վաստակներն այն հնարավոր եկամուտներն են, որոնք ուսանողները կարող էին ստանալ, եթե չսովորեին[80]: Սակայն, այս հոդվածը չի արտացոլվում ազգային հաշիվների համակարգում (ԱՀՀ): Չի արտացոլվում նաև ազատ ժամանակի առկայությունը, որը ևս մարդկային կապիտալի ձևավորման կարևոր պայման է:

Միկրոմակարդակում մարդկային կապիտալում ներդրումներն

[80] **Кендрик Дж.,** Совокупный капитал США и его формирование, М., "Прогресс", 1978, стр. 19.

իրականացվում են տնային տնտեսությունների, մեզոմակարդակում՝ առանձին ձեռնարկությունների, իսկ մակրոմակարդակում՝ պետական բյուջեի միջոցով: Պետության դերն այդ հարցում շատ կարևոր է: Վերջինս այդ ոլորտում իրագործում է և՛ համապարտադիր, և՛ խթանիչ միջոցառումներ: Համապարտադիր է միջնակարգ կրթության, պատվաստումների և այլնի ապահովումը: Խթանիչ միջոցառումների շրջանակում պետությունը կարող է կարգավորել մարդկային կապիտալի օգտագործման գինը:

Մարդկային կապիտալում կատարվող ներդրումներն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնցով տարբերվում են ներդրումների այլ տեսակներից: Դրանք են.

1. Մարդկային կապիտալում կատարվող ներդրումներից ստացվող հատույցն անմիջականորեն կախված է նրա տիրոջ կյանքի տևողությունից և այն ժամանակահատվածից, որի ընթացքում կատարվում են այդ ներդրումները: Որքան վաղ տարիքում են կատարվում այդ ներդրումները, այնքան ավելի երկար ժամանակահատվածում են դրանք ապահովում հատույց:

2. Մարդկային կապիտալը ենթարկվում է ֆիզիկական և բարոյական մաշվածության: Բայց, միաժամանակ, ի տարբերություն ֆիզիկական կապիտալի, օգտագործման ընթացքում այն ունի կուտակվելու և ինքնաճելու հատկություն: Մարդկային կապիտալի ֆիզիկական մաշվածությունը պայմանավորված է օրգանիզմի բնական մաշվածությամբ, իսկ բարոյական մաշվածությունը՝ գիտելիքների հնացմամբ: Մարդկային կապիտալի կուտակումն իրականացվում է աշխատողի ուսուցման, պարբերական վերապատրաստման և փորձի ձեռքբերման ընթացքում, այսինքն՝ դրա կուտակումը որոշակի ժամանակաշրջանում համընկնում է օգտագործման հետ: Մարդկային կապիտալի օգտագործման ընթացքն ինքնին ապահովում է կուտակում՝ փորձի ձեռքբերման ճանապարհով: Նույնը չի կարելի ասել կապիտալի այլ տեսակների մասին:

3. Մարդկային կապիտալի կուտակմանը զուգընթաց, դրա եկամտաբերության մակարդակը բարձրանում է մինչև որոշակի սահման (ակտիվ աշխատանքային գործունեության վերին տարիքային սահման), որից հետո կտրուկ նվազում է: Այսինքն՝ սկսում է գործել նվազող սահմանային հատույցի օրենքը: Սակայն, նշված օրինաչափությունը բնորոշ է միայն միկրոմակարդակում մարդկային կապիտա-


լում կատարված ներդրումներին, երբ որպես ներդրման օբյեկտ են դիտարկվում որոշակի մարդիկ: Եթե մակրոմակարդակում քննարկենք մարդկային կապիտալում կատարվող ներդրումները, ապա կտեսնենք, որ դրանց վրա չի տարածվում նվազող սահմանային հատույցի օրենքը: Բանն այն է, որ մարդկային կապիտալն անընդհատ վերարտադրվում է՝ ապահովելով սերնդափոխության կանոնավոր գործընթաց, ինչը հիմք է տալիս եզրակացնելու, որ դա չի ենթարկվում ֆիզիկական մաշվածության (կամ աննշան է մաշվում) և դրանում կատարվող ամբողջական ներդրումներն ապահովում են աճող, այլ ոչ թե նվազող հատույց: Վերջին տասնամյակների էմպիրիկ հետազոտությունների արդյունքները (Մ. Թոդարո, Փ. Ռոմեր, Ի. Բենհաբիբ, Մ. Շպիգել, Ռ. Նելսոն, Է. Ֆելպս, Գ. Բարո, Հ. Սելա, Գ. Մարտին և այլք) վկայում են այն մասին, որ տնտեսական աճի մոդելների փորձարկման ժամանակ գործնականում դրսևորվում է մասշտաբից կայուն կամ աճող հատույց: Այսպես՝ Մ. Թոդարոն նշում է, որ ամբողջ տնտեսության կտրվածքով աճի էնդոգեն (ներածին) մոդելների փորձարկումը հերքում է նվազող հատույցի օրենքը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ մակրոմակարդակում գործում է կապիտալի աճող հատույցը՝ պայմանավորված արտաքին դրական էքստերնալիաներով[81]: Փ. Ռոմերը նույնպես չի բացառում, որ ագրեգացված արտադրական ֆունկցիան կարող է դրսևորել մասշտաբից աճող հատույց[82], բայց դա հնարավոր է միայն գիտական նվաճումների և նոր տեխնոլոգիաների ներդրման արդյունքում: Նշված հետազոտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ աճող հատույցը պայմանավորված է ոչ թե ֆիզիկական, այլ մարդկային կապիտալի աճող հատույցով: Պարզապես, մարդկային կապիտալի աճող հատույցը հնարավոր է միայն ողջ տնտեսության կտրվածքով և երկար ժամանակահատվածի առումով: Բանն այն է, որ մարդկային կապիտալն օգտագործման ընթացքում ոչ միայն ինքնաճում է, կատարելագործվում, այլև փոխանցվում փորձի փոխանակման, վերապատրաստման և այլնի ձևով: Այսինքն՝ ապահովվում են լուրջ արտաքին դրական էքստերնալներ: Մարդկային կապիտալի աճող հատույցն ապահովվում է

[81] **Тодаро М. П.,** Экономическое развитие, перевод с англ. под ред. Яковлева С. М., Зевина Л. З., М., Экономический факультет МГУ, “ЮНИТИ”, 1997, стр. 95.

[82] **Romer P. M.,** Increasing returns and long-run growth, Journal of political economy, Vol. 94, No. 5. (Oct., 1986), p. 1002-1037.

նոր գիտելիքի համադրման, կուտակման, ներդրման և փոխանցման կառուցակարգերի միջոցով: Սակայն, նշված օրինաչափության դրսևորման համար անհրաժեշտ է գիտելիքի կուտակում որոշակի «կրիտիկական» սահմանի վրա, որը կառաջացնի տնտեսության թռիչքաձև զարգացում: Կարծում ենք՝ հենց դրանով էլ բացատրվում է աճող հատույցի փաստը տնտեսական աճի մոդելների փորձարկման ժամանակ: Ն.Դ. Կոնդրատևն իր «Տնտեսական շարժընթացի հիմնախնդիրները» աշխատության մեջ նշում է. «Ընդհանուր աճն ու և զարգացումն անշրջելի են, քանի որ դրանց հիմքում գիտելիքի կուտակման անընդհատ գործընթացն է, որի վրա որևէ տնտեսական իրադրություն էական ազդեցություն չի թողնում: Ընդհակառակը, գիտելիքի կուտակման ինտենսիվությունը պայմանավորում է տնտեսական իրադրությունը՝ լուծելով տնտեսության զարգացման փուլերի հիմնախնդիրները, նպաստում է, որ տնտեսությունը երբեք մեկ անգամից ավելի չլինի միևնույն մակարդակում կամ փուլում»[83]:

Որևէ անհատի մարդկային կապիտալը և դրանցից ստացվող հատույցը կարելի է պատկերել հետևյալ կերպ.



Գծապատկեր 2. ***Անհատական մարդկային կապիտալի հատույցի շարժընթացը***[84]

Գծապատկեր 2-ում OA հատվածը մարդկային կապիտալում կատարվող ներդրումների ժամանակահատվածն է՝ մինչև անհատի աշխատանքային տարիք մուտք գործելը, BC-ն՝ ակտիվ աշխատանքա-

[83] **Кондратьев Н. Д.,** Проблемы экономической динамики, М.,"Экономика", 1989, стр. 62.

[84] U. S. Bureau of the Census, 2001.


յին տարիքում ստացած եկամտի մեծությունը, CD-ն՝ թոշակի անցնելուց հետո ստացվող եկամուտը:

Եթե միավորենք առանձին անհատների մարդկային կապիտալում կատարված ներդրումները և դրանցից ստացվող եկամուտները, ապա երկրի մասշտաբով կստանանք մարդկային կապիտալի ներդրումներից եկամտի կախվածության ֆունկցիա, որն ըստ էության կարտահայտի աճող հատույց: Ընդ որում, այդ աճող հատույցի կորը կարող է ունենալ խզումներ, որոնք պայմանավորված են գիտելիքի կուտակմամբ, որը, հասնելով որոշակի կրիտիկական սահմանի, հանգեցնում է գիտատեխնիկական հեղափոխությունների: Նշենք, որ որոշ դեպքերում խզումներ կարող են առաջանալ նաև միկրոմակարդակում, երբ էական տարբերություն է առաջանում մարդկային կապիտալում կատարված ներդրումների և դրանցից ստացվող հատույցի միջև: Այսպես՝ Վան Գոգի, Գոգենի մարդկային կապիտալից ստացվող հատույցն իրենց կյանքի ընթացքում եղել է շատ չնչին (նրանց չի հաջողվել վաճառել իրենց կտավները): Այս համատեքստում մեծ հետաքրքրություն է ներկայացնում գիտելիքի կուտակման և դրա՝ գիտական հեղափոխության վերածման գործընթացի կորը՝ տնտեսական մեծ պարբերաշրջանների կորի համադրմամբ[85]: Այս հայեցակարգի շրջանակում ենթադրվում է, որ տեխնոլոգիական տնտեսական հայտնագործությունների, արտադրության նոր մեթոդների ներդրման հիմք են հանդիսանում գիտելիքի վճռորոշ զանգվածի ստեղծումը (գիտություն), տարածումը (կրթություն) և արդյունավետ կիրառումը:

Ընդ որում, գիտելիքի էքսպոնենցիալ աճը կամ գիտական հեղափոխությունը նախորդում է մեծ պարբերաշրջանի մեկնարկին առնվազն 20-25 տարով, այսինքն՝ դա տեղի է ունենում կոնդրատևյան, նախորդ ցածրացող պարբերաշրջանի սկսելու ժամանակ, երբ սպառվում են ինքնավար ներդրումները: Եթե տնտեսական իրադրության մեծ պարբերաշրջանների ավարտից հետո սկսվում է ավելի բարձր մակարդակի պարբերաշրջան, բայց նվազում են չվերարտադրվող ռեսուրսները, ապա գիտելիքի ռեսուրսները՝ ընդհակառակը, մեծանում են: Նախորդ ժամանակահատվածի գիտելիքը ստանում է

[85] **Վարդանյան Գ. Ի.,** Գիտելիքահենք տնտեսություն, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն», 2008, էջ 137:

նոր կիրառություն և նպաստում նոր գիտելիքի ստեղծմանը, որի արդյունավետ կիրառության համար անհրաժեշտ է լուրջ ներդրումներ իրականացնել մարդկային կապիտալում՝ նոր պահանջներին համապատասխանեցնելով ողջ կրթական համակարգը, ապահովելով ներդրումների համապատասխան խթաններ (ընտանիքի, կազմակերպության մակարդակով), ստեղծելով անհրաժեշտ նախադրյալներ մարդկային կապիտալի արդյունավետ իրացման համար: Այս շղթայի որևէ բաղադրիչի «անտեսումը» կարող է խախտել նոր գիտելիքի սինթեզման գործընթացը: Այս գործընթացների արդյունավետությունը, ըստ էության, ապահովում է մարդկային կապիտալից աճող հատույց, քանի որ հենց մարդկային կապիտալն է գիտելիք ստեղծողը, տարածողը և ներդրողը:



Գծապատկեր 3. ***Տնտեսական մեծ պարբերաշրջանները և գիտական հեղափոխությունները***[86]

[86] Նույն տեղում, էջ 139:

Ըստ էության, նոր տնտեսությունում սկզբունքորեն վերափոխվում է տնտեսական աճի տրամաբանությունը: Առողջապահության, կրթության, սոցիալական սպասարկման, նորարարական ծառայությունների ուղղությամբ կատարվող ծախսերի ծավալի և որակի աճն առաջ է բերում մարդկային կապիտալի որակական աճ, ինչն էլ, իր հերթին, նպաստում է հետագա տնտեսական աճին:

4. Մարդկային կապիտալի ձևավորման գործընթացում առաջանում է «սիներգետիկ փոխներգործության էֆեկտ», երբ ուսման գործընթացում որակապես բարելավվում են ոչ միայն ուսումնառողի մտավոր ունակությունները, այլև ուսուցանողի կարողությունները:

5. Մարդկային կապիտալում կատարվող ներդրումների բնույթի և տեսակների վրա էական ազդեցություն են թողնում երկրի պատմական, ազգային, մշակութային առանձնահատկություններն ու ավանդույթները: Այսպես՝ երեխաների մասնագիտական ընտրությունը, ուսում ստանալու ցանկությունը մեծապես կախված են նրանց կրոնական, էթիկական պատկերացումներից, ընտանեկան ավանդույթներից, ծնողների կրթական մակարդակից և այլն:

6. Մարդկային կապիտալում կատարվող ներդրումները կապիտալի մյուս տեսակների համեմատությամբ առավել արդյունավետ են և՛ որոշակի անհատի, և՛ ողջ հասարակության տեսանկյունից[87]: Այսինքն՝ մարդկային կապիտալից ստացվող հատույցի նորման գերազանցում է ֆիզիկական կապիտալից ստացվող հատույցի նորման:

7. Եթե ֆիզիկական կապիտալում կատարվող ներդրումները պայմանավորված են միայն տնտեսական խթաններով, ապա մարդկային կապիտալում կատարվող ներդրումներն իրականացվում են ոչ միայն տնտեսական խթանների ազդեցության ներքո: Դրանք կապված են ինքնազարգացման ձգտման, ինքնապաշտպանության բնազդի, հոգեբանական և սոցիալական այլ պահանջմունքների հետ:

8. Որոշ տնտեսագետներ առանձնացնում են նաև «բացասական մարդկային կապիտալ ներդրումներ» հասկացությունը, որի տակ հասկացվում են այն ներդրումները, որոնք չեն նպաստում տնտեսական աճին և չեն ապահովում դրական հատույց[88]: Բացասական

---

[87] **Дятлов С. А.,** Основы теории человеческого капитала, учебное пособие, СПб., изд-во СПбУЭФ, 1994, стр. 30.

[88] **Корчагин Ю. А.,** Российский человеческий капитал, фактор развития или деградации?, Воронеж, 2005, стр. 36.

մարդկային կապիտալի դրսևորումներ են հանցագործությունները, կոռուպցիան, ազգային մենթալիտետի փոփոխությունը բացասական ուղղությամբ և այլն:

2.2. Մարդկային կապիտալում ներդրումների դերն ու նշանակությունը հետարդյունաբերական տնտեսությունում

Յուրաքանչյուր հասարակության գլխավոր հարստությունը մարդն է, հետևաբար՝ սոցիալ-տնտեսական զարգացման վերջնական չափանիշ պետք է համարել վերջինիս զարգացման մակարդակն ու նրա պահանջմունքների բավարարման աստիճանը:

Ժամանակակից աշխարհում տեխնոլոգիական զարգացման անընդհատ տեմպերը լուրջ վերափոխումներ են առաջացրել բոլոր ոլորտներում՝ պայմանավորելով վերարտադրության ողջ գործընթացում մարդու տեղի և դերի վերաիմաստավորման անհրաժեշտությունը: Դա արտահայտվում է մարդու ստեղծագործական ունակությունների առավել խոր ուսումնասիրման և դրանց ակտիվացման ուղիների փնտրման նկատմամբ տնտեսագիտության հետաքրքրության աճով:

Աստիճանաբար անցում է կատարվում հասարակական կյանքի գնահատման «մարդակենտրոն» չափանիշներին, ինչը, իր հերթին, պահանջում է առողջապահության, կրթության, մշակույթի և մարդու վերարտադրությունն ապահովող այլ ոլորտների դերի վերիմաստավորում: Այս համատեքստում կարևոր նշանակություն է ստանում «մարդկային կապիտալ» եզրույթի ուսումնասիրությունը, որը հնարավորություն է տալիս այլ տեսանկյունից ուսումնասիրելու ու գնահատելու շուկայական տնտեսության շատ երևույթներ:

Բազմաթիվ տնտեսագետների կարծիքով՝ մարդկային կապիտալի հայեցակարգը կենտրոնական տեղ է զբաղեցնում ժամանակակից տնտեսագիտության մեջ: Այն այնպիսի կարևորագույն տնտեսական հիմնախնդիրների հետազոտության նոր հնարավորություններ է ընձեռում, ինչպիսիք են տնտեսական աճը, եկամուտների բաշխումը, կրթության դերը մարդկային կապիտալի վերարտադրության մեջ, աշխատանքի շահադրդվածությունը (մոտիվացիա) և այլն: Աստիճա-

նաբար ամրապնդվում է կարծիքն այն մասին, որ մարդկային կապիտալը ժամանակակից հասարակության առավել արժեքավոր ռեսուրս է՝ առավել արժեքավոր, քան բնական ռեսուրսներն ու կուտակած ֆիզիկական կապիտալը: Ամերիկացի հետազոտող Ջ. Գրեյսոնը նշում է. «Հենց մարդկային կապիտալն է տնտեսական աճի, երկրի մրցունակության և տնտեսական արդյունավետության հիմնաքարը, այլ ոչ թե գործարանները,

սարքավորումներն ու արտադրական պաշարները»[89]: Ուստի, նրա համոզմամբ, արդեն ժամանակն է սովորելու քանակապես գնահատել այդ հարստության արժեքը, քանի որ հենց գնահատման փաստն ինքնին նպաստում է կազմակերպությունների ղեկավարների հայացքների վերափոխմանը, որոնք մարդկային կապիտալը որպես ծախս ընկալելու փոխարեն՝ սկսում են այն դիտարկել իբրև կազմակերպության ակտիվ, որն անհրաժեշտ է ճիշտ օգտագործել: Ջ. Գրեյսոնի պնդմամբ՝ այն հասարակությունը, որը չի գիտակցի մարդու զարգացմանն ուղղվող ծախսերի անհրաժեշտությունը, հետ կմնա մյուսներից[90]:

Ժամանակակից տնտեսությունը բնութագրվում է յուրահատուկ շարժունակությամբ և դրանում ծավալվող գործընթացների չափազանց բարդությամբ: Տնտեսական կապերի բարդությունն ու բազմազանությունը, կառավարման նոր ձևերի ներդրումն ու սոցիալ-հոգեբանական գործոնների դերի նշանակության մեծացումը նոր պահանջներ են ներկայացնում տնտեսագիտությանը: Տնտեսավարման ավանդական շուկայական կառուցակարգը նոր բովանդակություն է ձեռք բերում՝ պայմանավորված գիտատեխնիկական և տեղեկատվական հեղափոխություններով: Ներկայում աշխարհի առավել զարգացած երկրներն անցում են կատարել դեպի նոր տիպի հասարակություն՝ հետարդյունաբերական կամ տեղեկատվական: Ամերիկացի սոցիոլոգ Է. Տոֆլերի 1980 թ. հրատարակված «Երրորդ ալիք»[91] աշխատությունում նախանշվում էին գիտատեխնիկական առաջընթացի երրորդ ալիքը և սպասվող բնապահպանական հիմնախնդիրները: Հետարդյունաբերական հասարակության գաղափարներն ակտիվորեն

---

[89] **Грейсон Дж., О' Делл К.,** Американский менеджмент на пороге XX века**,** М., "Экономика", 1991, стр. 196.

[90] Նույն տեղում, էջ 195:

[91] **Toffler A.,** The Third Wave, N. Y., William Morrow & Company, 1980, p. 544.

զարգացրել է ամերիկացի սոցիոլոգ Դ. Բելը: «Հետարդյունաբերական հասարակություն» աշխատության մեջ նա նշել է, որ արդյունաբերական հասարակության ժամանակներն արդեն անցյալում են, և տնտեսական առաջընթացի գլխավոր գործոնն այսօր տեղեկատվական (ինֆորմացիոն) տեխնոլոգիաներն են: Առաջավոր տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնվող ինֆորմացումն ընդգրկում է հասարակության գրեթե բոլոր ոլորտները՝ լուրջ որակական փոփոխություններ առաջացնելով դրանցում: Ծագում է հասարակության նոր սոցիալական միջավայր, նոր վիճակ: Նշված գործընթացները հետարդյունաբերական հասարակության ծագման կարևոր գործոններ են, բայց վերջինիս գոյության գլխավոր առանձնահատկությունը երրորդ տեխնոլոգիական հեղափոխությունն է, որն առաջին պլան է մղում գիտելիքների և ինֆորմացիայի արտադրությունը[92]:

Ի տարբերություն բնականի, տեղեկատվական ռեսուրսները յուրահատուկ են, վերարտադրվող և կուտակվող: Եվ եթե արտադրության մեջ էներգիայի, հումքի, նյութերի կիրառումը հանգեցնում է վերջիններիս ֆիզիկական սպառմանը, ապա տեղեկության (կամ գիտելիքի) օգտագործումը տալիս է միանգամայն այլ արդյունք և նպաստում գիտելիքի կուտակման, շրջակա միջավայրի կազմակերպվածության մակարդակի բարձրացմանը: Իհարկե, խոսքն այստեղ, այսպես ասած, «դրական մարդկային կապիտալում» մարմնավորված գիտելիքի մասին է, որն առավել մանրամասն կքննարկվի գրքի հետագա բաժիններում:

Հետարդյունաբերական հասարակությունը զարգանում է տեսական գիտելիքի հենքի վրա: Համապատասխան հայեցակարգի հիմնադիր Դ. Բելի այս դրույթն այսօր կասկածի տեղիք չի տալիս: Նոր տնտեսությունը ներկայում ոչ այնքան տեղեկատվական բնույթի է, որքան գիտելիքի վրա հիմնված: Ժամանակակից հասարակության կարևոր ռեսուրս է ոչ թե տեղեկությունը, որպես հարաբերականորեն օբյեկտիվ երևույթ, այլ գիտելիքը, այսինքն՝ մարդու յուրացրած տեղեկությունը, որը գոյություն չունի նրա գիտակցությունից դուրս: Այս կապակցությամբ տնտեսագետների շրջանում գոյություն ունեն տարբեր կարծիքներ: Քննարկվում է այն հարցը, թե արդյոք գիտելիքահենք

[92] **Bell D.,** The Comind of Post-Industrial Society: A Venture in Social Forecasting, N. Y., 1973, p. 507.

հասարակությունը հասարակության զարգացման որակական նոր փուլ է, թե արդյունաբերության հասարակության զարգացման հերթական փուլ: Տնտեսագետների մի մասն այն կարծիքին է, որ գիտելիքահենք տնտեսությունն էականորեն տարբերվում է արդյունաբերականից, որտեղ հարստության կուտակումը պայմանավորված էր նյութական ակտիվներով: Ներկայում հարստության կուտակումը կապված է ոչ նյութական ակտիվների, մասնավորապես՝ գիտելիքի, նորարարության, տեղեկատվական տեխնոլոգիաների և այլնի հետ:

Տնտեսագետների մեկ այլ խումբ կարծում է, որ գիտելիքահենք տնտեսությունն ընդամենը արդյունաբերականի զարգացման հաջորդ փուլն է, և բարեկեցությունը կախված է նյութական ակտիվներից, իսկ ոչ նյութական ակտիվները բարձրացնում են երկրի մրցունակության աստիճանը[93]:

Անկախ նշված մոտեցումների միջև եղած տարբերություններից, առավել կարևորն այն է, որ երկու դեպքում էլ առանձնակի ուշադրություն են արժանանում մարդկային կապիտալի և այնպիսի ենթակառուցվածքների ստեղծման գործոնները, որոնք նպաստում են գիտելիքի և փորձի զարգացմանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված միտումները գլոբալ բնույթի են, ինչպես նաև գիտելիքի յուրացման և ստեղծման գործընթացներից հետ մնալը լուրջ վտանգ է ներկայացնում երկրների գիտատեխնոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից, ներկայացնենք գիտելիքահենք տնտեսության առավել էական առանձնահատկությունները:

Առաջին, գիտելիքը, որպես յուրահատուկ ապրանք, դիսկրետ բնույթ ունի: Որևէ կոնկրետ գիտելիք կա՛մ բացահայտված է (ստեղծված է), կա՛մ ոչ: Հնարավոր չէ գիտելիքի մի մասը ներկայացնել փորձարկման, որպեսզի հետո վաճառվի դրա մյուս մասը: Նոբելյան մրցանակակիր Ջ. Ստիգլիցը նշում է. «Ինչպե՞ս կարող եմ վաճառել գիտելիք: Ես պետք է հայտնեմ որևէ բան, ինչը դուք չգիտեիք մինչ այդ: Իսկ դա նշանակում է, որ ես ձեզ անվճար տրամադրում եմ իմ սեփականության մի մասը: Գործնականում գիտելիքի և տեղեկատվության շուկան սկզբունքորեն տարբերվում է այլ ապրանքների և

[93] OECD (2001) Science, Technology and Industry Scoreboard 2001, Towards a knowledge-based economy, **Махлуп Ф.,** Производство и распространение знаний в США, М., "Прогрес", 1966, стр. 464.

ծառայությունների շուկայից և կախված է գիտելիք, տեղեկություն ստեղծողի հեղինակությունից և նրա նկատմամբ ունեցած վստահությունից»[94]: Գիտելիքի դիսկրետ բնույթը հարցադրումներ է առաջացնում՝ կապված այն բանի հետ, որ շուկայական կառուցակարգը գիտելիքի տնտեսության համար կարող է նույնքան արդյունավետ լինել, որքան արդյունավետ է ավանդական ապրանքների համար: Որոշ տնտեսագետների աշխատություններ (Վ.Ի. Դանիլովա, Գ.Ա. Կոշևոյ, Ա.Ի. Սուրիկովա)[95] վկայում են այն մասին, որ բաժանելի ապրանքների համար ստացված հիմնական արդյունքները կիրառելի են (ընդունելի են) նաև դիսկրետ ապրանքների համար: Այս հեղինակները մշակել են հատուկ մաթեմատիկական գործիքավորում՝ դա կիրառելով դիսկրետ ապրանքների համար:

Երկրորդ, գիտելիքի, տեղեկության առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ դրանք, ըստ էության, նման են այլ հասարակական բարիքների, քանի որ հասանելի են բոլորին՝ առանց որևէ բացառության: Տ. Ստյուարտն այս առումով նշում է. «Իմ կողմից որևէ գիտելիքի ձեռքբերումը որևէ կերպ չի նվազեցնում այդ նույն գիտելիքի ձեռքբերման ձեր հնարավորությունը, ինչը չես ասի, օրինակ, պաղպաղակի մասին»[96]: Բացի այդ, Տ. Ստյուարտը գիտելիքը բնորոշել էր որպես հասարակական բարիք՝ ելնելով ավանդական ռեսուրսների և գիտելիքի միջև եղած կարևոր տարբերությունից, այն է՝ օգտագործման արդյունքում գիտելիքը չի նվազում: Գիտելիքը կարող է միաժամանակ օգտագործվել երկրագնդի տարբեր մասերում, տարբեր սուբյեկտների կողմից: Դա, ըստ էության, «քվանտային մասնիկների նման» կարող է գտնվել մի քանի տեղում միաժամանակ»[97]: Սակայն, գիտելիքն ու տեղեկությունը կախվածություն ունեն ժամանակի գործոնից և արժեքավոր են միայն որոշակի ժամանակահատվածում կամ միայն որևէ իրադարձությունից առաջ, որից հետո դրանք կարող են

---

[94] **Аткинсон Э. Б., Стиглиц Д.Э.,** Лекции по экономической теории государственного сектора, “Аспект пресс”, 1995, стр. 832.

[95] **Danilov V. J.,** Discrete Convexity and Equilibria in Economics with Indivisible Goods and Money. RIMS Preprint No. 1300, Kyoto University, October 2000, p. 28.

[96] **Стюарт Т.,** Интеллектуальный капитал новый источник богатства организаций. Новая постиндустриальная волна на Западе, Антология, под. ред. В. Л. Иноземцева, М., 1999, стр. 389.

[97] Նույն տեղում, էջ 390:

արժեզրկվել: Այսպես՝ որևէ մրցույթի անցկացման պայմանների մասին տեղեկությունն արժեքավոր է մինչև այդ մրցույթի անցկացումը: Բնության օբյեկտիվ օրենքների մասին գիտելիքը հավաստի ու արժեքավոր է միայն այնքան ժամանակ, քանի դեռ նոր հետազոտությունների արդյունքում չի ստացվել նոր գիտելիք: Կարծում ենք՝ գիտելիքի արժեքավորությունը կախված չէ ժամանակից, քանի որ ճանաչողության գործընթացը ենթադրում է անցում հարաբերականից դեպի բացարձակ ճշմարտություն: Մեր գիտելիքը, ըստ էության, վերջնական չէ, այլ հարաբերական, և հասարակության պատմական զարգացման յուրաքանչյուր փուլում մարդկությունը բացահայտում է բացարձակ ճշմարտության տարրեր: Ու անգամ մոլորությունները, երբեմն, ճանապարհ են հարթում բացարձակ ճշմարտության բացահայտման համար:

Հետևաբար՝ մեր գիտելիքն ու ճանաչողությունը ներկայացնում են բացարձակ և հարաբերական ճշմարտության միասնություն: Եվ այս համատեքստում կարևորվում է գիտելիքի կուտակվելու հատկությունը: Բայց, այնուամենայնիվ, անժխտելի է այն փաստը, որ գիտելիքի որոշ տեսակների բարոյական մաշվածության տեմպն ավելի բարձր է, քան ավանդական ռեսուրսներինը՝ կապված վերջին տասնամյակների գլոբալ գործընթացների հետ:

Երրորդ, գիտելիքը, ըստ էության, տեղեկատվական ապրանք է: Տեղեկությունն օգտագործումից հետո չի ոչնչանում, ինչպես սովորական ապրանքը: Թոմաս Ջեֆերսոնն ասում էր (1813 թ.). «Նա, ով ինձնից ստանում է գաղափար, օգտվում է դրանից՝ չաղքատացնելով ինձ, ինչպես որ իմ մոմից լույս ստացողը խավարի մեջ չի թողնում ինձ»[98]: Գիտելիքն արտադրության և սպառման ընթացքում ոչ թե նվազում, այլ աճում է, կուտակվում: Ու թեև դա տեղեկատվական ապրանք է, այնուամենայնիվ, էական տարբերություններ կան դրա և տեղեկության միջև: Ջ. Հոջսոնն այդ տարբերությունը հետևյալ կերպ է մեկնաբանում. «Տեղեկությունը մեկնաբանված տվյալների ամբողջություն է, որին որոշակի իմաստ է հաղորդվել: Իսկ գիտելիքը տեղեկության օգտագործման արդյունք է»[99]: Մ. Կաստելսը գիտելիքը բնո-

[98] https://ru.wikiquote.org/wiki/.

[99] **Ходжсон Дж.,** Социально-экономические последствия прогресса знаний и нарастания сложности, "Вопросы экономики", 2001, N 8, стр. 31-44.

րոշում է որպես փաստերի կամ գաղափարների մասին դատողությունների ամբողջություն կամ գիտափորձի արդյունք, որը համակարգված տեսքով փոխանցվում է ուրիշներին՝ հաղորդակցության որևէ միջոցի շնորհիվ[100]: Ամերիկացի սոցիոլոգ Ռ. Կրոուֆորդը մարդկային հասարակության զարգացման գործընթացում առանցքային տեղ է հատկացնում գիտելիքին՝ ժամանակակից հասարակությունը բնութագրելով որպես գիտելիքի հասարակություն: Ընդ որում, նա նշում է. «Գիտելիքը գործունեության որևէ կոնկրետ տեսակում տեղեկություն կիրառելու ունակությունն է»[101]: *Բայց գիտելիքն ավելի լայն հասկացություն է, քան տեղեկությունը: Ըստ էության, յուրաքանչյուր գիտելիք տեղեկություն է, բայց ամեն մի տեղեկություն գիտելիք չէ: Ինչպես տեղեկությունն է «ծնվում» տվյալներից, այնպես էլ գիտելիքն է ծնվում տեղեկությունից: Համեմատելով, համադրելով և գնահատելով տեղեկությունը՝ սինթեզվում է գիտելիք:*

Առանձնացնում են նաև «ակնհայտ գիտելիք» և «ոչ ակնհայտ գիտելիք» հասկացությունները[102]: Ակնհայտ (էքսպլիցիտ) գիտելիքը կարող է արտահայտվել բառերով, թվերով և փոխանցվել համապատասխան կրիչների միջոցով: Ոչ ակնհայտ գիտելիքն անձնավորված է՝ անխզելիորեն կապված լինելով իր կրողի հետ: Այն բաղկացած է հմտություններից և մենթալ մոդելներից, որոնք անձը կիրառում է այս կամ այն իրավիճակում: Ոչ ակնհայտ գիտելիքը կապված է փորձի հետ՝ արտահայտվելով մարդկանց հմտությունների, ունակություններ և հնարավորությունների մեջ: Ակնհայտ և ոչ ակնհայտ գիտելիքի կրող կարող է լինել ոչ միայն անհատը, այլև կազմակերպությունը: Ոչ ակնհայտ (տացիտային) խմբային գիտելիքը կոլեկտիվ գործողության մոդելների հիմքում է: Արևմտյան գրականության մեջ ոչ ակնհայտ խմբային գիտելիքի բնորոշման համար օգտագործվում է «հնասովորույթ»[103] հասկացությունը, որը ներկայացնում է միատեսակ կրկնվող

---

[100] **Кастельс М.,** Информационная эпоха: экономика, общество и культура, под ред. Шкаратана О. И., М., "Знания", 2000, стр. 237.

[101] **Crawford R.,** In the Era of Human Capital: The Emergence of Talent, Intelligence, and Knonledge as the Worldwide Economic Force and What it Means to Managers and Investors, New York, Harper Business, 1991, p. 256.

[102] **Полани М.,** Личностное знание, М., 1985, стр. 344.

[103] **Ричард Нельсон Р., Сидней Дж. Уинтер,** Эволюционная теория экономических изменений, Москва, "Дело", 2002, стр. 179.

գործողություններ, կազմակերպության կանոնավոր կերպով կրկնվող վարքագծային կաղապարներ: Միապաղաղ (ավտոմատ) գործողություններն իրականացվում են ավտոմատ կերպով՝ առանց հրահանգների, ինչպես նաև ընտրության գործընթացի բացակայության պայմաններում: Ընդ որում, դրանք չեն կարող կոդավորվել: Առևտրային կազմակերպությունների վերաբերմունքն ակնհայտ և ոչ ակնհայտ գիտելիքի նկատմամբ երկակի է: Մի կողմից շատ կազմակերպություններ ձգտում են ոչ ակնհայտ գիտելիքը վերածելու ակնհայտի, որպեսզի նվազեցնեն կազմակերպության կախվածությունը որոշակի անհատներից, ինչպես նաև հնարավոր դարձնեն նշանակալի ձեռքբերումների փոխանցումն այլ աշխատակիցների, իսկ մյուս կողմից՝ նրանք շահագրգռված չեն իրենց մրցակցային առավելությունները վերածելու կրկնօրինակման հարմար ձևի: Ուստի շատ կազմակերպություններ ձգտում են իրենց մրցակցային առավելությունները պահպանել ընդօրինակման համար անհասանելի ձևով (կորպորատիվ մշակույթ, ավանդույթներ, ուսուցման ձևեր և այլն*): Ըստ էության, մեզոմակարդակում տացիտային (ոչ ակնհայտ) գիտելիքի փոխանցման և պահպանման կառուցակարգի կարևոր օղակ է կազմակերպության սոցիալական կապիտալը, որը դժվար է կրկնօրինակել*:

Ինտելեկտուալ կապիտալի տեսության կողմնակիցները գիտելիքի կարևոր առանձնահատկություն են համարում այն, որ գիտարար ապրանքների և ծառայությունների ինքնարժեքի կառուցվածքն էականորեն տարբերվում է այլ ապրանքների ինքնարժեքի կառուցվածքից[104]: Դրանց ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում նախապատրաստական փուլին, այսինքն՝ առաջին օրինակի պատրաստման ինքնարժեքն անհամամասնորեն մեծ է մյուս օրինակների պատրաստման ինքնարժեքից: Որքան ոչ շոշափելի է արտադրանքը և մոտ «զուտ գիտելիքին», այնքան մեծ է խզումը նախապատրաստական փուլի և սահմանային ծախսերի միջև:

Գիտելիքահենք տնտեսության պայմաններում գնալով ավելի մեծ ուշադրություն է դարձվում գիտելիքին: Վերջինս դիտարկվում է որպես տնտեսական կարևորագույն ռեսուրս և կարող է դրսևորվել և՛

[104] **Стюарт Т.,** Интеллектуальный капитал. Новый источник богатства организаций, Новая постиндустриальная волна на Западе, под. ред. Иноземцева В. Л., М., 1999, стр. 391.

որպես պաշար, և՛ որպես արդյունք: Ագրարային տնտեսությունում տնտեսական գործունեությունն առավելապես կապված է եղել սննդամթերքի բավարար քանակությամբ արտադրության հետ, իսկ որպես արտադրության վճռորոշ գործոն հանդես է եկել հողը: Արդյունաբերական տնտեսությունում տնտեսական գործունեությունը հիմնականում արդյունաբերական նշանակության ապրանքների արտադրությունն է, իսկ վճռորոշ գործոնը՝ կապիտալը: Տեղեկատվական տնտեսությունում տնտեսական գործունեությունը նախևառաջ տեղեկության արտադրությունն ու կիրառությունն է՝ արտադրության այլ ձևերն առավել արդյունավետ դարձնելու և ավելի շատ նյութական հարստություն ստեղծելու համար: Այս համատեքստում արտադրության վճռորոշ գործոն է դառնում գիտելիքը, որն էլ հենց «արժեքի աղբյուր»[105] է:

Քանի որ, պատմական տեսանկյունից, գիտելիքն արտադրության վճռորոշ գործոնի դեր սկսել է խաղալ համեմատաբար վերջին տասնամյակներում, ուստի այդ գործընթացի յուրահատկությունը շարունակում է մնալ տնտեսագետների, հոգեբանների և սոցիոլոգների ուսումնասիրության կենտրոնում: Ի տարբերություն այլ ռեսուրսների, որոնց օգտագործման օրինաչափությունները բավական խորությամբ ուսումնասիրված են, տեղեկությունը և գիտելիքը, որպես յուրօրինակ ռեսուրսներ, դեռևս լուրջ ուսումնասիրության կարիք ունեն: Գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմնական առանձնահատկությունն այն է, որ այստեղ առաջընթացի շարժիչ ուժ է մարդկային կապիտալում մարմնավորված գիտելիքը: Մարդկային ունակությունները դիտարկվում են և՛ որպես արտադրության գործոն, և՛ որպես արտադրության արդյունք: Նման տնտեսության զարգացման գործընթացի բուն էությունը մարդկային գիտելիքների, հմտությունների, ունակությունների պաշարի աճի մեջ է: Ինչպես Ի. Ա. Ստրելեցն է նշում. «Նոր տնտեսությունը չի փոխարինում և չի կազմալուծում «հին» տնտեսությունը, այլ պարզապես ստիպում է մտածել փոփոխվող աշխարհի նոր հիմնախնդիրների մասին: Նոր տնտեսությունը միջգիտակարգային երևույթ է, որը համապատասխանում է ժամանակակից հասարակության

[105] **Иноземцев В. Л.,** Диалектика стоимости в постиндустриальном обществе, "Мировая экономика и международные отношения", 1998, N 6., стр. 332.

պայմանական (կոնվենցիալ) տրամաբանությանը»[106]:

Գիտելիքի վրա հիմնված տնտեսության հաջորդ առանձնահատկությունն այն է, որ վերջինս օգտագործում է տեղեկատվական ռեսուրսներ, որոնք ունեն մի շարք յուրահատուկ հատկանիշներ ըստ որոնց տարբերվում են ավանդական ռեսուրսներից: Այդ տարբերությունները ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ 3

Տեղեկատվական ռեսուրսի հատկությունները[107]

Ավանդական ռեսուրս	***Տեղեկատվական ռեսուրս***
Նյութական պաշարներ և հոսքեր	Ոչ նյութական պաշարներ և հոսքեր
Օգտագործման ընթացքում նվազում են	Օգտագործման ընթացքում աճում են
Մասնավոր բարիք	Հասարակական բարիք
Սահմանափակ է	Անսահմանափակ է
Կրկնօրինակվում է մեծ ծախսերի շնորհիվ	Կրկնօրինակվում է փոքր ծախսերի շնորհիվ
Նվազող սահմանային արտադրողականություն	Ցանցային էֆեկտներ և աճող սահմանային օգտակարություն

Գիտելիքի վրա հիմնված տնտեսությունում սեփականության հարաբերությունների կարգավորման գործիք է դառնում նաև հեղինակային իրավունքի ինստիտուտը, որը մտավոր ապրանքը հասարակական բարիքից վերափոխում է մասնավորի, որի համար սպառողները պետք է վճարեն:

Գիտելիքը, ի տարբերություն այլ նյութական արժեքների, անբաժանելի է անհատից, ուստի տեղեկատվական հասարակությունում մեծանում է անհատի դերը, ընձեռվում են սոցիալական տարբերությունների համահարթման լայն հնարավորություններ, տեղի է ունենում բիզնեսի և հասարակության հումանիզացում (մարդացում): Միաժամանակ, առաջանում է սոցիալական շերտավորման նոր տեսակ՝ հիմնված ոչ թե դասակարգային, այլ ինտելեկտուալ տարբերությունների վրա: Նոր տնտեսությունը գերմանացի սոցիոլոգ Ու. Բեկը

---

[106] http://www.alleng.ru/d/econ/econ030.htm.

[107] Աղյուսակը կազմել է հեղինակը՝ օգտագործելով հետևյալ աղբյուրը՝ **Иноземцев В. Л.,** Современное постиндустриальное общество: природа, противоречия, перспективы, учеб. пособие для студентов вузов, М., “Логос”, 2000, стр. 304.

բնորոշում է որպես «ռիսկի հասարակություն»: Ու. Բեկի առաջ քաշած գաղափարն ընդգծում է ժամանակակից դարի հակասական բնույթը, որը, բարիքների արտադրության աճին զուգահեռ, բերում է նաև նոր ռիսկեր (հանցագործության աճ, բնապահպանական հիմնախնդիրներ, ընտանիքների քայքայում և այլն), որոնցից շատերը զգայարաններով չեն ընկալվում, այլ իմաստավորվում են միայն գիտելիքի միջոցով: Այդ ռիսկերը չունեն կոնկրետ մեղավորներ, այլ կոլեկտիվ անպատասխանատվության հետևանք են: Գիտության դերը նոր տնտեսությունում եռակի է՝ որպես ռիսկերի գլխավոր առաջացնող, գնահատող ու չեզոքացնող: Այսպիսով՝ Ու. Բեկը նկատում է, որ մարդն ընկնում է նոր կախվածության մեջ, այն է՝ կախվածություն գիտությունից, քանի որ առանց դրա նա չի կարող գնահատել և, առավել ևս, չեզոքացնել ռիսկերը[108]:

Մ. Կաստելսը կարծում է, որ տեխնոլոգիաների մասին չի կարելի դատել ըստ «լավ» կամ «վատ» կատեգորիաների, քանի որ դրանք կախված են մեր օգտագործման եղանակից[109]: Բայց չի կարելի չնկատել, որ բարիքների արտադրության և սպառման գործընթացները երբեմն ուղեկցվում են անկանխատեսելի արտաքին էֆեկտներով, որոնք կարող են լինել ոչ միայն դրական, այլև բացասական: Նշենք այդ հնարավոր հետևանքներից մի քանիսը.

1. «Առաջանցիկ վարկավորման» էֆեկտ, որի էությունն այն է, որ նորամուծությունները ֆինանսական մեծ ներդրումներ են պահանջում, և նոր նախագծերի ֆինանսավորումը սկսվում է մինչև հների ամբողջական հետգնումը՝ հանգեցնելով տնտեսական անհավասարակշռության և չմարված վարկերի աճի:

2. Քողարկված վտանգներ և ռիսկեր՝ պայմանավորված շրջակա միջավայրի աղտոտմամբ, գենետիկորեն մոդիֆիկացված սննդի արտադրությամբ, համացանցային հանցագործություններով և այլն: Ինչպես Լ. Կաասն է նշում. «Ծնելիությունը սահմանափակող դեղամիջոցները, հիշողությունը ջնջող հնարքները, նոր ծագող կյանքի գենետիկական հատկանիշների ընտրությունը, օպտիմալ երեխաների և կատարյալ մարմնով մարդկանց ստեղծման փորձերը ոչ այլ ինչ են,

---

[108] **Бек У.,** Общество риска, На пути к другому модерну, пер. с нем, М., “Прогресс традиция”, 2000, стр. 384.

[109] **Кастельс М.,** Галактика Интернет, размышление об интернете, бизнесе, обществе, Екатеринбург, “Фактория”, 2004, стр. 328.

քան մարդկությունը հոմոգենացնելու փորձեր»[110]:

3. Մասնագիտական անկայունություն, որը դրսևորվում է երկարաժամկետ զբաղվածության երաշխիքների բացակայությամբ, անպաշտպանվածության զգացումով: Նորարարությունների «հոսքի» ներքո արագորեն վերափոխվում է տնտեսության կառուցվածքը, և շատ կարևոր է, որ զբաղվածության բնույթը «հասցնի» վերափոխվել տեխնոլոգիաների առաջընթացին համարժեք: Էականորեն վերափոխվում է նաև աշխատանքային գործընթացների բովանդակությունը:

4. «Սպառման ծուղակ», որի էությունն այն է, որ «նոր տնտեսությունում» առկա է սպառման պաշտամունք: Այդ տնտեսությունն արդյունավետ է միայն շարունակական սպառման պայմաններում, քանի որ շատ ապրանքներ բարոյապես մաշվում են արդեն խանութից դեպի տուն ընկած ճանապարհին: Նորարարական տնտեսությունն անընդհատ բավարարում և միաժամանակ ծնում է նոր պահանջմունքներ: Գովազդի միջոցով սպառողական «տենչանք» առաջացնելով՝ նման տնտեսությունը կարող է առաջ բերել սպառողական պսիխոզ և գաջետոմանիա, որոնք համարվում են հոգեբանական շեղումներ: «Սպառողական ծուղակի» զոհ են դառնում սովորաբար միջին խավի ներկայացուցիչները[111]:

5. Շատ նորարարական ապրանքներ ձախողվում են շուկայում: Այստեղ գործում է «շավիղի էֆեկտը» («Эффект колеи» կամ «QWERTY» էֆեկտ), երբ նվազ արդյունավետ տեխնոլոգիան երբեմն հայտնվում է ավելի շահեկան շուկայական դիրքում: Ինստիտուցիոնալ տեսանկյունից, «QWERTY» էֆեկտն արտացոլում է շուկայի անկատարությունն այն իմաստով, որ արտադրողների՝ տվյալ պահի շահերը վեր են դասվում սպառողների նախասիրություններից և շահերից:

6. «Գաղափար-իրացում» շղթայի խզման էֆեկտ, երբ ներդրումների սակավությունը հանգեցնում է նորարարությունների «ոչ պիտանելիության»:

7. ՀՆԱ աճի տեմպի դանդաղման էֆեկտ, որը երբեմն անվանում են «արտադրողականության պարադոքս»: Ամերիկացի տնտեսագետ,

---

[110] **Каас Л. Р.,** Нестареющая тема, счастливые души. Биотехнологии в погоне за совершенством, перевод с англ., Вызов познанию: Стратегии развития науки в современном виде, М., "Наука", 2004, стр. 282-308.

[111] **Захарова Т. В.,** Изучение побочных эфектов «постоянно новой экономики», "Вестник томского государственного университета", N 1 (9), 2010, стр. 22.

Նոբելյան մրցանակակիր Ռ. Սոլոուն դեռևս 1980-ական թթ.-ին է նկատել, որ տնտեսական վիճակագրությունը լիարժեքորեն չի արտացոլում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը: Այս երևույթը ստացել է «Սոլոուի պարադոքս» անվանումը[112]:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարելի է վկայել, որ յուրաքանչյուր հասարակություն հնարավոր է բնորոշել որպես գիտելիքի վրա հիմնված, քանի որ տնտեսական աճ և սոցիալական զարգացում ապահովելու համար ամեն մի հասարակարգում գիտելիքի առկայությունն անհրաժեշտ պայման է: XX դարի տեղեկատվական հեղափոխությունն արմատականորեն վերափոխել է գիտելիքի ստեղծման, կուտակման, համադրման, մշակման և փոխանցման հնարավորությունները: Արդյունքում գիտելիքի օգտագործման արդյունավետությունն այնքան է մեծացել, որ այն համարվում է ավելացված արժեքի ստեղծման վճռորոշ գործոն: Գիտելիքի դարաշրջանում համեմատական առավելությունների կարևոր աղբյուր են դարձել մտավոր ու ստեղծագործական ունակությունները, նորարարական գաղափարները: Այս ամենը մարդկային ներուժի և կյանքի որակի թռիչքային աճի հնարավորություն է ընձեռել՝ միաժամանակ առաջացնելով լուրջ ռիսկեր այն առումով, որ բարոյական նորմերի փոփոխությունը համընթաց չէ գիտելիքի ստեղծմանն ու օգտագործմանը: Եթե տվյալ գործընթացները չուղղվեն որոշակի ցանկալի հուն, չհենվեն բարոյական արժեքների վրա, ապա կարող են հանգեցնել ոչ նպաստավոր սոցիալ-հոգեբանական հետևանքների: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել բարոյականության խնդիրներին և կանխարգելել գիտելիքի չարաշահման ամեն մի փորձ: Իսկ այս գործում կարևորվում է պետության դերը կրթության, մշակույթի, ազգային գաղափարախոսության մշակման մեջ:

Տնտեսավարման այս կամ այն տեսակն օրինաչափորեն պայմանավորում է տնտեսավարող սուբյեկտի որոշակի տիպ, որը պետք է համապատասխանի տնտեսավարման պահանջներին: Ժամանակակից տնտեսությունը խառը տիպի է, որտեղ միաժամանակ համագոյակցում են տնտեսավարման ագրարային, արդյունաբերական և

[112] **Solow R.,** You can see the computer age everywhere but in the productivity statistics, (Wed Better Watch Out // New York Review of Books), July 12, 1987, p. 36.

հետարդյունաբերական տեսակները: Տնտեսավարման այս կամ այն տեսակի ծագումը, կայացումը, զարգացումը, աստիճանական փոխակերպումը նոր, առավել կատարելագործված տեսակի, էվոլյուցիայի տեսանկյունից, ներկայացնում են մարդկային քաղաքակրթության զարգացման պատմագենետիկական մակարդակը: Գենետիկական մոտեցման հիմքում Դ. Բելի գաղափարն է «առանցքային սկզբունքի» վերաբերյալ, որի շուրջ համախմբվում են հասարակական բոլոր ինստիտուտներն ու հարաբերությունները: Այս կամ այն առանցքային սկզբունքի ընտրությունը հանգեցնում է պատմահասարակական զարգացման տեսակների միանգամայն տարբեր դասակարգման: Ըստ Դ. Բելի՝ «ֆեոդալիզմ», «կապիտալիզմ», «սոցիալիզմ» հասկացությունները մարքսյան համակարգում ներկայացնում են հաջորդական շարք՝ կառուցված ըստ սեփականության հարաբերությունների: «Նախաարդյունաբերական հասարակություն», «արդյունաբերական հասարակություն» և «հետարդյունաբերական հասարակություն» հասկացությունները կառուցված են օգտագործվող գիտելիքի տեսակների և արտադրության առանցքի շուրջ: Տնտեսավարման տեսակների դասակարգման բազում մոտեցումները վկայում են հենց ընտրված առանցքների բազմազանության մասին: Այսպես՝ ժամանակակից հասարակությունը համաշխարհային տնտեսագիտական մտքի տարբեր ներկայացուցիչներ տարբեր կերպ են բնորոշում: Օրինակ՝ Ու. Ռոստոուն առաջ է քաշում «հետհասուն տնտեսություն» հասկացությունը: Տնտեսագետները, սոցիոլոգներն ու ֆուտուրոլոգներն օգտագործում են այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են «հետքաղաքակրթությունը» (Կ. Բոուլդինդ), «տեխնոտրոն հասարակությունը» (Զ. Բզեժինսկի), «հետտնտեսական հասարակությունը» (Ա.Վիներ), «տելեմատիկ հասարակությունը» (Ջ. Մարտին), «գերարդյունաբերական հասարակությունը» (Է. Թոֆլեր), «տեղեկատվական հասարակությունը» (Ռ. Այրիս, Դ. Բել, Դ. Բենք, Ու. Դայզարդ, Տ. Ստոունյեր, Ա. Մասուդա), «ծրագրային հասարակությունը» (Ա. Տուրե), «հետկապիտալիստական հասարակությունը» (Ռ. Դարենդորֆ): Հասարակության՝ ըստ սոցիալ-տնտեսական տեսակների դասակարգման տարբեր մոտեցումները ենթադրում են նաև տնտեսավարող սուբյեկտների բազմազանություն: Ժամանակակից տնտեսական համակարգն ունի շատ բարդ կառուցվածք, որտեղ մարդն իրականացնում է բազում հասարակական դերեր: Ըստ էության, մարդու բազմաֆունկցիոնալ դերը

կարող է բնութագրվել տարբեր կերպ՝ կախված ընտրված առանցքային սկզբունքից: Եթե որպես առանցքային սկզբունք է ընտրվում գիտելիքի և ինֆորմացիայի արտադրությունը, ապա տնտեսավարող սուբյեկտի պատմական տեսակները կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

- տնտեսավարող սուբյեկտի նախաարդյունաբերական տիպ,
- տնտեսավարող սուբյեկտի արդյունաբերական տիպ,
- տնտեսավարող սուբյեկտի հետարդյունաբերական տիպ,
- տնտեսավարող սուբյեկտի տեղեկատվական տիպ:

Նշված դասակարգումն առաջարկել է Ա. Ի. Դոբրինինը[113], որն էլ «աշխատանք» և «մարդկային կապիտալ» հասկացությունների հստակեցման համար կարող է հասդիսանալ որպես մեթոդաբանական հիմք:

Մարդու մոդելի մշակման հետաքրքիր մոտեցումներ են առաջ քաշվել նաև նորինստիտուցիոնալ տնտեսագիտության շրջանակներում՝ հիմնված երկու վարքագծային սահմանափակումների վրա՝ սահմանափակ ռացիոնալություն և օպորտունիզմ: Գ. Սայմոնն առաջարկել է մաքսիմալացումը փոխարինել բավարարվածության սկզբունքով, քանի որ բարդ իրավիճակներում ընտրության կանոններին հետևելն ավելի ձեռնտու է, քան գլոբալ օպտիմալացման հասնելու փորձերը[114]: Այս դրույթը համահունչ է ավստրիական դպրոցի հայեցակարգին, որտեղ, օգտակարության մաքսիմալացման փոխարեն, օգտագործվում է պահանջմունքների համեմատական առաջնահերթության սկզբունքը: Ինստիտուցիոնալիզմի շրջանակներում կարևորվում է նաև օպորտունիստական վարքագիծը սահմանափակող այնպիսի ոչ ֆորմալ ինստիտուտների դերը, ինչպիսիք են քաղաքակրթական նորմերը, որոնք կարող են լինել և՛ բնածին, և՛ ձեռքբերովի: Ինչպես Ֆ. Հայեկն է նշում. «Հասարակության ընդլայնված կարգը կախված է բարոյականությունից և ծագել է շնորհիվ այն հանգամանքի, որ խմբերը, որոնք հետևել են բարոյական նորմերին, առաջ են անցել այլ խմբերից՝ հարստության և թվաքանակի աճի առու-

[113] **Добрынин А.И., Дятлов С.А., Цыренова Е.Д.,** Человеческий капитал в транзитивной экономике, Санкт-Петербург, “Наука”, 1999, стр. 13.

[114] **Саймон Г.,** Теория принятия решений в экономической теории и науке о поведении//Теория фирмы, СПб., Экономическая школа, 1995, стр. 54-72.

մով»[115]: Հենց այդ ոչ ֆորմալ ինստիտուտներն էլ՝ պահպանվելով և փոփոխվելով, ժամանակակից քաղաքակրթության ծագման կարևոր նախադրյալն են եղել, որոնց վարքագծի կանոնների հիման վրա էլ ծագել են իրավական նորմերը: Ինստիտուցիոնալիզմի մոտեցումները թույլ են տալիս առավել խորությամբ ընկալել մարդկային կապիտալի էությունը, դրա ձևավորման և վերարտադրության առանձնահատկությունները: Վերջին տարիներին ռուսական տնտեսագիտական մտքի ներկայացուցիչները մարդու նոր մոդելի մշակման փորձեր են կատարում, որը պետք է համարժեքորեն արտահայտի համաշխարհային տնտեսության գործընթացները: Նշվում են ժամանակակից տնտեսավարող սուբյեկտի հիմնական հատկանիշները, մասնավորապես՝ ինտելեկտուալություն, նորարար լինելու ձգտում, համագործակցելու ունակություն և կրթական մոբիլություն (շարժունակություն)[116]:

Գ. Պ. Ժուրավլյովան առանձնացնում է վերափոխվող տնտեսությունում մարդու նանոտնտեսական մոդելը[117]:

Ելնելով վերը ներկայացվածից՝ կարելի է հստակեցնել «աշխատանք» (աշխատուժ) և «մարդկային կապիտալ» հասկացությունների էությունը: Տնտեսավարման այս կամ այն ձևի պայմաններում մարդու արտադրողական ունակություններն իրացվում են որոշակի սոցիալ-տնտեսական պայմաններում: Տնտեսավարման արդյունաբերական տիպը բնութագրվում է արդյունաբերության զարգացմամբ և շուկայական հարաբերությունների կայացմամբ: Մարդն իրավաբանորեն ազատ է, և նրա արտադրողական ունակությունները դրսևորվում են՝ տնտեսավարման արդյունաբերական տիպին համարժեք: Ազատ աշխատողը, առանձնացված լինելով արտադրության միջոցներից, իր արտադրողական ունակություններին վերաբերվում է որպես ապրանքի, իսկ արտադրության միջոցների սեփականատերն այդ ունակություններն ընկալում է որպես կապիտալի անհրաժեշտ բաղադրիչ:

Հետևաբար՝ արդյունաբերական տնտեսության պայմաններում «աշխատուժ» և «աշխատանք» հասկացություններն արտահայտում

---

[115] **Хайек Ф. А.,** Пагубная самонадеянность, ошибки социализма, М., 1992, стр. 123.

[116] **Лотухина Э. А.,** Модель человека в новой экономике, Белорусский журнал международного права и международных отношений, 2004, N 2.

[117] **Журавлева Г. П.,** Наноэкономическая модель человека и личности в условиях формирования новой экономики, "Вестник Российской экономической академии им. Плеханова". 2008, N 5, стр. 3-12.

էին անհատի վերաբերմունքն իր արտադրական ունակությունների նկատմամբ՝ որպես ապրանքի: Հետարդյունաբերական տնտեսությունում մարդու արտադրական ունակությունները դրսևորվում են ոչ թե ապրանքային, այլ մարդկային կապիտալի տեսքով: Ս. Դյատլովը և Ա. Դոբրինինը նշում են. «Մարդկային կապիտալը մարդու արտադրողական ունակությունների դրսևորման ձևն է հասարակության զարգացման հետարդյունաբերական փուլում»[118]: Բարձր տեխնոլոգիական արտադրությունը վերարտադրում է այնպիսի պայմաններ, որտեղ մարդկային ինտելեկտը դառնում է հարստության ստեղծման գլխավոր աղբյուրը: Մարդկանց եկամուտների մեծությունն ու բարեկեցությունը պայմանավորվում են առավելապես նրանց մտավոր ունակությունների և մասնագիտական հմտությունների զարգացման աստիճանով, և մարդն իր աշխատանքային ունակություններին վերաբերվում է ոչ թե որպես ապրանքի, այլ իբրև եկամտի երկարատև հոսք ապահովող բարիքի՝ կապիտալի: Բայց այս գործընթացն արդյունավետորեն կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ հասարակության մեջ ձևավորված սոցիալ-տնտեսական ինստիտուտները նպաստում են համապատասխան խթանների համակարգի ձևավորմանը, որի դրդմամբ անհատներն անընդհատ ձգտում են զարգացնել և արդյունավետ կերպով օգտագործել իրենց մարդկային կապիտալը: Պ. Բերգերն ու Տ. Լուկմանն ասում են. «Ինստիտուտներն իրենց գոյության փաստի միջոցով արդեն իսկ ուղղորդում են մարդկանց վարքագիծը՝ նախանշելով դրա որոշակի ձևեր, որոնցից մարդիկ ընտրություն են կատարում»[119]:

Տեղեկատվական տնտեսությունում առաջատար դեր է խաղում գիտելիքը, ուստի տնտեսական և քաղաքական իշխանությունները կենտրոնանում են տեղեկություն արտադրողների ձեռքերում[120]: Ժամանակակից տնտեսությունում առաջացել է նոր մասնագիտական խումբ՝ տեղեկատվական աշխատակիցներ, որոնցով էլ մեծապես

---

[118] **Добрынин А., И. Дятлов С. А., Цыренова Е. Д.,** Человеческий капитал в транзитивой экономике, Санкт-Петербург, “Наука”, 1999, стр.15.

[119] **Бергер П., Лукман Т.,** Социальное конструрирование реальности, Трактат по социологии знания, М., “Медиум”, 1995, стр. 323.

[120] **Стоуньер Т.,** Информационное богатство: профиль постиндустриальной экономики. Новая технократическая волна на западе., М., “Прогресс”, 1986, стр. 397-398.

պայմանավորված է այս կամ այն ապրանքի արտադրության և սպառման հաջողությունը: Է. Տոֆլերի կարծիքով՝ աշխատողի նոր տիպն աչքի է ընկնում հնարամտությամբ և բարձր մասնագիտական որակավորմամբ, տիրապետում է տեղեկությունների մեծ պաշարի, աչքի է ընկնում վարպետությամբ, անկախությամբ, բարեկրթությամբ, չի սիրում միապաղաղություն ու գերադասում է աշխատանքին մոտենալ ստեղծագործաբար և իր գործը կատարել այնպես, ինչպես ինքն է հարկ համարում: Նա ուզում է ունենալ խոսքի և գործի ազատություն: Նա հարմարվել է անորոշության բարձր մակարդակին և ճկուն է իր գործունեության մեջ[121]: Եվ բնական է, որ այդ պայմաններում վերաիմաստավորվում է նաև նրա դերը տնտեսության մեջ, փոփոխվում արտադրական ունակությունների դրսևորման ձևը: Հետարդյունաբերական տնտեսության մեջ մարդու մտավոր, ստեղծագործական ունակություններն իրենց ամբողջության մեջ արտացոլող տնտեսական կատեգորիա է մարդկային կապիտալը: Այսինքն՝ մարդը, որպես արտադրության անձնային գործոն, այլևս չի ընկալվում որպես ֆիզիկական կապիտալի «կցորդ», այլ համարվում է արտադրության վճռորոշ գործոն: Եվ ինչպես Յ. Թյունեն է ասել. «Մարդկանց ազատությունն ու արժանապատվությունն առավել ապահովված կլինեին, եթե նրանք հանդես գային որպես կապիտալի մասին օրենքի սուբյեկտներ»[122]:

Որպես կապիտալ՝ մարդկային ունակությունների ընկալումը նպաստում է նաև սոցիալական գործընկերության արդիական մոդելների, աշխատանքի վարձատրության նոր համակարգերի ձևավորմանը, որոնք կլինեն առավել «մարդակենտրոն»:

Այս համատեքստում «աշխատուժ» և «աշխատանք» եզրույթներն այլևս ամբողջությամբ չեն արտացոլում տնտեսական հարաբերությունների բոլոր կողմերը: Դրանք, կարծես թե, «նսեմացնում են» մարդու դերը տնտեսության մեջ: «Մարդկային կապիտալ» եզրույթն առավել համարժեք է նոր ստեղծված տնտեսական իրականությանը:

---

[121] **Тоффлер А.,** Будущее труда: технократическая волна на западе, М., "Прогресс", 1986, стр. 255.

[122] https://creativeconomy.ru/wp-content/uploads/2011/04/Koritsky-2010.pdf.

2.3. Մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության գնահատման ցուցանիշների համակարգը

Մարդկային կապիտալում ներդրումներն ուղղված են առողջության, կրթության, շարժունության, տեղեկատվության և այլ ակտիվների զարգացմանը, ու շատ կարևոր է դրանց արդյունավետության գնահատումը: Այս հարցը տեսական ու կիրառական հետազոտությունների լայն դաշտ է ստեղծում աշխարհի տարբեր երկրներում:

Տնտեսական արդյունավետության հիմնախնդիրը ներառում է հասարակական վերարտադրության տարբեր կողմերը: Եվ հենց դա է պատճառը, որ գոյություն ունեն մարդկային կապիտալում ներդրումների քանակական գնահատման և դրանց արդյունավետության չափման բազմաթիվ մոտեցումներ: Մարդկային կապիտալի տեսությունն աշխատանքի արտադրողականության, տնտեսական արդյունավետության գնահատման նոր մոտեցումների մշակման լայն հնարավորություն է ընձեռում: Նախևառաջ, հնարավոր է դառնում արդյունավետության ընդհանրական ցուցանիշի ընդհանուր գործոնային արտադրողականության հաշվարկումը: Նախկինում նման գնահատումները տեսական բնույթ էին կրում, իսկ գործնականում առկա էր մեթոդաբանական բարդություն՝ կապված աշխատանքի և կապիտալի ծախսերի համադրելիության ապահովման հետ: Աշխատանքի ծախսերը չափվում էին ըստ ընթացիկ ծախսերի (աշխատավարձի տարեկան ֆոնդ), իսկ կապիտալի ծախսերը՝ ըստ կուտակված պաշարների (կապիտալի ծավալ): Զբաղվածների թիվը, որպես պաշարի ցուցանիշ, անօգուտ էր, քանի որ հաշվի չէր առնում աշխատողների որակական անհամասեռությունը և արտահայտվում էր բնաիրային մեծություններով, ինչը թույլ չէր տալիս այն համադրել կապիտալի արժեքային մեծության հետ: Մինչդեռ մարդկային կապիտալի տեսությունն աշխատանքի (աշխատուժի) տնտեսական գնահատականը տեղափոխում է «կապիտալ» հիմքի վրա՝ հնարավորություն ընձեռելով մեկ ցուցանիշի մեջ ագրեգացնելու աշխատանքի և կապիտալի ծախսերը: Սակայն, գործնականում ընդհանուր գործոնային արտադրողականությունն հաշվարկելն այդքան էլ հեշտ չէ: Դրա համար

անհրաժեշտ են վիճակագրական տվյալների լայն բազա և բարդ տնտեսամաթեմատիկական մոդելի կառուցում:

ԱՄՆ-ի տնտեսության առումով, նման հաշվարկներ է իրականացրել Ջ. Քենդրիկը[123]: Մարդկային կապիտալի արդյունավետության մասնակի ցուցանիշ է համարվել արտադրության գիտատարության մակարդակը (ՄԿմա), որը հաշվարկվում է կրթության ֆոնդը (ինտելեկտուալ կապիտալը) հարաբերելով ՀՆԱ-ին: Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե արտադրված արտադրանքի արժեքի մեկ միավորի կազմում որքան է կրթության ֆոնդը.

$$\text{ՄԿ}_{\text{մա}} = \frac{\text{ԿՖ(կրթության ֆոնդ)}}{\text{ՀՆԱ(համախառն ներքին արդյունք)}}:$$

Տ. Շուլցի մեթոդաբանության համաձայն՝ կրթության ընդհանուր ֆոնդի արժեքը հավասար է կրթության յուրաքանչյուր մակարդակի տարեկան արժեքի (ներառյալ բաց թողնված հնարավորությունների ծախսերը) և կրթության մարդ-տարիների (որ կուտակել է երկրի բնակչությունը այս կամ այն ժամանակահատվածում) արտադրյալին: Ջ. Քենդրիկը ԿՖ արժեքը հաշվարկել էր որոշակի, հատուկ մշակված համաթվերի օգնությամբ՝ հաշվի առնելով գիտելիքի և հմտությունների ամորտիզացիան: Ակնհայտ է, որ զարգացած երկրներում այս ցուցանիշը բավական բարձր է՝ համեմատած «երրորդ աշխարհի» երկրների հետ, բայց այն ունի մեկ թերություն. թույլ չի տալիս հաշվարկել կուտակած արտադրական փորձը:

Մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետության գնահատման համար օգտագործվում են մի շարք այլ ցուցանիշներ ևս: Այսպես՝ կրթության տնտեսական արդյունավետության գնահատման պարագայում անհրաժեշտ է համեմատել կրթության ձեռքբերման ուղղությամբ կատարված ծախսերը և կրթությունից ստացած օգուտները: Կրթության ուղղությամբ կատարված ծախսերը բաղկացած են հետևյալ տարրերից.

- կրթության ձեռքբերման ուղղակի ծախսեր (ծնողներ կամ ուսուցանվող),
- պայմանական (անուղղակի) ծախսեր կամ, այլ կերպ ասած, բաց թողնված եկամուտներ,

[123] **Кендрик Д.,** Совокупный капитал США и его формирование, М., “Прогресс”, 1978.

- պետության ուղղակի ծախսեր՝ միտված կրթության բնագավառին,
- պետության պայմանական (անուղղակի) ծախսեր, երբ վերջինս հարկեր է կորցնում աշխատողի արտադրությունից կտրվելու պատճառով (ուսման ընթացքում):

«Բաց թողնված եկամուտների» տեսությունն առաջ է քաշել Թ. Շուլցը՝ XX դարի 60-ական թթ.-ին: Տարբեր երկրներում «բաց թողնված եկամուտների» մեծությունը կազմում է կրթության վրա կատարվող ընդհանուր ծախսերի 40-70%-ը: ԱՄՆ-ում այդ ցուցանիշը 50-60%-ի սահմաններում է:

Կրթության տնտեսական ցուցանիշները լինում են բնաիրային և արժեքային, ուղղակի և անուղղակի: Որպես կանոն, որքան ավելի կրթված է մարդը, այնքան ավելի բարձր աշխատավարձ է նա ստանում, հեղինակավոր աշխատանքի է հավակնում և դյուրությամբ է հարմարվում ԳՏՀ պահանջներին:

Առանձնացվում են նաև «կրթության մասնավոր օգուտներ» և «կրթության հասարակական օգուտներ» հասկացությունները: Դրանցից առաջինն անհատի և նրա ընտանիքի դրամական ու ոչ դրամական, իսկ երկրորդն այլ անձանց կամ ամբողջ հասարակության ստացած օգուտներն են: Արտաքին (հասարակական, էքստերնալ) օգուտները կրթությունից ստացվող սոցիալական հատույցն է. բնակչության կրթական և մշակութային մակարդակի բարձրացման արդյունքում հանցագործությունների քանակի կրճատում, սոցիալական ակտիվության աճ, երեխաների համար ավելի լավ կրթության և դաստիարակության ապահովում:

Այդուհանդերձ, այդ բոլոր արտաքին էֆեկտները չեն կարող քանակապես արտահայտվել, ուստի կրթության տնտեսական հատույցի հիմնական ձևը, որ կիրառվում է վերլուծությունների ժամանակ, դրամական էֆեկտն է (աշխատավարձի բարձրացում՝ կրթական և մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացման արդյունքում): Աշխատողի ընդհանուր և մասնագիտական կրթությունը հանգեցնում է աշխատանքի արտադրողականության, հետևաբար՝ եկամտի աճին: Կրթության տնտեսական արդյունավետությունը հաշվարկվում է ըստ կրթությունից ստացված ուղղակի օգուտների և այդ կրթության ձեռքբերման վրա կատարված ծախսերի հարաբերակցու-

թյան: Ըստ ձևի՝ կրթության տնտեսական արդյունավետության գնահատումը նման է շահույթի նորմայի գնահատմանը:

Կրթության ձեռքբերման համար կատարված ներդրումները ձևավորում են աշխատողի մարդկային կապիտալը՝ որոշ ժամանակ անց ապահովելով եկամտի հոսք:

Կրթության ձեռքբերման համար կատարված ծախսերի և եկամուտների հաշվարկումից հետո համեմատվում են ծախսերն ու եկամուտների դիսկոնտավորված մեծությունները: Եկամուտների և ծախսերի դիսկոնտավորված մեծությունների միջև եղած տարբերությունը ցույց է տալիս կրթության ձեռքբերման զուտ բերված արժեքը (NPV – Net Present Value)՝ հաշվարկվելով հետևյալ կերպ.

$$NPV = \sum_{t=0}^{n} \frac{B_t}{(1+i)^t} - \sum_{t=0}^{n} \frac{C_t}{(1+i)^t},$$

որտեղ

NPV – զուտ բերված արժեքն է,

B_t – կրթությունից ստացվող եկամուտն է t ժամանակաշրջանում,

C_t – կրթության ձեռքբերման ծախսերն են t ժամանակահատվածի պահին,

n - տարիների քանակն է,

i – տոկոսի նորման է (տասնորդական նիշերով):

Այստեղ պետք է շեշտել, որ կյանքի ընթացքում վաստակած գումարի բերված արժեքն էականորեն կախված է դիսկոնտավորման նորմայի մեծությունից: Դիսկոնտավորման ճիշտ նորմայի ընտրությունը շատ աշխատատար գործընթաց է:

Գոյություն ունեն կրթության հատույցի նորմայի հաշվարկման տարբեր մեթոդներ, որոնցից ամենատարածվածը հետևյալն է. ժամանակահատվածի համար 0-ից հաշվարկվում են զուտ օգուտները, իսկ հետո որոշվում դիսկոնտի այնպիսի նորմա, որի դեպքում զուտ բերված օգուտները հավասարվում են 0-ի: Դա ստացել է եկամտաբերության ներքին նորմա անվանումը:

Եկամտաբերության ներքին նորման տոկոսի այնպիսի նորմա է, որի դեպքում ակնկալվող օգուտների բերված արժեքը հավասար է ծախսերի բերված արժեքին.

$$\sum_{t=0}^{n} \frac{B_t}{(1+r)^t} - \sum_{t=0}^{n} \frac{C_t}{(1+r)^t},$$

որտեղ

r – եկամտաբերության ներքին նորման է (որքան բարձր է r-ը, այնքան շահավետ են կրթության համար կատարվող ներդրումները):

Եկամտաբերության ներքին նորմայի ցուցանիշը կենտրոնական տեղ է զբաղեցնում մարդկային կապիտալի տեսության մեջ: Այն կառուցվում է շահույթի նորմայի ցուցանիշի նման՝ թույլ տալով համադրել մարդկային կապիտալից ստացվող հատույցը ֆիզիկական կապիտալից ստացվող հատույցի հետ: Ի տարբերություն ընթացիկ արդյունավետության ցուցանիշի, որը բնութագրում է արդյունավետությունը ժամանակի որոշակի պահի, եկամտաբերության ներքին նորման նախատեսված է բարիքի հետգնման չափման համար՝ ծառայության ողջ ժամանակահատվածում:

Հասարակության տեսանկյունից, կրթության համար կատարված ծախսերն ու դրանից ստացվող եկամուտները չեն համընկնում որոշակի անհատների կատարած ծախսերի և ստացած եկամուտների հանրագումարի հետ: Ուղղակի անհատական ծախսերի հետ մեկտեղ, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այլ աղբյուրներից կատարված ծախսերը: Անհատական բաց թողնված եկամուտը տվյալ դեպքում, հասարակության տեսանկյունից, մեկնաբանվում է որպես չթողարկված ապրանքների և ծառայությունների արժեք և չստացված եկամտային հարկ:

Ընդհանրապես, տարբերում են մարդկային կապիտալի մասնավոր և հասարակական հատույցի նորմաներ: Հատույցի մասնավոր նորման ցույց է տալիս որոշակի անհատի ստացած եկամուտների և կատարած ծախսերի հարաբերակցությունը: Հատույցի հասարակական նորման ամբողջ հասարակության կատարած ծախսերի և ստացած եկամուտների հարաբերակցությունն է:

Հատույցի հասարակական նորմայի հաշվարկման ժամանակ աշխատավարձի հավելաճը, որ կրթության բարձրացման հաշվին է, ներառում է ուղղակի հարկերը, իսկ կրթության ծախսերն ընդգրկում են ընտանիքի և պետության ծախսերը՝ միտված մարդկային կապիտալի ձևավորմանը: Հատույցի մասնավոր նորման հաշվարկելիս նկատի է

առնվում աշխատավարձի հավելաճը կրթության արդյունքում՝ առանց ուղղակի հարկերի, իսկ կրթության ծախսերը ներառում են միայն սովորողի կամ/և նրա ընտանիքի կատարած ու բաց թողնված հնարավորությունների ծախսերը:

Եկամտաբերության ներքին նորմայի հաշվարկման ժամանակ հաշվի է առնվում այն հանգամանքը, որ կրթական բարձր մակարդակ ունեցողների աշխատավարձը գերազանցում է կրթական ցածր մակարդակ ունեցողների աշխատավարձը: Կարելի է առանձնացնել այդ օրինաչափության մի քանի բնութագրական գծեր.

- գոյություն ունի ուժեղ կոռելյացիոն կապ կրթության և եկամտի մեծության միջև, և այդ կապը չի խախտվում,
- տարիքի հետ եկամուտն աճում է՝ հասնելով գագաթնակետին, իսկ հետո՝ աննշան նվազում կամ մնում նույն մակարդակում՝ մինչև աշխատողի կենսաթոշակի անցնելը,
- տարիքից կախված՝ եկամտի աճի առավել բարձր տեմպ է նկատվում կրթական բարձր մակարդակ ունեցողների խմբում,
- որքան բարձր է անհատի կրթական մակարդակը, այնքան ավելի ուշ տարիքում է գրանցվում եկամտի առավելագույն մակարդակ[124]:

ԱՄՆ-ում կրթության հասարակական հատույցի նորման հաշվարկվում է՝ սկսած 1939 թ.-ից, երբ իրականացվեց բնակչության մարդահամար, իսկ մասնավոր հատույցի նորման՝ սկսած 1970 թ.-ից: Այսպես, օրինակ, 1970-ական թթ.-ին երկրում մասնավոր հատույցի նորման միջնակարգ կրթության առումով 11-15 էր, բարձրագույն կրթության առումով՝ 5-9[125]:

Տարբեր ժամանակահատվածներում ԱՄՆ-ի կրթության հատույցի նորմաները հաշվարկել են տնտեսագետներ Բեքերը, Ջ. Մինսերը, Դ. Ուիթմերը, Ռ. Ֆրիմերը, Թ. Շուլցը և այլք: Կրթության մասնավոր նորմաների հաշարկման գործում մեծ ներդրում ունի Գ. Պսախորոպուլուսը, որի առաջարկած մեթոդաբանությունը միջազգային համեմատությունների լայն հնարավորություն է տալիս:

---

[124] **Psacharopoulos G.,** Woodhall M. Education for Development. An analisis of investment choices. N.Y., 1991, p. 40.

[125] **Psacharopoulos G.,** Returns to Education: An Updated International Comparison. Comparative Education. 1981. 17(3), p. 335.

XX դարի 60-70-ական թթ.-ին բարձրագույն կրթության հատույցի նորմաները զարգացած երկրների մեծ մասում կայուն են եղել՝ տատանվելով 10-15-ի սահմաններում: Դրանք նվազել են 70-ական թթ.-ի կեսին՝ հասնելով 5-8-ի և պահպանվել նշված սահմաններում մինչև 80-ական թթ.-ները: Սկսած 80-ական թթ.-ի վերջից՝ այդ ցուցանիշներն աննշան չափով աճել են: Հատույցի նորմայի անկումը որոշ տնտեսագետներ մեկնաբանել են որպես մարդկային կապիտալում ներդրումների գերաճի հետևանք՝ առաջարկելով կրճատել դրանց չափը: Սակայն, պետությունը շարունակել է ներդրումներն ընդլայնել[126]:

Գ. Պսախորոպուլուսը և Մ. Վուդհոլը, բազմաթիվ հետազոտությունների արդյունքում համադրելով տարբեր երկրներում մարդկային կապիտալի մասնավոր և հասարակական հասույթի նորմաները, առանձնացրին հետևյալ օրինաչափությունները.[127]

1. կրթության հասարակական հատույցի նորմաները միշտ փոքր են մասնավոր հատույցի նորմաներից,
2. տարրական կրթության մեջ կատարվող ներդրումների մասնավոր և սոցիալական հատույցի նորմաները գերազանցում են միջնակարգ և բարձրագույն կրթության մասնավոր և սոցիալական հատույցի նորմաները,
3. զարգացող երկրներում մասնավոր և հասարակական հատույցի նորմաներն ավելի բարձր են զարգացած երկրների հատույցի նորմայից,
4. զարգացող երկրներում կրթության հատույցի նորման ավելի բարձր է ֆիզիկական կապիտալի հատույցի նորմաներից:

Լոնդոնի տնտեսագիտական դպրոցի տնտեսական ցուցանիշների կենտրոնի համար հետազոտություններ իրականացնող գիտնականներ Ռ. Լայարդը, Կ. Մեյհյուն և Գ. Օուենը, վերլուծելով կրթության տարբեր մակարդակների մասնավոր և սոցիալական հատույցի նորմաները, հանգել են այն եզրակացության, որ.

- ներդրումների ավելացմանը զուգընթաց, կրթության հատույցի նորմաները նվազում են,

---

[126] **Psacharopoulos G.,** Woodhall M. Education for Development. An analisis of investment choices. N.Y., 1991.

[127] **Psacharopoulos G., Woodhall M.,** Education for Development. An analysis of investment choices, Oxford University Press, 1985, p. 3-329.

- սոցիալական հատույցի նորման միշտ ավելի բարձր է, քան մասնավոր հատույցինը:

Փաստորեն, նշվածը հակասում էր Ջ. Պսախորոպուլոսի ստացած արդյունքներին: Դ. Մեթքաֆը և Ռ. Լայարդը դա մեկնաբանում էին հետևյալ կերպ.

1. բարձր որակավորում ունեցող աշխատողների թվաքանակի աճն ապահովում է մեծ օգուտներ ողջ տնտեսության կտրվածքով, քանի որ բարձր որակավորված աշխատողների առաջարկի ավելցուկը նպաստում է վերջինիս գնի նվազմանը. հետևապես՝ մասնավոր հատույցը կնվազի, իսկ հասարակականը՝ կաճի,

2. ասիմետրիկ տեղեկատվության պատճառով սովորողները թերագնահատում են ապագայում բարձր եկամուտների ստացման հնարավորությունները և գործնականում՝ սկզբնական շրջանում, համաձայնում են աշխատել ցածր վարձատրությամբ,

3. եկամտահարկը, առավել ևս՝ աճող, նվազեցնում է մասնավոր հատույցի նորման,

4. քանի որ գործազուրկ դառնալու մեծ հավանականություն ունեն ցածր որակավորում ունեցող աշխատողները, ուստի կրթության սոցիալական հատույցն ավելի բարձր է, քան մասնավորը. բանն այն է, որ կրթության համար կատարված ծախսերի (հասարակության մասշտաբով) այլընտրանքային արժեքն ավելի փոքր է, քան առանձին անհատների ուսման այլընտրանքային ծախսերը,

5. եթե աշխատանքի շուկայում կազմակերպությունները մոնոպսոն դիրքում են, ապա նրանք հնարավորություն ունեն և նաև նրանց ձեռնտու է ֆինանսավորել իրենց աշխատողների ուսուցումը, բայց այդ ֆինանսավորման ծավալները, իհարկե, փոքր են հավասարակշռված մակարդակից (հասարակության տեսանկյունից)[128]:

Նմանատիպ ուսումնասիրություններ են իրականացրել ամերիկացի տնտեսագետներ Լ. Լեսլին և Պ. Բրինքմանը՝ ԱՄՆ-ում 1980-ական թթ. երկրորդ կեսին: Նրանք հանգել են հետևյալ եզրակացություններին. նախևառաջ, մասնավոր հատույցի նորման բակալավրի աստիճան ունեցողի համար հավասար է 11.8-13.4%-ի, մագիստրոսի աստի-

[128] **Layard R., Mayhew K., Owen G.,** Britain's Training Deficit: The Centre for Economic Performanse Report, 1994, Layard R., Metcalf D., Nickell., The Effect of Collective Bargaining on Wages. British Journal of Industrial Relations, 16(3), 1978, p. 287-302.

ճան ունեցողի համար՝ 7.2%-ի, հետբուհական կրթության համար՝ 6.6%-ի[129], բարձրագույն կրթության տնտեսական արդյունավետությունը բավական բարձր է և ունի աճման միտում, բարձր է նաև բարձրագույն կրթության սոցիալական հատույցի նորման: Բարձրագույն կրթության ուղղությամբ կատարված պետական ծախսերի հատույցի նորման նույնպես բարձր է՝ 11.6-12.1%: Ըստ էության, նշված հետազոտության արդյունքները վկայում են, որ մասնավոր և սոցիալական հատույցի նորմաները հավասար են:

Ամփոփելով վերը ներկայացվածը՝ կարող ենք ասել, որ մասնավոր և սոցիալական հատույցի նորմաները տարբեր երկրներում տարբեր են՝ կախված տնտեսական, սոցիալական, պատմական և այլ առանձնահատկություններից:

2.4. Մարդկային կապիտալում ներդրումների տնտեսական արդյունավետության վերլուծության մեթոդները

Նախագծային վերլուծությունը (Project analis), ընդհանուր առմամբ, թույլ է տալիս համակարգված ձևով գնահատել ներդրումային նախագծերի ֆինանսական, տնտեսական և այլ առավելությունները: Համաձայն ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) մեթոդաբանության՝ առանձնացվում է ներդրումային նախագծերի նախապատրաստման և դրանց վերաբերյալ որոշումների կայացման 4 փուլ: Դրանք են.

- ներդրումային հայեցակարգերի ուսումնասիրություն,
- նախագծի նախապատրաստում,
- նախագծի վերջնական ձևակերպում և դրա տեխնիկական-տնտեսական և ֆինանսական պիտանիության գնահատում,
- նախագծի վերջնական քննարկում և որոշման կայացում:

Նախագծային վերլուծության իրականացման ժամանակ պետք է առաջադրել և լուծել հետևյալ խնդիրները.

1. ո՞րն է նախագծի նպատակը,

[129] **Leslie L., Brinkman P.,** The Economic Value of Higher Education//ACE, Macmillan Publishing Company, N. Y., 1988, p. 288.

2. այլընտրանքային նախագծերի համեմատական վերլուծության համար ո՞ր եղանակը կարելի է օգտագործել որոշակի դեպքում,
3. ի՞նչ մեթոդով և ո՞ր ժամանակահատվածի համար են գնահատվում եկամուտներն ու ծախսերը,
4. ի՞նչ չափանիշներ են կիրառվում նախագծի հաստատման կամ մերժման վերաբերյալ որոշում ընդունելիս:[130]

Նախագծային վերլուծության կարևոր խնդիրը նախագծի գնահատումն է առկա սահմանափակումների (տեխնիկական, ֆինանսական, տնտեսական, բնապահպանական և այլն) հաշվառմամբ: Արդյունքում ստանում ենք պատասխան՝ իրագործելի՞ է, արդյոք, այդ նախագիծն առկա սահմանափակումների պարագայում: Վերջնական փուլում պարզվում է նախագծի իրականացումից ակնկալվող դրական արդյունքների և այլընտրանքային նախագծերից ակնկալվող արդյունքների հարաբերակցությունը:

Մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետությունը բնութագրող չափանիշների ընտրությունը բավական բարդ խնդիր է: Որոշ դեպքերում, որոշակի սահմանափակումների առկայության պայմաններում ձեռնտու է մեկ չափանիշ, որևէ այլ դեպքում՝ մեկ այլ: Մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության ավանդական չափանիշները բավական հանգամանորեն քննարկված են տարբեր աշխատություններում:

Ավանդաբար, տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում են մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության հետևյալ ցուցանիշները.

1. եկամուտների և ծախսերի միջև եղած հարաբերակցության մաքսիմալացում,
2. ներդրումների հետգնման ժամկետ,
3. զուտ բերված արժեք (NPV-Net Present Value),
4. եկամուտների և ծախսերի տարբերություն,
5. սահմանային եկամտի և սահմանային ծախսի հարաբերակցություն,
6. տարեկան զուտ եկամուտ,
7. եկամտաբերության ներքին նորմա[131]:

[130] Economic Analysis. Project analysis: Training of Trainers Program. EDI of the World Bank, 1994, p. 32.

Որպես օրինակ՝ դիտարկենք երկու կրթական նախագծեր, որոնցից յուրաքանչյուրը նախատեսված է 20 տարվա համար:

Նախագիծ առաջին: Սկզբնական ծախսերը տարվա համար 200 $ են, տարեկան եկամուտը՝ 50 $:

Նախագիծ երկրորդ: Սկզբնական ծախսերը տարվա համար 1200 $ են, միջին տարեկան եկամուտը՝ 200$:

Այս երկու ներդրումային նախագծերից ո՞րն է առավել նախընտրելին: Նախ՝ քննարկենք դրանց հետգնման ժամկետները: Հետգնման ժամկետն ընդհանուր ծախսերի (c) և մշտական սահմանային եկամտի (b) հարաբերակցությունն է: Ընդ որում, վերջինս հաշվարկվում է որոշակի ժամանակահատվածի համար (ամիս, տարի): Հստակ պայմանների առկայության պարագայում հետգնման ժամկետի հակադարձ ցուցանիշը հավասար է սպասվելիք հասույթի ներքին նորմայի գործակցին: Դրա համար անհրաժեշտ է, որ բոլոր ծախսերը վերաբերեն սկզբնական ժամանակահատվածին, իսկ եկամուտները լինեն կայուն: Այս ցուցանիշը բավական պարզ է, միավորում է եկամուտներն ու ծախսերը, և դրա օգնությամբ տարբեր նախագծեր կարող են գնահատվել համեմատական արդյունավետության տեսանկյունից: Իսկ չափանիշն այս դեպքում ամենակարճ հետգնման ժամկետն է: Այսպես՝ առաջին նախագծի հետգնման ժամկետը 4 տարի է (200:50), երկրորդինը՝ 6: Այլ հավասար պայմաններում, համաձայն նշված չափանիշի, առաջին տարբերակն ավելի նախընտրելի է:

Հետգնման չափանիշի ցուցանիշը, սակայն, ունի մի շարք թերություններ: Նախ՝ այն հաշվի չի առնում այն հանգամանքը, որ այլընտրանքային ներդրումային նախագծերի եկամուտներն ու ծախսերը բաշխված են ժամանակի մեջ, և հնարավոր է՝ այդ բաշխումը լինի անհավասարաչափ: Որպեսզի տարբեր ժամանակահատվածներում ստացված եկամուտները և կատարված ծախսերը դառնան համադրելի, անհրաժեշտ է դիսկոնտավորել այդ մեծությունները: Երկրորդ, տարբեր նախագծերի բացարձակ զուտ եկամտի մեծությունը տարբեր է, իսկ այս ցուցանիշը դա հաշվի չի առնում: Երրորդ, ինչպես ակնկալվող հատույցի ներքին նորմայի գործակցի դեպքում, հետգնման չափանիշն առհասարակ չի «աշխատում», երբ այլընտրանքա-

[131] Hu Teh-Wei, Kaufman Yacob Y., Lee Man Lin, Stromsdorfer Ernst W. Human Capital Formation and Manpower Development, The Free Press, N.Y., 1971, p. 159-175.

յին ներդրումային նախագծերը բացառում են միմյանց: Դիտարկենք վերը ներկայացված նախագծերը՝ նշված սահմանափակումների հաշվառմամբ: Հետգնման չափանիշի կիրառման պարագայում առաջին նախագիծը երկրորդի համեմատ գերադասելի է: Ենթադրենք՝ երկու նախագծի գործունեության ժամկետը 20 տարի է: Եթե առաջին և երկրորդ տարբերակները փոխբացառելի են, և դիսկոնտավորման գործակիցը 6 է, ապա երկրորդ նախագծի դիսկոնտավորված զուտ ընդհանուր եկամուտներն ավելի բարձր են երկրորդի դեպքում (2292-1200), ի տարբերություն առաջինի (573-200): Այս պայմաններում առաջին նախագծում ներդրում կատարելը ձեռնտու չէ: Այսպիսով՝ հետգնման ժամկետի ցուցանիշը, որպես որոշումների կայացման գործիք, ունի լուրջ սահմանափակումներ: Գոյություն ունեն մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության գնահատման այլ ցուցանիշներ, որոնք վերաբերում են զուտ բերված արժեքին, եկամուտների և ծախսերի հարաբերակցությանը, ինչպես նաև հատույցի ներքին գործակցին, որոնք կարող են ապահովել միևնույն արդյունքը՝ այլընտրանքային ներդրումային տարբերակներին նախապատվություն տալու տեսանկյունից: Բայց ակնկալվող ներքին հատույցի նորմայի գործակիցը միշտ չէ, որ հայեցակարգային առումով համարժեք է զուտ բերված արժեքի և զուտ ընթացիկ եկամուտների չափանիշներին: Այդ չափանիշները նույնական արդյունք են ապահովում միայն որոշակի պայմաններում.

- կապիտալի շուկաները կատարյալ մրցակցային են,
- բոլոր նախագծերն առանձնացված են միմյանցից, չկա փոխկախվածություն,
- բոլոր զուտ եկամուտները կարող են վերաներդրվել հատույցի ներքին գործակցի միևնույն մեծության պարագայում՝ մինչև ամենաերկարաժամկետ նախագծի վերջնաժամկետը:

Այժմ դիտարկենք զուտ բերված արժեքի ցուցանիշը: Հաշվի առնելով վերը ներկայացված ենթադրությունները և նշված դիսկոնտավորման տոկոսադրույքը (6%)՝ պետք է երաշխավորել յուրաքանչյուր նախագիծ, որի համար զուտ եկամուտների դիսկոնտային արժեքը մեծ է զրոյից: Եթե այլընտրանքային ներդրումային տարբերակներից մեկից ավելին ապահովում է զուտ դիսկոնտավորված դրական եկամուտ, ապա պետք է ընդունել զուտ եկամտի ամենամեծ ընթացիկ արժեքն ապահովող նախագիծը: Ներկայացնենք ներդրումային նա-

խագիծը բնութագրող մաթեմատիկական հավասարումը.

$$V_0 = \frac{S_0}{(1+i)^0} + \frac{S_1}{(1+i)^1} + \frac{S_2}{(1+i)^2} + \cdots + \frac{S_t}{(1+i)^t},$$

որտեղ

V_0 – զուտ բերված արժեքն է,

i –դիսկոնտավորման նորման է,

S_t - եկամտի գումարն է:

Այս բանաձևը հաշվի է առնում այն հանգամանքը, որ պարտադիր չէ, որ ծախսերը կատարվեն հենց նախագծի սկզբնական ժամանակահատվածում: Եթե ակնկալվում է տոկոսադրույքի փոփոխություն՝ որոշակի պայմանների փոփոխության արդյունքում, ապա այդ ժամանակային կետերում կարող են օգտագործվել տարբեր տոկոսադրույքներ: Վերը ներկայացված օրինակների համար առաջին տարբերակի դեպքում.

$$i=6\%,\ t=20,\ b_t=50\$,\ c_t=200\$,$$

ինչպես նաև հաշվի առնելով այն ենթադրությունը, որ ծախսերը կատարվել են սկզբնական շրջանում, առաջին նախագծի եկամտի ընթացիկ արժեքը.

$$V_0 = \frac{0-200}{(1+0{,}6)^0} + \frac{50-0}{(1+0{,}6)^1} + \cdots + \frac{50-0}{(1+0{,}6)^2} = 374\$,$$

իսկ երկրորդ նախագծի համար կստանանք՝ V_0=1092, b_t=200, c_t=1200:

Հետևաբար՝ եթե 6-ն օպտիմալ դրույքն է, ապա զուտ տնտեսական արդյունավետության տեսանկյունից երկրորդ տարբերակն ավելի նախընտրելի է (1092>914):

Եկամտաբերության ներքին նորման այն տոկոսային ցուցանիշն է, որը համեմատվում է կրթության ներդրումներից ստացվող հասարակական կամ մասնավոր հատույցի գործակցի հետ: Եկամտաբերության ներքին նորման տոկոսադրույք է, որի դեպքում ծախսերի դիսկոնտավորված արժեքը հավասար է եկամուտների դիսկոնտավորված արժեքին.

$$E(r) = \sum_{t=0}^{n} (b_t - c_t)(1+r)^t = 0,$$

որտեղ

r – եկամտի ներքին նորման է,

b – որոշակի ժամանակահատվածում եկամտի մեծությունն է,

c – որոշակի ժամանակահատվածում ծախսերի մեծությունն է:

Ձևափոխելով կստանանք.

$$c\sum_{t=0}^{n}\frac{1}{(1+r)^t}=b\sum_{t=0}^{n}\frac{1}{(1+r)^t},$$

որտեղ

r – եկամտաբերության ներքին նորման է,

c – միջին ծախսերն են՝ որոշակի ժամանակահատվածում:

Եթե փորձենք իրականացնել մարդկային կապիտալում ներդրումների արդյունավետության չափանիշների համեմատական վերլուծություն, ապա կտեսնենք, որ առաջանում են մի շարք խնդիրներ: Տնտեսագիտական գրականության մեջ առավել լայն տարածում ունեն ընթացիկ արժեքի և եկամտաբերության ներքին նորմայի չափանիշները՝ ի տարբերություն վերոնշյալ ցուցանիշների: Եթե երկու ներդրումային նախագծերը փոխբացառելի են, ապա եկամտի նորմայի ցուցանիշը կիրառելի չէ: Փոխկապակցված նախագծերի դեպքում հնարավոր է ներդրումներ իրականացնել այն նախագծում, որն ունի ավելի մեծ եկամտաբերության նորմա, բայց ցածր ընթացիկ արժեք՝ այլընտրանքային նախագծի համեմատ: Այսպես՝ եթե անհատի տեսանկյունից դիտարկենք այլընտրանքային ներդրումային տարբերակների միջև ընտրության կառուցակարգը, ապա կտեսնենք, որ երբ վերջինս որոշում է ընդունում ձեռք բերելու որոշակի մասնագիտություն, ապա նա բացառում է այլ մասնագիտության ձեռքբերումը՝ նույն ժամանակահատվածում: Ըստ էության, անհատը որոշակի ժամանակահատվածում կարող է ձեռք բերել միայն մեկ մասնագիտություն, ուստի մարդկային կապիտալում կրթական բնույթի ներդրումները, ընդհանուր առմամբ, փոխբացառելի են:

Ձուտ բերված արժեքի չափանիշի գործնական կիրառումը հաճախ անհնարին է դառնում, երբ անհատի՝ կրթական ներդրումներ իրականացնելու ձգտումները բախվում են բյուջետային սահմանափակումների: Նման պարագայում անհատն ընտրություն է կատարում՝ ոչ թե հիմնվելով զուտ բերված արժեքի մեծության, այլ իր ունեցած ներդրումային հնարավորությունների վրա:

Ընդհանրացնելով պետք է նշել, որ մարդկային կապիտալում կատարվող ներդրումների արդյունավետության գնահատման կատար-

յալ չափանիշներ գոյություն չունեն: Յուրաքանչյուր չափանիշի ընտրություն պետք է համահունչ լինի հետազոտության նպատակին: Թվարկված մոտեցումներից զատ, տնտեսագիտական գրականության մեջ զարգանում են նաև մարդկային կապիտալում կատարված ներդրումների արդյունավետության գնահատման ոչ ավանդական մոտեցումները: Սակայն, անկախ համապատասխան ներդրումների արդյունավետության գնահատման մեթոդներից, հարկ է ընդգծել, որ մարդկային կապիտալում կատարվող ներդրումներից ստացվող հասարակական հատույցը գերազանցում է կապիտալի այլ տեսակներում կատարվող ներդրումներից ստացվող հատույցը, և այս առումով, մարդկային կապիտալում կատարվող ներդրումները չունեն այլընտրանք: Արտադրության գործոններից միայն մարդկային կապիտալն է օժտված աճող հատույց ապահովելու ունակությամբ: Դրա պատճառներից է նաև այն, որ, ի տարբերություն կապիտալի այլ տեսակների, մարդկային կապիտալում կատարվող ներդրումներն ապահովում են մեծածավալ արտաքին դրական էֆեկտներ, որոնք նպաստում են ոչ միայն տնտեսական աճի քանակական ցուցանիշների մեծացմանը, այլև որակական ցուցանիշների կատարելագործմանը:

ԳԼՈՒԽ 3

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՈՐՊԵՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԳՈՐԾՈՆ

3.1. Մարդկային կապիտալի արտացոլվածությունը տնտեսական աճի ժամանակակից տեսություններում և մոդելներում

Տնտեսական աճը, ավանդաբար, յուրաքանչյուր պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկն է, քանի որ ակնկալվում է, որ ապրանքների և ծառայությունների թողարկման ծավալների ավելացումը կհանգեցնի բնակչության եկամուտների մեծացմանը, կենսամակարդակի բարձրացմանն ու աղքատության կրճատմանը:

Միայն XX դարի վերջին, երբ որպես մարդկային զարգացման հայեցակարգային գերակայություններ ընդունվեցին անհատի համակողմանի զարգացման, ինչպես նաև ընտրության հնարավորությունների ընդլայնումն ու ազատությունների մեծացումը, լուրջ քննարկումներ սկսվեցին նաև տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև գոյություն ունեցող փոխկապվածության վերաբերյալ: Մարդկային զարգացման կարևոր նախապայմաններից է կայուն տնտեսական աճը: Սակայն, վերջին տասնամյակների սոցիալ-տնտեսական զարգացման համաշխարհային փորձը վկայում է, որ ոչ միշտ է տնտեսական աճը զուգորդվում մարդկային զարգացման մակարդակի բարձրացման հետ: Շատ երկրներում տնտեսական աճն ուղեկցվում է բնակչության եկամտային անհավասարության խորացմամբ, աղքատությամբ, արտագաղթի աճով, բնակչության մեծ մասի զարգացման հնարավորությունների և ազատությունների լուրջ սահմանափակմամբ:

Տնտեսական աճի տեմպն առավելապես քանակական ցուցանիշ է, որի չափման հիմնական ցուցիչը մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն է: Որքան բարձր է տնտեսական աճի տեմպը, այնքան մեծ են երկրի սոցիալ-տնտեսական զարգացման հնարավորությունները: Մարդկային զարգացման հայեցակարգի տեսանկյունից, որպես տնտեսական աճի ցուցանիշ պետք է ընդունել ոչ միայն երկրում արտադրված ապ-

րանքների և ծառայությունների քանակը, այլև բնակչության կյանքի որակը: Եկամուտների աճից զատ, բնակչության կյանքի որակի կարևորագույն ցուցանիշներն են կրթական մակարդակը, առողջական վիճակը, աղքատության կրճատման տեմպերը, շրջակա միջավայրի պահպանումն ու բարելավումը, հավասար հնարավորությունների ապահովումը, սոցիալական արդարությունը: Եվ այս առումով, շատ կարևոր է պարզել յուրաքանչյուր երկրի տնտեսական աճի բնույթն ու տիպը և այն, թե որքանով է տնտեսական աճը նպաստում եկամուտների հավասարաչափ աճին, սոցիալ-տնտեսական կայունության ապահովմանը և մարդու հնարավորությունների մեծացմանը: Ըստ էության, նշված հիմնախնդիրները հնարավոր է լուծել միայն «որակյալ» տնտեսական աճի պայմաններում: Մարդկային զարգացման համատեքստում «որակյալ» տնտեսական աճն ապահովում է մարդու առաջանցիկ, բազմակողմանի զարգացումը:

Առանձնացվում են տնտեսական աճի որակի հետևյալ չափանիշները.

1. լրիվ զբաղվածություն,
2. գոյամիջոցների առկայության երաշխիք,
3. եկամտի և ռեսուրսների արդարացի բաշխում,
4. սոցիալական համերաշխություն և համագործակցություն,
5. ազատության երաշխիքներ և ժողովրդավարություն,
6. շարունակական կայուն աճի պայմանների առկայություն:

Նշված չափանիշներին համապատասխանության դեպքում տնտեսական աճը համարվում է որակյալ և համահունչ մարդկային զարգացման նպատակներին: Սակայն, գործնականում, միշտ չէ, որ արձանագրվում է նման աճ: Եթե տնտեսական աճի բարձր տեմպերը չեն ուղեկցվում մարդկային զարգացման մակարդակի բարձրացմամբ, ապա աճը չի կարող արդյունավետ համարվել: Ընդհանրապես, առանձնացվում են անարդյունավետ տնտեսական աճի հետևյալ դրսևորումները.

- աճ՝ առանց զբաղվածության ավելացման, երբ տնտեսական աճը չի ուղեկցվում նոր աշխատատեղերի ստեղծմամբ,
- անխնա աճ, որն ուղեկցվում է անհավասարության խորացմամբ, երբ հարուստներն էլ ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ էլ ավելի աղքատ դառնում (XX դարի վերջի և XXI դարի սկզբի համաշխարհային զարգացման արդյունքները

վկայում են, որ գնալով խորանում է ճեղքվածքը հարուստ և աղքատ երկրների միջև, համաշխարհային մասշտաբով մեկ շնչին ընկնող միջին տարեկան եկամուտը կազմում է 5522 դոլար (հաշվարկված գնողունակության համարժեքությամբ), բայց երկրագնդի բնակչության 80%-ի եկամուտները ցածր են նշված մեծությունից)[132],

- աճ՝ առանց ձայնի իրավունքի, որի դեպքում աճը չի ուղեկցվում ժողովրդավարության մակարդակի բարձրացմամբ, իրավունքների և հնարավորությունների աճով,
- աճ՝ առանց մշակութային ժառանգության պահպանման, որը հանգեցնում է ազգերի մշակութային յուրօրինակության անհետացմանը,
- աճ՝ առանց ապագայի, երբ տնտեսական աճի ապահովման ակնկալիքով վատնվել են ապագա սերունդների կենսապահովմանն անհրաժեշտ տնտեսական և բնական ռեսուրսները:

Յուրաքանչյուր զարգացման նպատակը, նախևառաջ, մարդկային զարգացումն է, քանի որ մարդը, միաժամանակ, և՛ զարգացման գործիք է, և՛ տնտեսական աճի անմիջական մասնակից: Մարդու համակողմանի զարգացմանն ուղղված ծախսումներն ինքնին արժեքավոր են, և ապագայում դրանցից ստացվող հատույցն ավելի բարձր է լինելու, քան ֆիզիկական կապիտալինը: Երկրում առողջ ու կենսունակ, լավ կրթված ու որակավորված բնակչության ձևավորումը և՛ մարդկային զարգացման խնդիր է, և՛ մարդկային կապիտալի պաշարավորում: Իհարկե, միայն մարդկային կապիտալի պաշարավորումն ինքնին չի կարող կայուն տնտեսական աճ ապահովել: Այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ է մշակել և կյանքի կոչել տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխազդեցության պահպանմանը (կարգավորմանը) միտված տնտեսական քաղաքականություն, որն իր մեջ կներառի տնտեսական, ինստիտուցիոնալ, սոցիալական միջոցառումների մի ամբողջ համալիր: Մահբուբ Ալ Հաքանը նշում է. «Տնտեսական աճի և մարդկային զարգացման միջև գոյություն ունի ցանկալի կապի ստեղծման չորս հիմնասյուն: Առաջին հիմնասյունը մարդկային կապիտալում ներդրումների աճի ապահովումն է: Երկրորդ հիմնասյունն ազգային հարստության և ազգային եկա-

[132]Доклад о развитии человека, М., "Весь мир", 2006, стр. 269.

մտի արդարացի բաշխումն է: Այն երկրներում, որտեղ ազգային եկամտի և հարստության բաշխումն անհավասարաչափ է, ՀՆԱ աճի բարձր տեմպը որևէ կերպ չի անդրադառնում բնակչության կենսամակարդակի վրա: Երրորդ հիմնասյունը սոցիալական քաղաքականության իրագործումն է, չորրորդը՝ մարդկանց, մասնավորապես՝ կանանց հնարավորությունների ընդլայնումը: Եթե մարդիկ ազատ են իրենց ընտրության մեջ՝ քաղաքական, հասարակական և տնտեսական ոլորտներում, ապա կայուն և տևական տնտեսական աճի հեռանկարներ կան»[133]:

XXI դարի սկզբին մարդու դերը տնտեսության մեջ վերաիմաստավորվեց: Նրա մտավոր, ստեղծագործական կարողությունները սկսեցին դիտարկվել որպես տնտեսական զարգացման գլխավոր գործոն: Ներկայում գրեթե համընդունելի է դարձել այն մոտեցումը, որ ներդրումները մարդկային կապիտալում կայուն տնտեսական աճի առավել կարևոր աղբյուր են: Աստիճանաբար տեղի է ունենում և՛ տեսամեթոդաբանական, և՛ գործնական մակարդակներում ամրագրված շատ դրույթների վերաիմաստավորման անշրջելի գործընթաց, ինչն իր արտացոլումն է գտել տնտեսական աճի նոր մոդելներում:

Տնտեսական աճի բազմաթիվ ժամանակակից տեսությունները պայմանականորեն կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- տնտեսական աճի նորքեյնսական տեսություններ,
- աճի նորդասական տեսություններ,
- աճի էմպիրիկ տեսություններ,
- էնդոգեն աճի նոր տեսություններ:

Տնտեսական աճի նորքեյնսական տեսությունները հիմնված են Ջ. Քեյնսի մակրոտնտեսական հավասարակշռության տեսության վրա՝ համաձայն որի ամբողջական պահանջարկն է կանխորոշում տնտեսական աճը, և պետությունը տնտեսական անկման փուլում պետք է իրականացնի ընդլայնող հարկաբյուջետային քաղաքականություն: Ջ. Քեյնսը տնտեսական աճի կարևոր գործոն է համարում ներդրումները, որոնք բազմարկչի կառուցակարգի միջոցով նպաստում են ՀՆԱ աճին, իսկ հետագայում գործողության մեջ է մտնում աքսելերատորի էֆեկտը՝ պայմանավորելով ներդրումների հետագա աճը: Աճի

[133] Mahbub ul Haq, Reflections on Human Development, chapters 2 and 3, Oxford University Press, 1995, p. 288.

նորքեյնսյան տեսությունների հեղինակներն են լեհական ծագմամբ ամերիկացի տնտեսագետ Եվ. Դոմարը և անգլիացի տնտեսագետ Ռ. Հարոդը: Նրանց հետազոտության արդյունքներն այնքան մոտ էին իրար, որ հետագայում տնտեսագիտության մեջ դրանք ստացան Հարոդ-Դոմարի տեսություն անվանումը: Եվ. Դոմարը ճշգրտեց և լրացրեց Ջ. Քեյնսի տեսությունը: Նա ներդրումները դիտարկում է ոչ միայն որպես եկամուտների ձևավորման, այլև նոր հզորությունների ստեղծման, արտադրության զարգացման, հետևաբար նաև առաջարկի ընդլայնման աղբյուր, հիմնավորում ներդրումների աճի անհրաժեշտ տեմպը եկամտի աճի ապահովման համար: Ներդրումների աճի տեմպն ուղղակիորեն կախված է խնայողության սահմանային հակումից և ներդրումների արդյունավետությունից.

$$\frac{\Delta Y}{Y} = \frac{\Delta I}{I} = s\beta ,$$

որտեղ

$\frac{\Delta y}{y}$ - եկամտի հավելաճն է,

$\frac{\Delta I}{I}$ - ներդրումների հավելաճն է,

s - խնայողության նորման է,

β - կապիտալահատույցի գործակիցն է:

Այսպիսով՝ եկամտի աճի հավասարակշռված տեմպն (երբ ամբողջությամբ օգտագործվում են արտադրական հզորությունները) ուղիղ համեմատական է խնայողության նորմային և կապիտալի սահմանային արտադրողականությանը: Համաձայն Եվ. Դոմարի մոդելի՝ հավասարակշռության ապահովման համար անհրաժեշտ է, որ ներդրումներն ու ազգային եկամուտն աճեն միևնույն և հաստատուն տեմպով: Գործնականում նման դինամիկ հավասարակշռությունը չի կարող կայուն լինել, քանի որ պլանային ներդրումների աճի տեմպը կարող է տատանվել: Բայց, ի սկզբանե, Եվ. Դոմարի մոդելի հիմնական նպատակը երկարաժամկետ հավասարակշռության պայմանների սահմանումն էր, այլ ոչ թե աճի տեսության ստեղծումը:

Ռ. Հարոդի տեսությունը նվիրված է տնտեսության աճի հետագծի ուսումնասիրությանը: Այստեղ ներկայացվում է հավասարակշռված աճի կառուցակարգը՝ հիմնված ոչ միայն եկամտի, խնայողությունների և ներդրումների միջև առկա ֆունկցիոնալ (գործառութային) կա-

պի, այլև ձեռներեցների սպասումների վրա: Ձեռներեցները հիմնվում են երաշխավորված (կանխատեսվող) աճի տեմպի վրա, որը որոշվում է խնայողության սահմանային նորմայի և կապիտալատարության հարաբերությամբ: Համաձայն Ռ. Հարոդի տեսության՝ աճի փաստացի տեմպը որոշվում է ըստ աշխատուժի և կապիտալի արտադրողականության աճի տեմպերի: Եթե աճի փաստացի տեմպը համընկնի երաշխավորվածին, ապա տնտեսությունը կապահովի անընդհատ կայուն զարգացում: Սակայն, գործնականում, դա այդպես չէ, ինչն էլ կարճաժամկետ պարբերաշրջանային տատանումների պատճառ է դառնում: Ռեսուրսների լրիվ զբաղվածության պարագայում տնտեսական աճի առավելագույն տեմպը Ռ. Հարոդի տեսության մեջ ստացել է աճի բնական տեմպ անվանումը: Տնտեսական համակարգի կայուն, դինամիկ հավասարակշռությունը հաստատվում է աճի երաշխավորված և բնական տեմպերի հավասարության դեպքում՝ լրիվ զբաղվածության պայմաններում: Բայց նման հավասարակշռության ապահովում հնարավոր է միայն պետական միջամտության պարագայում: Հարոդ-Դոմարի տեսությունն ունի մի շարք սահմանափակումներ, մասնավորապես՝

1. տնտեսական աճը պայմանավորված է միմիայն ներդրումների հավելաճով, ընդ որում, ներդրումների և տնտեսական աճի միջև գոյություն ունի գծային կախվածություն,
2. տնտեսական աճը կախված չէ մարդկային կապիտալի օգտագործման արդյունավետությունից և հավելաճի տեմպից,
3. անտեսված է նաև տեխնիկական առաջընթացի դերը՝ տնտեսական աճի ապահովման գործում:

Այս տեսության սահմանափակումները կարող են բացատրվել նաև պատմական պայմաններով: 1930-ական թթ.-ին և հետպատերազմյան ժամանակաշրջանում տնտեսական աճը, իսկապես, հիմնականում կախված էր արտադրական հզորություններից: Թեև այս մոդելի անկատարությանը, այն, այնուամենայնիվ, արտացոլում է ներդրումների և տնտեսական աճի միջև քանակական կապը, ինչը բազմիցս ապացուցվել է շատ տնտեսաչափական (էկոնոմետրիկական) վերլուծությունների արդյունքում[134]: Հարոդ-Դոմարի տեսությունը հիմք հան-

[134] **Hayami Y.,** Development Economics from the Poverty to Wealth of Nations, Oxford, 1997, p. 37.

դիսացավ «մեծ հրման» տեսության համար: Իհարկե, այստեղ մեծ դեր խաղաց նաև «Մարշալի պլանը», բայց պետք է նշել, որ որոշ տեսաբաններ, այնուամենայնիվ, կասկածի տակ են առնում այն հանգամանքը, որ հետպատերազմյան Եվրոպայի առաջխաղացումը մեծապես պայմանավորված էր արտասահմանյան օգնությամբ և արդյունավետ հարկային քաղաքականությամբ: Այսպես՝ Ռեյվեն Բրեները նշում է, որ Արևմտյան Գերմանիայի «տնտեսական հրաշքի» պատճառն իրականում այլ էր: 1945-1961 թթ.-ին Արևմտյան Գերմանիան ընդունել էր շուրջ 12 մլն իմիգրանտների, որոնց գերակշիռ մասն ուներ բարձր մասնագիտական պատրաստվածություն[135]: Եվ հենց դա էլ մեծապես նպաստեց երկրի զարգացմանը: Վերլուծելով ԱՄՆ-ի տնտեսությունը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ Բրեները հանգում է այն եզրակացության, որ հենց ԱՄՆ ներհոսած բարձրորակ մարդկային կապիտալի շնորհիվ են համահարթվել երկրի կառավարության տնտեսական քաղաքականության լուրջ բացթողումները: Հետաքրքիր է, որ այստեղ նա շեշտում է նաև իմիգրանտների՝ աշխարհի տարբեր կետերում «անհրաժեշտ կապեր»[136] ունենալու հանգամանքը, այսինքն՝ կարևորում է սոցիալական կապիտալի դերը: Այդուհանդերձ, 1950-1970 թթ.-ին արտադրության զարգացման հեռանկարները պայմանավորվում էին առավելապես որակական, տեխնոլոգիական փոփոխություններով, ինչն արտացոլվեց աճի նորդասական տեսություններում:

Աճի նորդասական տեսությունները ձևավորվեցին 1950-1960 թթ.ին, երբ թուլացավ տնտեսագետների հետաքրքրությունը դինամիկ հավասարակշռության հիմնախնդիրների նկատմամբ և առաջին պլան մղվեց աճի առավելագույն տեմպերի ապահովման հիմնախնդիրը՝ պայմանավորված գիտատեխնիկական առաջընթացով, արտադրության կազմակերպման կատարելագործմամբ և աշխատանքի արտադրողականությամբ: Նորդասական տեսաբանները վերանայեցին ոչ միայն տնտեսական աճի տեսական հիմքը, այլև դրա վերլուծության մեթոդները: Այդ ժամանակաշրջանում զարգացած երկրներում կտրուկ մեծացավ խոշոր կազմակերպությունների դերը: Վերջին-

[135] **Бреннер Р.,** Причины экономического роста, http://www.inliberty.ru/library/285-prichiny-ekonomicheskogo-rosta.

[136] Նույն տեղում, էջ 3:

ներս, հիմնվելով աճի քեյնսյան տեսությունների վրա, մշակում էին սեփական ռազմավարական ծրագրեր՝ օգտագործելով գծային ծրագրավորման մեթոդներ: Խոշոր կազմակերպությունների կողմից ինքնուրույն տնտեսական քաղաքականության մշակումն ու իրականացումը մեծապես նպաստեցին նորդասական տեսության ներկայացուցիչների հետաքրքրության ցուցաբերմանը տնտեսական աճի նոր պատճառների, աղբյուրների բացահայտման նկատմամբ: Այսպես՝ Ռ. Սոլոուն և Ջ. Միդը դեմ էին արտահայտվում տնտեսության կարգավորման պետական միջամտությանը, պնդելով, որ խոշոր կազմակերպություններին անհրաժեշտ է ընձեռել լայն հնարավորություններ սեփական ռեսուրսներով առավելագույն արդյունք ստանալու համար: Աճի նորդասական տեսությունների համար մեթոդաբանական հիմք հանդիսացան արտադրության գործոնների դասական և սահմանային արտադրողականության տեսությունները՝ համաձայն որոնց արտադրության գործոնների սեփականատերերի եկամուտը պայմանավորված է այդ գործոնների սահմանային արտադրողականությամբ: Այս տեսությունների կողմնակիցները քննադատում էին աճի քեյնսյան տեսությունները՝ հետևյալ ուղղություններով.

- այստեղ թերագնահատվում են մարդկային կապիտալում ներդրումների դերը և արտադրության կազմակերպման նոր եղանակների արդյունավետությունը,
- տեսաբանները հիմնվում են այն ենթադրության վրա, որ կապիտալի մասնաբաժինը եկամտի մեջ անփոփոխ է, մինչդեռ նորդասական մոդելներում ենթադրվում է, որ աշխատանքը և կապիտալը փոխարինելի գործոններ են, և կապիտալի և աշխատանքի հարաբերակցությունը կարող է փոփոխվել՝ ապահովելով թողարկման միևնույն մակարդակը,
- քեյնսյան տեսությունները թերագնահատում են շուկայական կառուցակարգի ինքնակարգավորման ներուժը, այնինչ, նորդասականների կարծիքով, միայն մրցակցային տնտեսական համակարգը կարող է ապահովել հավասարակշռված տնտեսական աճ: Իհարկե, մրցակցային կառուցակարգից զատ, նրանք կարևորում են նաև կայուն դրամական համակարգի դերը և դեմ են գնաճային ռիսկեր պարունակող պետական ծախսերի աճին:

Աճի նորդասական տեսությունն ամփոփ կերպով ներկայացված է

Ռ. Սոլոուի «Ներդրում տնտեսական աճի տեսության մեջ» (1956) հոդվածում[137], իսկ հետագայում՝ «Տեխնիկական առաջընթացը և ագրեգացված արտադրական ֆունկցիան» (1957) աշխատության մեջ: Ռ. Սոլոուն հիմնավորել է, որ քեյնսյան մոդելներում դինամիկ հավասարակշռության և կայունության պատճառը ռեսուրսների անփոխարինելիության կանխադրույթն է: Ուստի Վ. Լեոնտևի ֆունկցիայի փոխարեն նա կիրառել է Քոբ-Դուգլասի արտադրական ֆունկցիան, որտեղ աշխատանքը և կապիտալը փոխարինելի են: Ռ. Սոլոուի մոդելը հիմնված է հետևյալ կանխադրույթների վրա.

- կայուն հատույց մասշտաբից, երբ (α+β=1),
- անփոփոխ ամորտիզացիայի նորմա,
- ներդրումային լագերի բացակայություն:

Հարկ է նշել, որ ռեսուրսների փոխարինելիությունն այս մոդելում պայմանավորված է ոչ միայն տեխնոլոգիայով, այլև ռեսուրսների շուկայում կատարյալ մրցակցության առկայության նորդասական կանխադրույթով: Ռ. Սոլոուի տեսությունը բացահայտում է տնտեսական աճի երեք կարևոր գործոնների՝ ներդրումների, աշխատուժի թվաքանակի և տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխազդեցությունը: Այս մոդելի միջոցով հնարավոր է պատկերացում կազմել, թե տնտեսական համակարգի տրված պարամետրերի (բնութագրիչների) պարագայում առավելագույն աճի ինչ տեմպ է հնարավոր ապահովել՝ այն հաշվով, որ առավելագույնի հասցվեն մեկ շնչին ընկնող եկամուտն ու սպառման մակարդակը: Ռ. Սոլոուի մոդելն արտացոլում է ոչ միայն լրիվ զբաղվածության պայմաններում հավասարակշռված տնտեսական աճի ապահովման հնարավորությունը, այլև վերջինիս կայունությունը, այսինքն՝ շուկայական կառուցակարգի միջոցով կայուն հետագծով զարգանալու հնարավորությունը (steady-state): Սակայն, նման զարգացման միակ կարևոր գործոն է գիտատեխնիկական առաջընթացը, որը Ռ. Սոլոուն դիտարկում է որպես էկզոգեն (արտաքին): Էկզոգեն փոփոխականներ են համարվում նաև խնայողության նորման, բնակչության աճի տեմպը, ամորտիզացիայի նորման: Ռ. Սոլոուի մոդելի հետագա կատարելագործման ուղղությամբ աշխատող հեղինակները նշված փոփոխականները կամ դրանց մի մասը սկսեցին

[137] **Solow R. A.,** Contribution to the Theory of Economic Growth. Quarterly Journal of Economic, Vol. 70, N 1, 1956, p. 65-94.

դիտարկել որպես էնդոգեն (ներքին) փոփոխականներ:

Թեև Ռ. Սոլուի մոդելը շատ ընդհանրական է և հաշվի չի առնում տնտեսական աճի սոցիալական, ինստիտուցիոնալ, քաղաքական և բաշխման գործոնները, այնուամենայնիվ որոշ հեղինակներ փորձեցին այն կիրառել տարբեր, այդ թվում՝ «երրորդ աշխարհի» երկրների տնտեսական աճի գնահատման համար: 68 զարգացող երկրների տնտեսական աճի գնահատման համար ՀԲ իրականացրած հետազոտությունները վկայում էին այն մասին, որ տնտեսական աճի տեմպն այդ երկրներում մեծապես պայմանավորված էր աշխատանքի և կապիտալի ծախսումների աճով, մինչդեռ ԸԳԱ-ն շատ ցածր էր (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Տնտեսական աճի գործոնների գնահատում
(68 զարգացող երկրների համար՝ 1960-1987 թթ.-ին)[138]

Տարածաշրջաններ	*ՀՆԱ աճ (%)*	*Աշխատանքի ներդրում (%)*	*Կապիտալի ներդրում (%)*	*ԸԳԱ (%)*
Աֆրիկա	3,3	1,0	2,3	0,0
Արևելյան Ասիա	6,8	1,1	3,8	1,9
Արևելյան Եվրոպա, Արևելյան և Հյուսիսային Աֆրիկա	5,0	0,7	2,9	1,4
Լատինական Ամերիկա	3,6	1,2	2,4	0,0
Հարավային Ասիա	4,4	0,9	2,9	0,6
Բոլոր 68 երկրների համար	4,2	1,0	2,6	0,6

Ներկայացված իրավիճակի պատճառները, իհարկե, բազմաթիվ են, բայց Ռ. Սոլոուի մոդելի համատեքստում դրա պատճառն այն է, որ զարգացող երկրներում բնակչության աճի տեմպերը, որպես կանոն, գերազանցում են զարգացած երկրների նույն ցուցանիշը, հետևաբար՝ կապիտալազինվածության կայունություն հաստատվում է համեմատաբար ցածր մակարդակում: Բացի այդ, նշված մոդելի շրջանակում բնակչության աճի տեմպը դիտարկվում է որպես հաստատուն մեծություն, մինչդեռ բնակչության բնական աճի տեմպը գործնականում կախված է ոչ միայն ծնելիության և մահացության մակարդակից, այլև միգրացիայի տեմպից, որը կարող է լինել դրա-

[138] World development Report 1991: The Challenge of Development, Washington, 1991, ch. 2, p. 43.

կան, բացասական կամ զրոյական: Արդյունքում կարող է հաստատվել ոչ կայուն հավասարակշռություն, ինչն առավելապես բնորոշ է «երրորդ աշխարհի» երկրներին:

Ռ. Սոլոուի մոդելի գնահատման փորձ է կատարել նաև Է. Դենիսոնը[139], որն անդրադարձել է տնտեսական աճի մնացորդային գործոնին, այսպես կոչված՝ «Սոլոուի մնացորդին»: Հետազոտության արդյունքները վկայում էին տնտեսական և մնացորդի աճի տեմպերի զուգամիտության մասին:

1950-1970 թթ.-ին իրականացվեցին բազմաթիվ էմպիրիկ հետազոտություններ, որոնց հիմնական նպատակն էր Ռ. Սոլոուի մոդելի հավաստիության գնահատումն ու հետագա կատարելագործման ուղիների փնտրումը: Դրանց արդյունքները (տարբեր երկրների կտրվածքով) ամփոփ ձևով ներկայացրել է Ն. Կալդորը հետևյալ տիպային փաստերի (stylized facts) միջոցով[140].

1. ժամանակի ընթացքում մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ մեծությունն աճում է, և դրա աճի տեմպն ունի նվազման միտում,
2. մեկ աշխատողին բաժին ընկնող կապիտալը (կապիտալազինվածությունը) ժամանակի ընթացքում աճում է,
3. իրական տոկոսադրույքը գրեթե անփոփոխ է,
4. ֆիզիկական կապիտալի և թողարկման ծավալի հարաբերակցությունը հաստատուն է,
5. աշխատանքի և ֆիզիկական կապիտալի մասնաբաժիններն ազգային եկամտի կառուցվածքում գրեթե հաստատուն են,
6. տարբեր երկրներում մեկ աշխատողի հաշվով թողարկման աճի տեմպերն էականորեն տարբերվում են:

Նշված փաստերն այսօր էլ չեն կորցրել իրենց արդիականությունը և հաճախ արտացոլում են նորդասական տեսության դրույթների ճշմարտացիությունը: Իհարկե, ժամանակի ընթացքում ի հայտ են գալիս նոր փաստեր, որոնք հակասում են նշվածներին, աճի նոր գործոններ, որոնք չեն կարող բացատրվել նորդասական տեսության շրջանակում: Գնալով առավել ծանրակշիռ դիտարկումներ են պա-

---

[139] **Денисон Э.,** Иследование различий в темпах экономического роста, “Прогресс”, М., 1971, стр. 645.

[140] **Kaldor N.,** Capital Accumulation and Economic Growth, Macmillan& GO LTD 1961, p. 177-222, **Lutz F., Hague D.,** The Theory of Capital, Proceedings of a Conference held by the International Economic Association, London, 1961, p. 1-94.

հանջվում կայուն տնտեսական աճի «շարժչի», մոդելի յուրօրինակ «սև արկղի»՝ գիտատեխնիկական առաջընթացի վերաբերյալ: Տեխնիկական առաջընթացի էկզոգեն բնույթն ի սկզբանե եղել է մոդելի լուրջ թերություններից մեկը, որը հետագա ուսումնասիրությունների դրդապատճառ է դարձել, և 1980-ական թթ. կեսերին ծագել են տնտեսական աճի նոր տեսություններ, որոնք առայսօր բուռն զարգացում են ապրում: Այդ ժամանակաշրջանում իրականացված տեսական և գործնական հետազոտությունները, լինելով բավական լայնաճավալ, ընդգրկել են աշխարհի գրեթե բոլոր երկրները և հիմնվել վիճակագրական տվյալների հսկայական բազայի վրա: Արդյունքում պարզվել է, որ տարբեր երկրներում տնտեսական աճի պատճառները, տիպերը, տեմպերը և բնույթը էականորեն տարբերվում են միմյանցից: Որոշ երկրներ (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա) ապահովել են կայուն, երկարաժամկետ, մյուսները՝ բարձր տնտեսական աճ, որը ժամանակի ընթացքում աստիճանաբար նվազել է (Ճապոնիա, Իտալիա), մյուսներն էլ երկարատև արագ աճից հետո անսպասելի անկում են արձանագրել (օրինակ՝ Բրազիլիայում 1965-1980 թթ. 4.2% տարեկան տնտեսական աճին հաջորդեց 1980-1992 թթ. երկարատև անկումը):

Լ.Պրիտչետը վերլուծել է տարբեր երկրների տնտեսական աճի տեմպերի փոփոխման շարժընթացը՝ ըստ այդմ դասակարգելով դրա տիպերը (111 երկրի օրինակով) 1960-1992 թթ.-ին[141]: Նա յուրաքանչյուր երկրի համար ենթադրել է որևէ «շրջադարձային կետ» (break point)՝ քննարկելով աճի տեմպի հետագիծն այդ կետից առաջ և հետո: Նա առանձնացրել է տնտեսական աճի վեց տիպ՝ անվանելով «զառիթափ բլուր» (sleep hills), «բլուր» (hills), «սարահարթ» (plateaus), «սար» (mountains), «դաշտավայր» (plaihts), «արագացուցիչ» (accelerators or «denver»): «Զառիթափ բլրին» բնորոշ է ՀՆԱ հավասարաչափ, բարձր աճը շրջադարձային կետից առաջ և հետո (տարեկան 3%-ից բարձր): Նման աճ գրանցածների թվին են դասվում Արևելյան Ասիայի երկրները (Ճապոնիա, Հարավային Կորեա, Սինգապուր և այլն), Կիպրոսը, Մալթան, Իռլանդիան, Բոթսվանան: «Բլուրները» բնութագրվում են կայուն տևական տնտեսական աճով:

[141] **Pritchett L.,** Understanding Patterns of Economic Growth, The World Bank Economic Review, 2000, Vol. 14, № 2, p. 221-250.

Դրանց թվին են դասվում ԱՄՆ-ն, Ավստրալիան, Կանադան, Արևմտյան Եվրոպայի, Ասիայի երկրները (Չինաստան, Բիրմա, Ֆիլիպիններ և այլն), որոշ լատինաամերիկյան պետություններ (Բարբադոս, Կոլումբիա, Կոստա Ռիկա): «Սարահարթերին» են դասվում այն երկրները, որոնք մինչև շրջադարձային կետին հասնելը գրանցել են բարձր աճ (1.5%-ից ավելի), ապա անկում (0-1.5%): Այս շարքում է 16 երկիր՝ Բրազիլիա, Սալվադոր, Գվատեմալա, Հոլանդիա, Իսպանիա, Շվեդիա, Եթովպիա, Քենիա, Լեսոտո, Մարոկկո և այլն: «Սարեր» տիպին դասվող երկրներին բնորոշ է աճի բարձր տեմպ (1.5%-ից ավելի) մինչև շրջադարձային կետը, ապա բացասական: Այս շարքին են դասվում Մեծ Բրիտանիան, Իրանը, Իրաքը, Սիրիան և լատինաամերիկյան շատ երկրներ:

«Դաշտավայր» տիպի երկրներին դիտարկվող ողջ ժամանակաշրջանում բնորոշ է եղել աճի ցածր տեմպը (մինչև 1.5%) (օրինակ՝ Սենեգալը՝ 0.18%):

«Արագացուցիչ» շարքին են դասվում աճի արագացող տեմպով երկրները՝ Ինդոնեզիա, Հնդկաստան, Շրի Լանկա, Չիլի, Ուրուգվայ, Գանա, Մավրիկիա:

Փաստորեն, զարգացող և որոշ զարգացած երկրների համար տնտեսական աճը բնութագրվում է անկայունությամբ: Բացի այդ, բավական մեծ ճեղքվածք կա տարբեր երկրների (մասնավորապես՝ զարգացող) աճի տեմպերի միջև, որը չունի կրճատման միտում: Զարգացած երկրների առումով, աճի տեմպերի միջև եղած ճեղքվածքը կրճատման որոշակի միտում ունի, մինչդեռ զարգացող երկրների համար՝ ընդլայնման:

Վերոնշյալ արդյունքները, իհարկե, չեն կարող բացատրվել նորդասական տեսության շրջանակում (բացահայտում է զուգամիտությունը) և զուտ տնտեսական գործոններով:

Կատարվել են նաև շատ հետազոտություններ, որտեղ փորձ է արվել գնահատելու տնտեսական աճի վրա ազդող բազմաթիվ այլ գործոններ, ինչպիսիք են կոռուպցիան (Mauro, 1995), ժողովրդավարությունը (Barro, 1997), կրթությունը (Barro, Lee, 1994), ֆինանսական շուկաները (Easterly, 1997), Sala-I Martin, 1997), պետական ծախսերի շարժընթացը (Kormendi Mequine, 1985, Levine, Renelt, 1992), եկամտային անհավասարությունը (Alensia, Rodrik, 1994), քաղաքացիական ազատությունը (Barro, Lee, 1994), պատերազմները (Easterly,

Kremer, Pritchett, 1993) և այլն: Կրթության և տնտեսական աճի միջև եղած կապի ուսումնասիրումը (Barro, Lee և այլք) հետագայում հիմք է հանդիսացել մարդկային կապիտալի հաշվառմամբ տնտեսական աճի մոդելների ստեղծման համար: Ժամանակակից էմպիրիկ հետազոտությունների արդյունքներն ամփոփել են Վ. Իսթերլին և Ռ. Լևինը[142]՝ ներկայացնելով հետևյալ տիպական փաստերը.

- տարբեր երկրների տնտեսական աճի մակարդակի տարբերությունները պայմանավորված են ոչ թե արտադրության գործոնների կուտակման մակարդակով, այլ ԸԳԱ-ով,
- տարբեր երկրներում տնտեսական աճի տեմպերը տարբեր են ու ոչ կայուն, սակայն կապիտալի կուտակման տեմպերը կայուն են և բավականաչափ հաստատուն,
- արտադրության բոլոր գործոններն աճում են միաժամանակ՝ փոխներգործելով և առաջացնելով արտաքին էֆեկտներ,
- տնտեսական քաղաքականությունն ազդում է երկարաժամկետ տնտեսական աճի վրա:

Նշված փաստերը, ըստ էության, վկայում են այն մասին, որ անհրաժեշտ է փնտրել տնտեսական աճի վերաբերյալ նոր բացատրություններ, մշակել նոր մոդելներ ու տեսություններ, որոնք համարժեք կլինեն տնտեսական իրականությանը: Այս խնդիրների լուծումը հետազոտողները փորձում են գտնել տնտեսական աճի էնդոգեն տեսությունների շրջանակում՝ հաշվի առնելով վարքագծային և ինստիտուցիոնալ գործոնները:

Աճի էնդոգեն տեսությունները կասկածի տակ են առնում կապիտալի նվազող սահմանային արտադրողականության դրույթը. այսինքն՝ ողջ տնտեսության համար կարող է դրսևորվել մասշտաբից աճող հատույց՝ պայմանավորված արտաքին էֆեկտներով: Վերջիններիս առկայությունն էնդոգեն տեսությունների կարևոր կանխադրույթներից է, որը դրսևորվում է հետևյալում.

1. արտադրական գործընթացում՝ աշխատողների ուսուցման արդյունքում (learning by doing) առաջացող արտաքին էֆեկտները գիտատեխնիկական առաջընթացի էնդոգեն բնույթի հիմնավորման կարևոր գործոն են,

[142] Easterly W., Levine R., It's Not Factor Accumulation: Stylized Facts and Growth Models, the World Bank Economic Review, Vol. 15, No. 2, 2001, p. 177-219.

2. արտաքին դրական էֆեկտները հակազդում են կապիտալի սահմանային արդյունքի նվազմանը՝ նպաստելով կայուն, երկարաժամկետ տնտեսական աճին,
3. արտաքին դրական էֆեկտների կարևոր առանձնահատկություններից է այն, որ գիտական, տեխնոլոգիական նորարարություններից ստացվող աճող հատույցը բաժին է ընկնում ոչ միայն այդ նորարարությունների հեղինակներին, այլև ողջ հասարակությանը:

Բացի այդ, էնդոգեն տեսություններում գիտատեխնիկական առաջընթացը չի համարվում կայուն, երկարաժամկետ տնտեսական աճի միակ կարևոր պատճառը:

Տնտեսական աճի կարևոր որակական բնութագրիչը (Սոլոուի մնացորդը) որոշվում է ըստ հետևյալ գործոնների.

- մարդկային կապիտալի որակ,
- մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությանն անհրաժեշտ պայմանների առկայություն,
- գիտության և տեխնիկայի զարգացմանը միտված պետական քաղաքականություն,
- պետության դերակատարություն բարենպաստ ներդրումային միջավայրի ստեղծման գործում:

Աճի էնդոգեն տեսությունները կարելի է բաժանել երկու խմբի: Առաջինում ընդգրկվում են Ջ. Գրոսմանի և Է. Հելփմանի տեսությունները, որտեղ աճի կարևոր գործոն են համարվում գիտահետազոտական և փորձաինժեներական մշակումները (Research & Development): Հեղինակները, գնահատելով գիտատար նորամուծությունների ազդեցությունը տնտեսական աճի տեմպի վրա, օգտագործել են եռհատվածանի մոդել (գիտահետազոտական և փորձաինժեներական մշակումներ, միջանկյալ և վերջնական ապրանքների արտադրություն), որը հաշվի է առնում նաև մարդկային կապիտալի միջազգային շարժը[143]:

Ֆ. Ագիյոնը և Պ. Հոուվիտը նույնպես տնտեսական աճի կարևոր գործոն են համարել տեխնոլոգիական առաջընթացը, ինչը պայմանավորված է ապրանքային և տեխնոլոգիական նորամուծություններ իրականացնող կազմակերպությունների միջև մրցակցությամբ: Հետազո-

[143] **Grossman G., Helpman E.,** Innovation and Growth in the Global Economy, Cambridge, MA, MIT Press, 1991, p. 359.

տական հատվածի կազմակերպությունների հիմնական շարժառիթը մենաշնորհային (մոնոպոլ) ռենտայի ստացման հեռանկարն է[144]:

Աճի էնդոգեն տեսությունների երկրորդ խմբի պարագայում տնտեսական աճի կարևոր գործոն է համարվում մարդկային կապիտալը: Այդ տեսության առաջամարտիկներից են Փ. Ռոմերը (1986), Ռ. Լուկասը (1988) և Ս. Ռեբելոն (1991): Նրանց մշակած մոդելներում տնտեսական աճը բացատրվում է մարդկային կապիտալում կատարվող ներդրումներով և արտադրական գործընթացն ուղեկցող գործնական ուսուցմամբ (փորձով): Ընդ որում, ուսման ընթացքում առաջացող արտաքին դրական էֆեկտների գոյությունը հակազդում է մարդկային կապիտալի սահմանային արտադրողականության նվազմանը:

Աճի առաջին էնդոգեն մոդելները, որոնք հիմնված էին 1960-ական թթ.-ին իրականացված հետազոտությունների վրա, իրենց ժամանակին լայն տարածում չստացան: Խոսքը Կ. Էրոուի (1962) և Հ. Ուզավայի (1965) մարդկային կապիտալին առնչվող ուսումնասիրությունների մասին է, որոնցում հիմնավորվում էր ուսման ընթացքում առաջացող արտաքին էֆեկտների հաշվառման կարևորությունն աճի մոդելներում[145]:

3.2. Մարդկային կապիտալը որպես տնտեսական աճի գործոն և դրա գնահատման մոտեցումները

Տնտեսական աճի և մարդկային կապիտալի կուտակման փոխազդեցության վերլուծության և մոդելավորման հիմնարար աշխատություն է Ռ. Լուկասի հայտնի վերլուծությունը[146], որտեղ նա հիմնավորում է մարդկային կապիտալի կուտակման կարևոր նշանակությունը

---

[144] **Aghion P., Howitt P.,** Endogenous Growth Theory, Cambridge, MIT Press, 1997, ch. 1, p. 475.

[145] **Arrow K.,** The Economic Implications of Learning-by-doing// Review of Economic Studies, 1962, Arrow K., The Economic Implications of Learning-by-doing// Review of Economic Studies. 29, issue 3, p. 155-173. Uzawa H., Optimal Technical Change in an Aggregative Model of Economic Growth//International Economic Reviwe, 1965, Vol. 3, N 1, p. 18-31.

[146] **Lucas R. E.,** On the Mechanics of Economic Development, "Journal of Monetary Economics", 1988, N 22, p. 3-42.

տնտեսական աճի ապահովման գործում: Ընդ որում, հեղինակը տարբեր երկրների տնտեսական աճի տեմպերի տարբերությունը պայմանավորում էր մարդկային կապիտալի կուտակման տեմպերի տարբերություններով: Ռ. Լուկասը մարդկային կապիտալ էր համարում բարեկեցությունը մաքսիմալացնող ներդրումային որոշումների արդյունքում (տարրական կրթություն, մասնագիտական ուսուցում, աշխատապրոցեսի ընթացքում ուսուցում և այլն) մարդու ձևավորած գիտելիքը, փորձը, հմտությունները: Ընդ որում, մարդկային կապիտալում կատարվող ներդրումները նա դիտարկում էր որպես էնդոգեն գործոն:

Ռ. Լուկասի մոդելում երկարաժամկետ կայուն տնտեսական աճ հնարավոր է ապահովել մարդկային կապիտալի կուտակման կայուն տեմպերի պահպանման պարագայում:

Տնտեսական աճի մոդելն ունի հետևյալ տեսքը.

$$X(t)=K(t)^{a}[uh(t)L(t)]^{1-a}[h(t)]^{w},$$

որտեղ

u - մարդկային կապիտալի ձևավորման վրա կատարված ծախսերն են,

h(t) - ժամանակի t պահին մարդկային կապիտալի պաշարն է,

a - կապիտալի էլաստիկության գործակիցն է,

w - արտաքին էֆեկտները բնութագրող մեծությունն է,

L(t) - ժամանակի t պահին աշխատուժի քանակն է,

K(t) - ժամանակի t պահին ֆիզիկական կապիտալն է:

Ֆիզիկական կապիտալը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\frac{dk}{dt}=pk(t)^{a}\,h(t)^{1-a-w}\cdot u^{1-a}\,(\mu+\eta)\,k(t),$$

որտեղ

p - կապիտալի կուտակման նորման է,

μ - տարվա ընթացքում դուրս գրված ֆոնդերի տեսակարար կշիռն է՝ $0<\mu<1$,

η - զբաղվածների տարեկան աճի տեմպն է՝ $1<\eta<1$:

Առանձին կազմակերպություններում աշխատողների մարդկային կապիտալի պաշարի (h), տնտեսության մասշտաբով մեկ աշխատողի մարդկային կապիտալի միջին պաշարի (h_0) և որոշ կազմակերպությունների թողարկման ծավալների վերլուծության հիման վրա Ռ. Լուկասը հանգեց այն եզրակացության, որ երկրի մասշտաբով մարդկա-

յին կապիտալում ներդրումներ կատարելու անհատական որոշումների արդյունքում համեմատաբար ավելի քիչ ծավալի ներդրումներ են կատարվում մարդկային կապիտալում: Դրա պատճառն այն է, որ որոշ անհատներ մարդկային կապիտալում ներդրումներ կատարելիս հաշվի չեն առնում դրանց ազդեցությունն այլ մարդկանց արտադրողականության վրա: Այսինքն՝ կրթությունից ստացվող սոցիալական հատույցի նորման գերազանցում է անհատական հատույցի նորման: Ռ. Լուկասը ենթադրում էր, որ մարդկային կապիտալի միջին մակարդակի աճը հանգեցնում է որոշ անհատների աշխատանքի արտադրողականության աճին:[147]

Ռ. Լուկասի մոտեցմամբ՝ հնարավոր է գնահատել տնտեսական աճի վրա մարդկային կապիտալի կուտակման ազդեցությունը: Ռ. Նելսոնը և Է. Ֆելպսը (1966), վերլուծելով մարդկային կապիտալի տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության կառուցակարգը, հանգեցին այն եզրակացության, որ զարգացող երկրների նորամուծական հնարավորությունները, տեխնոլոգիաների ընդօրինակման կարողությունը ուղղակիորեն պայմանավորված են երկրի մարդկային կապիտալի պաշարով: Մարդկային կապիտալի պաշար ասելով նրանք հասկանում էին կրթության, մասնագիտական պատրաստման ընթացքում կուտակված գիտելիքների պաշարը, որը տեխնոլոգիական փոփոխություններին հարմարվելու համար անհրաժեշտ կարողությունների զարգացման նախադրյալ է: Այսպիսով՝ մարդկային կապիտալը նպաստում է նորամուծությունների արդյունավետ կիրառմանը, հետևապես՝ տնտեսական աճին: Օգտագործելով Սոլոու Սվանի արտադրական ֆունկցիան՝ Ռ. Նելսոնը և Է. Ֆելպսը A պարամետրի աճը (Սոլոուի մնացորդը) արտահայտեցին հետևյալ կերպ.

$$\frac{\frac{dA}{dt}}{A} = C(H)\ \frac{Tt - At}{At},$$

որտեղ

T_t -ժամանակաշրջանում տեսական գիտելիքի փաստացի մակարդակն է,

A_t -

[147] **Де. Мельмеестер Ж. Л., Дьебо К.,** Экономика образавания: невыполненные обещание, 2009, № 6, стр. 125-131.

գիտ

ելիքի առավելագույն հնարավոր մակարդակն է տվյալ պահին:

Այսինքն՝ A-ի աճի տեմպը կախված է գիտելիքների տեսականորեն հնարավոր առավելագույն և փաստացի մակարդակների միջև եղած տարբերություններից և կուտակված մարդկային կապիտալի (C(H)) մակարդակից:

Մարդկային կապիտալի՝ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության ուսումնասիրությանը նվիրված մի շարք աշխատություններում քննարկվում է հետևյալ խնդիրը. տնտեսական աճը մարդկային կապիտալի կուտակման գործընթացի՞, թե՞ տվյալ պահին կուտակված՝ առկա մարդկային կապիտալի պաշարի արդյունք է: Նշված խնդրի ուսումնասիրությամբ են զբաղվել Ռ. Բարոն և Ֆ. Սալոն և Ս. Մարտինը: Հետազոտությունների ընթացքում նրանք օգտագործում էին մեկ շնչի հաշվով եկամտի աճի ֆունկցիան[148].

$$DY_t=F(Y_{t-1}; h_{t-1};\dots),$$

որտեղ

Y_{t-1}- մեկ շնչին ընկնող ՀՆԱ բազիսային մեծություն է,

h_{t-1} - մեկ շնչի հաշվով մարդկային կապիտալի ելակետային (բազիսային) մեծություն է, որը հիմնված է կրթության և առողջապահության ոլորտում կատարված ներդրումների տվյալների վրա,

…- բաց թողնված փոփոխականներ են, որոնք արտացոլում են շրջակա միջավայրի որակը:

1965-1975 թթ.-ին՝ 87 և 1975-1985 թթ.-ին՝ 97 երկրի կտրվածքով վիճակագրական տվյալների հիման վրա իրականացված հետազոտության արդյունքները վկայում էին բնակչության միջին կրթական մակարդակի և տնտեսական աճի էական կոռելյացիայի մասին: Հաջորդ եզրահանգումն այն էր, որ կրթությանն ուղղվող հասարակական ծախսերը նույնպես էականորեն նպաստում են տնտեսական աճին: Կրթությանն ուղղվող պետական ծախսերի և ՀՆԱ հարաբերակցության 1.5%-ով աճը 1965-1975 թթ.-ին նպաստել է աճի տեմպի արագացմանը 0.3 %-ով: Ռ. Նելսոնի և Է. Ֆելպսի մոդելը զարգաց-

[148] **Шараев Ю. В.,** Теория Экономического роста, учеб. пособие для ВУЗ-ов., М., изд. дом ГУ ВШЭ, 2006, стр. 147.

րին Ի. Բենիաբիբը և Մ. Շպիգելը[149]: Նրանք ենթադրեցին, որ գիտելիքի տեսականորեն հնարավոր և փաստացի մակարդակների միջև տարբերությունը զարգացող երկրներում հնարավոր է համահարթել զարգացած երկրների տեխնոլոգիաների ընդօրինակման ճանապարհով: Նրանք արտադրական ֆունկցիան ձևափոխել են հետևյալ կերպ.

$$Y_t=A_t K^{\alpha}_t L^{\beta}_t H^{\gamma}_t,$$

որտեղ

H_t - կուտակված մարդկային կապիտալն է,

K_t - ֆիզիկական կապիտալն է,

L_t - աշխատողների թվաքանակն է,

α, β, γ – համապատասխանաբար՝ կապիտալի, աշխատանքի և մարդկային կապիտալի ճկունության գործակիցներն են:

Նշված ֆունկցիայի քանակական գնահատման արդյունքում նրանք հանգեցին այն եզրակացության, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ տեմպի վրա մարդկային կապիտալի պաշարն ավելի մեծ ազդեցություն է թողնում, քան դրա ձևավորման և կուտակման տեմպը:

Տնտեսական աճի վրա մարդկային կապիտալի ազդեցության գնահատման տեսանկյունից, ամենալայն կիրառություն ունեցող մոդելներից է Մենքյու-Ռոմեր-Ուեյլինը (1992 թ.), որը, ըստ էության, Քոբ-Դուգլասի և Ռ. Սոլոուի բազային մոդելների մոդիֆիկացումն է՝ հիմնված մարդկային կապիտալի գործոնի հաշվառման վրա[150]:

Նրանց առաջարկած մոդելն (MRW) ունի հետևյալ տեսքը.

$$Y_t=K^{\alpha}_t H^{\beta}_t (A_t L_t)^{1-\alpha-\beta},$$

որտեղ

H_t - մարդկային կապիտալի պաշարն է,

A_t - գիտատեխնիկական առաջընթացի գործոնն է, որը ժամանակի ընթացում փոփոխվում է տրված է տեմպով,

K_t –ֆիզիկական կապիտալն է,

α – ֆիզիկական կապիտալի ճկունության գործակիցն է՝ $0<\alpha<1$,

β – մարդկային կապիտալի ճկունության գործակիցն է՝ $0<\beta<1$:

Բնակչության աճի տեմպը կայուն է (n), կայուն են նաև ամորտի-

[149] **Корицкий А. В.,** Запас человеческого капитала как фактор экономического роста в регионах России, “Креативная экономика”, 2007, № 4, стр. 47-54.

[150] **Mankiv N. G., Romer D., Weil N.,** A Contribution to the Empirics of Economic Growth, “Quanterly Journal of Economics”, 1992, V. 107, N 2, p. 407-437.

զացիայի նորման (δ), ֆիզիկական կապիտալի կուտակման նորման (S_k) և մարդկային կապիտալի կուտակման նորման (S_h). մեկ աշխատողին բաժին ընկնող մարդկային կապիտալը՝ h=H/AL, մեկ աշխատողի հաշվով թողարկումը՝ y=Y/AL, և մեկ աշխատողին բաժին ընկնող ֆիզիկական կապիտալը՝ k=K/AL: Այսինքն՝ ինտենսիվ ֆունկցիան կունենա հետևյալ տեսքը.

$$Y=k^{\alpha} h^{\beta}:$$

Դիտարկենք աշխատողի հաշվով ֆիզիկական կապիտալի աճը՝ k (t).

$$K(t)=S_K Y(t)-(n+g+\delta)\, k(t), \text{ որտեղ}$$

k(t)=0՝ $S_K Y(t)-(n+g+\delta)\, k(t)$-ի դեպքում:

Այս պայմանը համարժեք է.

$$k=\left(\frac{S_k}{n+g+\delta}\right)^{1-\alpha} h^{\frac{\beta}{1-\alpha}}:$$

Մեկ աշխատողի հաշվով մարդկային կապիտալի շարժընթացը բնութագրվում է հետևյալ հավասարմամբ.

$$h(t)= S_h y(t)-(n+g+\delta)k\ (t), \text{ որտեղ}$$

h(t)=0՝ $S_h y(t)=(n+g+\delta)k\ (t)$-ի դեպքում:

Այս պայմանը համարժեք է.

$$k=\left(\frac{n+g+\delta}{S_h}\right)^{\frac{1}{\alpha}} h^{\frac{1-\beta}{\alpha}}:$$

Կայուն հավասարակշռության պայմաններում k(t)=h(t)=0, այստեղից՝

$$k^{*}=\left(\frac{S_k^{1-\beta} S_h^{\beta}}{n+g+\delta}\right)^{\frac{1}{1-\alpha-\beta}}$$

$$h^{*}=\left(\frac{S_k^{\alpha} S_h^{1-\alpha}}{n+g+\delta}\right)^{\frac{1}{1-\alpha-\beta}}:$$

Տեղադրելով K* և h* արտադրական ֆունկցիայի մեջ և լոգարիթմելով՝ ստացվում է.

$$\ln\frac{Y(l)}{L(l)}=\ln A(0)+gt+\frac{\alpha}{1-\alpha-\beta}\ln\left(S_k\right)+\frac{\beta}{1-\alpha-\beta}\ln\left(S_h\right)-\frac{\alpha+\beta}{1-\alpha-\beta}\left(n+g+\delta\right):$$

Այս հավասարումը բնութագրում է միջին շնչային եկամտի կախվածությունը բնակչության աճի, ֆիզիկական և մարդկային կապի-

տալի կուտակման տեմպից: Ինչպես և Սոլուիի դասական մոդելում, այստեղ նույնպես ենթադրվում է, որ α-ն հավասար է 1/3-ի: Մարդկային կապիտալի ներդրումը տնտեսական աճի մեջ գնահատելը շատ ավելի բարդ է, բայց Գ. Մենքյուն, Դ. Ռոմերը և Դ. Ուեյլը ենթադրում են, որ նվազագույն աշխատավարձն արտացոլում է աշխատանք գործոնի հատույցն առանց մարդկային կապիտալի: ԱՄՆ-ում այն միջին աշխատավարձի 30-50%-ն է, հետևաբար՝ մնացած 50-70%-ը ապահովվում է մարդկային կապիտալի հաշվին: Ուստի՝ β=1/3-1/2:

Օրինակ՝ եթե α=β=1/3, ապա $l_n(S_k)=1$:

Այստեղից հետևում է.

1. Եթե խնայողությունների աճը հանգեցնում է եկամտի աճին, ապա այդ հանգամանքը պայմանավորում է նաև մարդկային կապիտալի ավելի բարձր, կայուն մակարդակում լինելն անգամ այն դեպքում, երբ մարդկային կապիտալի կուտակմանն ուղղվող եկամտի մասնաբաժինը չի փոփոխվում:

2. $l_n(n+g+δ)$-ի գործակիցը բացարձակ մեծությամբ պետք է ավելի մեծ լինի $l_n(S_k)$-ի գործակցից: Եթե բերված օրինակում α=β=1/3, ապա նշանակում է, որ $l_n(n+g+δ)$ հավասար է 2-ի: Ակնհայտ է, որ խնայողությունների աճի տեմպը դրականորեն է անդրադառնում «h*»-ի վրա, իսկ բնակչության աճի տեմպը՝ բացասաբար:

Մոդելի փորձարկումն իրականացվել է 1960-1985 թթ.-ի կտրվածքով՝ երեք խումբ երկրների համար՝ ՏՀԶԿ, զարգացման միջին մակարդակ ունեցող և նավթարդյունահանող: Փորձարկման արդյունքները վկայում էին տնտեսական աճի ապահովման գործում մարդկային կապիտալի էական նշանակության մասին նշված բոլոր երկրներում: Բացի այդ, զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներում միջին շնչային եկամուտների մակարդակների տարբերության 80%-ը պայմանավորված է մարդկային կապիտալի տարբերություններով: Ճկունության գործակիցները զարգացող երկրներում կազմել են՝ α=0.31, β=0.28, ինչը վկայում է ֆիզիկական և մարդկային կապիտալի գրեթե հավասար նշանակության մասին: Զարգացած և զարգացման միջին մակարդակ ունեցող երկրներում մարդկային կապիտալն ավելի մեծ դեր ունի տնտեսական աճի ապահովման գործում՝ ֆիզիկական կապիտալի համեմատությամբ.

ՏՀԶԿ երկրների համար՝ α=0.14, β =0.37, իսկ միջին զարգացածություն ունեցող երկրների համար՝ α=0.29, β =0.30:

Նշենք, որ այս մոդելի հեղինակները քննարկում էին նաև α + β=1 էնդոգեն աճի դեպքը՝ զուգամիտության հիմնախնդրի լուծման ակնկալիքով: Արդյունքում նրանք հանգել են այն եզրակացության, որ Ռ. Սոլոուի մոդելում, անգամ՝ մարդկային կապիտալի հաշվառմամբ, զուգամիտությունը հարաբերական է, որն այս մոդելում առավել ցայտուն կերպով է արտահայտվում:

MRW մոդելը հետագայում կիրառել են շատ հետազոտողներ, որոնք դրա հիման վրա առաջարկել են մարդկային կապիտալի գնահատման այլընտրանքային տարբերակներ: Այսպես՝ Հելը և Ջոնսը (1999), Բիլսը և Քլենոուն (2000), Կասելին (2004)[151] արտադրական ֆունկցիան ներկայացնում էին հետևյալ կերպ.

$$Y=K^{\alpha}(AH)^{1-\alpha}:$$

Այստեղ մարդկային կապիտալը կախված է ուսման տևողությունից՝ (E).

$$H=e^{\varphi(E)}L,$$

որտեղ

L- աշխատողների թվաքանակն է,

$e^{\varphi(E)}$- աշխատուժի արդյունավետությունն է:

Աշխատուժի արդյունավետության գնահատման համար նրանք հաշվի էին առնում սոցիալական ինստիտուտների դերը, քաղաքական գործոնները և երկրների աշխարհագրական դիրքը: Դրա նպատակն էր բացահայտել երկրների միջև տարբերությունները պայմանավորող հիմնական գործոնները: Մոդելի փորձարկման արդյունքում նրանք եկան այն եզրահանգման, որ սոցիալական ենթակառուցվածքը մեծապես պայմանավորում է աշխատանքի արտադրողականությունը: Ս. Պարկը նման մոտեցումը համարում է թերի, քանի որ վերջինս հաշվի չի առնում բուն մարդկային կապիտալը, այլ միայն դրա ազդեցությունն աշխատուժի արդյունավետության վրա[152]: Գործնականում մարդկային կապիտալն անմիջականորեն ազդում է թողարկման ծավալների վրա, հետևաբար՝ այն պետք է առավել ակնհայտ ձևով ընդգրկվի մոդելների մեջ: Ս. Պարկն առաջարկում է կուտակված մարդկային կապիտալի հաշվարկման այլ եղանակ՝ ըստ կրթու-

[151] **Hall R., Jones C.,** Why Do Some Countries Produce so Much More Output per Worker than Others?, "Quarterly Journal of Economics", 1999, V. 114., N 1, p. 83-116.

[152] **Mankiw G., Romer D., Weil D.,** A Contribution to the Empirics of Economic Growth, "The quarterly Journal of Economic", 1992, V. 107, N 2, p. 407-437.

թյան համար կատարվող ներդրումների հաշվարկման: Մարդկային կապիտալում կատարվող ներդրումները (S_h) հավասար են կրթության համար կատարվող ուղղակի (S_{h1}) և անուղղակի (S_{h2}) ծախսերի հանրագումարին: Կրթության ուղղակի ներդրումներն իրականացնում են պետությունն ու մասնավոր (տնային տնտեսություններ, բիզնես) հատվածը, իսկ անուղղակի ներդրումները հավասար են բաց թողնված եկամտին: Անուղղակի ծախսերը Ս. Պարկը գնահատում է՝ ելնելով միջին աշխատավարձի մակարդակից: Նա հաշվարկներ է կատարել 22 երկրի համար, հանգելով այն եզրակացության, որ անուղղակի ծախսերը գրեթե հավասար են ուղղակի ծախսերին:

Ամփոփելով վերը ներկայացված մոդելները՝ կարող ենք ասել, որ տնտեսական աճի նոր մոդելները, ընդհանուր առմամբ, արտացոլում են մարդկային կապիտալի կարևոր նշանակությունը տնտեսական աճի ապահովման գործում և առավել հիմնավորված են ներկայացնում երկրների զարգացման տեմպերի միջև եղած տարբերությունները՝ պայմանավորելով դրանք մարդկային կապիտալի մակարդակների միջև եղած տարբերություններով: Այնուհանդերձ, նշված բոլոր մոդելները զերծ չեն թերություններից: Նախևառաջ դրանք հիմնված են մարդկային կապիտալի նվազող սահմանային արտադրողականության կանխադրույթի վրա, ինչը չի ապացուցվում գոյություն ունեցող փորձնական տվյալներով: Էմպիրիկ տվյալները հերքում են նաև մասշտաբից կայուն հատույցի կանխադրույթը: Փորձագիտական տվյալները վկայում են երկարաժամկետ հատվածում աճող հատույցի փաստի մասին: Այսպես՝ Մ. Տոդարոն նշում է, որ աճի էնդոգեն մոդելների փորձարկման արդյունքները հերքում են կապիտալի նվազող սահմանային արտադրողականության նոր դասական կանխադրույթը և թույլ են տալիս ենթադրել, որ ողջ տնտեսության կտրվածքով գործում է մասշտաբի դրական էֆեկտը՝ պայմանավորված արտաքին էֆեկտների ազդեցությամբ[153]: Նշենք, որ Պ. Ռոմերը նույնպես չէր բացառում, որ ագրեգացված արտադրական ֆունկցիան կարող է բնութագրվել մասշտաբի աճող հատույցով[154]: Ընդ որում, նա ապացուցեց, որ աճող հատույցը հնարավոր է միայն այն պարագայում, երբ

[153] **Тодаро М. П.,** Экономическое развитие, пер. с англ.под ред. Яковлева С. М., Зевина Л. З., М., Экономический факультет МГУ, ЮНИТИ, 1997, стр. 95.

[154] **Romer Paul M.,** Increasing returns and long-run growth, Journal of political economy, 1986, Vol 94, N 5, p. 1013.

նոր գիտելիքները ներդրվում և կիրառվում են արտադրության մեջ[155]:

Նշված մոդելների գործնական գնահատման ժամանակ դրսևորված աճող հատույցը պայմանավորված է երկարաժամկետում հենց մարդկային կապիտալի աճող հատույցով, ինչը դրսևորվում է ոչ թե առանձին անհատների, այլ ողջ հասարակության կտրվածքով: Հետևաբար՝ էնդոգեն մոդելների հետագա կատարելագործումները պետք է հիմնված լինեն այս կանխադրույթի վրա: Նշված մոդելների թերություններից կարելի է համարել նաև այն, որ դրանցից ոչ մեկը չի բացատրում մարդկային կապիտալի և տնտեսական աճի փոխազդեցության կառուցակարգը: Գրեթե բոլոր մոդելներում անուղղակիորեն ենթադրվում է, որ մարդկային կապիտալի կուտակման գործընթացը կամ կուտակված մարդկային կապիտալի պաշարը կայուն, երկարաժամկետ տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ և բավարար պայման է: Նման մոտեցումները միակողմանի են, քանի որ տնտեսական աճը և տնտեսական զարգացումը պայմանավորված են ոչ միայն մարդկային կապիտալի պաշարով, մարդկային կապիտալում ներդրումների աճի տեմպով, այլև մարդկային կապիտալի արդյունավետ իրացմամբ: Մարդկային կապիտալի ներդրումները տնտեսական աճի ներուժային գործոն են: Մարդկային կապիտալը զարգացման աղբյուր է դառնում միայն արդյունավետ օգտագործման դեպքում, երբ ստեղծված են դրա իրացման համար անհրաժեշտ տնտեսական, սոցիալական, ինստիտուցիոնալ նախադրյալներ: Այս հանգամանքն էլ ավելի է կարևորվում զարգացող երկրների դեպքում, որոնց մեծ մասում կուտակված է մարդկային կապիտալի մեծ պաշար, բայց անարդյունավետ իրացման պայմաններում այն չի կարող ապահովել համարժեք տնտեսական աճ:

Տնտեսական աճի էնդոգեն մոդելներում անհրաժեշտ է հաշվի առնել մարդկային կապիտալի իրացման մակարդակը, ինչը կնպաստի մոդելների որակի կատարելագործմանը: Մարդկային կապիտալի իրացման մակարդակի ցուցանիշի ընդգրկումն աճի մոդելներում թույլ կտա առավել հիմնավոր ձևով բացատրել երկրների միջև աճի տեմպերի, ինչպես նաև աճի «որակի» տարբերությունները: Բացի այդ, հնարավոր կլինի բացահայտել երկրների տնտեսական աճի տարամիտության խորքային պատճառները:

[155] Նույն տեղում, էջ 1002-1037:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ղարիբյան Գ., Խառատյան Ա., Իսահակյան Ռ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները անկախության տարիներին, 2017, 340 էջ:
2. Եղիազարյան Բ.Հ., Գյուրջյան Ա.Ս., Եղիազարյան Ն.Բ., Մարդկային կապիտալը հասարակության զարգացման հիմնական գործոն, ուսումնական ձեռնարկ, ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվ. տնտես. ինստ., 2007, 328 էջ:
3. Ղուշչյան Հ.Բ., Ղանթարչյան Ռ.Ս., Մարդկային կապիտալի վերարտադրության պետական կարգավորումը, ուսումնական ձեռնարկ, 2009,159 էջ:
4. Գրիգորյան Ս., Տնտեսական աճի ժամանակակից էնդոգեն տեսությունները, «Գլաձոր» համալսարանի գիտական աշխատանքների ժողովածու, 2015, էջ 13:
5. Դավոյան Ս., Մելիքյան Դ., Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները, տնտեսական աճը և գների կայունությունը անցումային տնտեսություն ունեցող երկրներում, ամսագիր՝ «Рынок капитала в Армении», սեպտեմբեր, 2001, էջ 30:
6. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը, Եր., 2001, էջ 91:
7. Սուվարյան Յու., Սարգսյան Վ., Վարդանյան Գ., Գիտության և կրթության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա, «Տնտեսագետ» հրատ., Եր., 2010, «Բանբեր ՀՊՏՀ», N 1:
8. Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008:
9. Аширова Г. Т., Современные проблемы оценки человеческого капитала, “Вопросы статистики”, 2003, N 3, стр. 26-31.
10. Барр Р., Политическая экономия, М., 1995, том 2, стр. 98.
11. Бек У., Общество риска. На пути к другому модерну, пер. с нем., М., Прогресс Традиция, 2000, стр. 38.
12. Беккер Г. С., Человеческое поведение: экономический подход. Избранные труды по экономической теории, М., ГУ-ВШЭ, 2003, стр. 39.
13. Беккер Г. С., Человеческий капитал (главы из книг). Воздействие на заработки инвестиций в человеческий капитал, США. Экономика, политика, идеология, 1993, N 11, стр. 109-11.
14. Белл Д., Грядущее постиндустриальное общество. Опыт социального прогнозирования, М., Academia, 2004, стр. 548.
15. Блауг М., Методология экономической науки, или как экономисты обьясняют, пер. с англ./ науч. ред. Автономов. В. С., М., НП “Журнал вопросы экономики”, 2004, стр. 416.

16. Бобылев С. Н., Зубаревич Н. В., Соловьева С. В., Власов Ю. С., Устойчивое развитие: методология и методики измерения, изд-во «Экономика», 2011, стр. 15-16.
17. Бреннер Р., Причины экономического роста, http://www.inliberty.ru/library/285-prichiny-ekonomicheskogo-rosta.
18. Бурда М., Виплош Ч., Макроэкономика, Санкт-Петербург, 1998.
19. Де Мельмеестер Ж., Дьебо К., Экономика образования: невыполненные обещания, 2009, № 6, стр. 127.
20. Денисон Э., Иследование различий в темпах экономического роста, М. "Прогресс", 1971, стр. 645.
21. Добрынин А. И., Дятлов С. А., Цыренова Е. Д., Человеческий капитал в транзитивой экономике, Санкт-Петербург, "Наука", 1999, стр. 13.
22. Долан Дж., Линдсей Д., Рынок микроэкономическая модель, СПб.: Печатный двор, 1992, стр. 260.
23. Дятлов С. А., Основы теории человеческого капитала, СПБ.: изд-во СПбУЭФ, 1994, стр. 160.
24. Журавлева Г. П., Наноэкономическая модель человека и личности в условиях формирования новой экономики, "Вестник Российской экономической академии им. Плеханова", 2008, N 5, стр. 3-12.
25. Ильинский И. В., Инвестиции в будущее: образование в инвестиционном воспроизводстве, СПбУЭФ, 1996.
26. Индекс развития человеческого потенциала , 2015, доклад ООН.
27. Иноземцев В. Л., Диалектика стоимости в постиндустриальном обществе, "Мировая экономика и международные отношения", 1998, N 6, стр. 332.
28. История экономических учений (современный этап), учебник под. общ. ред. Худокормова. А. Г., М., ИНФРА-М., "Наука", 1999, стр. 259-260.
29. Ищенко И. Г., Теоретические подходы к формированию понятия социальный капитал, Известия ПГПУ, N2(6) 2006, стр. 31.
30. Кастельс М., Галактика, Интернет. Размышление об интернете, бизнесе, обществе, Екатеринбург, Фактория, 2004, www.filosofihistorca.
31. Кастельс М., Информационная эпоха: экономика, общество и культура, под ред. О И. Шкаратана., М., "Знания", 2000, стр. 237.
32. Кейнс Дж., Общая теория занятости процента и денег, "Антология экономической классики", М., 1994, т. 2, стр. 425.
33. Кендрик Дж., Совокупный капитал США и его формирование, М., "Прогресс", 1978, стр. 15-17.
34. Клок К., Голдсмит Дж., Конец менеджмента и становление организационной демократии, СПБ., Питер, 2003, стр. 123-124.
35. Комаров У., Интеллектуальный капитал, "Персонал" 2000, № 5, стр. 56.

36. Кондратьев Н. Д., Проблемы экономической динамики, М., “Экономика, 1989, стр. 62.
37. Корицкий А. В., Запас человеческого капитала как фактор экономического роста в регионах России, “Креативная экономика”, 2007, №4, стр. 47-54.
38. Костюк В. И., Теория эволюции и социоэкономические процессы, М.: Едиториал УРСС, 2004, стр. 120-121.
39. Критский М. М., Человеческий капитал, Л., изд-во Ленинг. Уп-та, 1991, стр. 71-115.
40. Курганский С. А., Человеческий капитал: сущность, структура, оценка, Иркутск, ИГЭА, 1999.
41. Лотухина Э., Модель человека в новой экономике, “Белорусский журнал международного права и международных отношений”, 2004, N 2.
42. Маркс К., Энгельс Ф., Сочинения, т. 46, ч. 2, стр. 221.
43. Марцинкевич В. И., Образование в США: экономическое значение и эффективность, М., “Наука”, 1967.
44. Маршалл А., Принципы экономической науки, т.2, М., “Прогресс”, 1993, т. 1, стр. 207.
45. Махлуп Ф., Производство и распространение знаний в США, М., “Прогрес”, 1966, стр. 464.
46. Менгер К., Основания политической экономии, Австрийская школа в политической экономии, “Экономика”, 1992, стр. 2-4.
47. Милгром П., Робертс Дж., Экономика, организация и менеджмент, в 2–х.т., СПб:, “Экономическая школа”, 1999, том 2, стр. 140-142.
48. Нестеров Л., Аширова Г., Национальное богатство и человеческий капитал, “Вопросы экономики”, 2003, N 2.
49. Нуреев Р. М., Экономика развития: модели становления рыночной экономики, “НОРМА”, М., 2008, стр. 377.
50. Пенькова И. В., Экономика знаний: институциональные трансформации, Донецкий национальный технический университет, “Экономика промышленности”, N 1, (44), 2009.
51. Петти В., Смит А., Рикардо Д., Антология экономической классики, М., “Эконов”, 1993, стр. 478.
52. Пигу А. С., Экономическая теория благосотояния, М., “Прогресс”, 1985, т. II, стр. 182.
53. Полищук Е. А., Человеческий капитал в экономике современной России: проблемы формирования и реализации, Ижевск, изд-во ГТУ, 2005.
54. Сажина М. А., Научные основы экономической политики государства, учеб. пособие, М., изд-во НОРМА, М., 2011, стр. 150.
55. Сакс Дж., Макроэкономика. Глобальный подход, М., 1996, стр. 524, 549.

56. Смит А., Исследование о природе и причинах богатства народов, М., “Наука”, 1980, стр. 280.
Стиглиц Дж., Эллерман Д., Макро и микроэкономические стратегии для России, www.r-reforms.ru/ indexpub173.html.
57. Стоуньер Т., Информационное богатство: профиль постиндустриальной экономики, Новая технократическая волна на Западе, М., “Прогресс”, 1986, стр. 397-398.
58. Стюарт Т., Интеллектуальный капитал новый источник богатства организаций. Новая постиндустриальная волна на Западе. Антология, под. ред. В. Л. Иноземцева., М., 1999, стр. 389.
59. Тодаро М. П., Экономическое развитие, перевод с англ. под ред. Яковлева С. М., Зевина Л. З., М., Экономический факультет МГУ, “ЮНИТИ”, 1997, стр. 95.
60. Тоффлер Э., Будущее труда, Технократическая волна на Западе, М.: “Прогресс”, 1986, стр. 255.
61. Тоффлер Э., Метаморфозы власти, “Аст Москва”, 2009, стр. 86.
62. Хайек Ф. А., Пагубная самонадеянность. Ошибки социализма, М., 1992, стр. 123.
63. Ходжсон Дж., Социально-экономические последствия прогресса знаний и нарастания сложности, “Вопросы экономики” 2001, N8, стр. 31-44.
64. Цыренова А. А., Развитие человеческого капитала в условиях трансформации институциональной среды, Улан-Удэ, ВСГТУ, 2006, стр. 26.
65. Шараев Ю. В., Теория экономического роста, учеб. пособие для ВУЗ-ов. М., изд. дом ГУ ВШЭ, 2006, стр. 147.
66. Экономический рост и достойный труд: новейшие тенденции в странах Восточной Европы и Центральной Азии, доклад МОТ, 2008, стр. 13.
67. Aghion P., Howitt P, Endogenous Growth Theory, Cambridge: MIT Press, 1997, ch. 1.
68. Amin S., L’echangeinegal et la loi de la valeur // La fin d’un debat. P., 1973, p. 66-67.
69. Arrow K., The Economic Implications of Learning-by-doing// Review of Economic Studies, 29, issue 3, p. 155-173.
70. Bell. D., The Comind of Post-Industrial Society A Venture in Social Forecasting, N. Y., 1973, 507.
71. Ben-Porath Y., The Production of human Capital and the Life Cycle of Earnings, N. Y., L., 1970, p. 353-354.
72. Boag J., Harald A., Human Capital and the Cost of War, Royal Statis. Soc., January, 1916, p. 17.

73. Bovenbeng A. L., The Life-Course Perspective and Social Policies: An Overview of the Issues//CES ifo Economic Studies. 2008y., Vol. 54, N 4, p. 600.
74. Bowen H. R., Investment in Learning, San Francisco etc: Joossey-Bass, 1978, p. 362.
75. Brock M., de Koen V., The Great Contractions in Russia, the Baltics and Other Countries of the Former Soviet Union: A View from the Supply Side, IMF Working Paper, 2000, WP/00/32.
76. Campos N. F., Coricelli F., Growth in Transition: What We Know What We Don't and What We Should, Journal of Economic Literature, 2002y., Vol. 40, Sep., p. 783-836.
77. Crawford R., In the Era of Human Capital: the Emergence of Talent, Intelligence, and Knonledge as the Worldwide Economic Force and What it Means to Managers and Investors, New York, Harper Business, 1991, p. 256.
78. Danilov V. J., Discrete Convexity and Equilibria in Economics with Indivisible Coods and Money// RIMS Preprint No. 1300, Kyoto University, October 2000, p. 28.
79. Davis L., Norfh D., Institutional Change an Armenican Economic Growth, Cambridge, 1971, p. 5-6.
80. Denison E. F., The Unimortance of the Embodied Question, A.E.R., LIV, March, 1964, p. 91.
81. Dicson Y., Hamilton K., Expanding the Measure of Wealth//Finance and Development, December, 1996, p. 15.
82. Djankov S., Glaezer E., La Porta R., Lopez-de-Silanes F., Shleifer A., The New Comprative Econimcs//WBER Working Paper, 2003, N 9608, p. 595-619.
83. Easterly V., Fisher S., The Soviet Economic Decline: Historical and Republican Data, 1994y., WBER Working Paper N 4735, p. 3-46.
84. Emmanuel A., L'echange inegal. Essai sur les antagonisms dans les rapports economiques internationaux, Paris, 1969, p. 38.
85. Estrin S., Urga G., Testing for Ongoing Convergence in Central and Eastern Europe, 1970-95, CEPR Working Paper, 1997, № 1616, p. 5-72.
86. Fagerlind I., Formal Education and Adult Earnings, Stockholm, 1975, p. 78.
87. Fisher I., The Nature of Capital and Income, London, Macmillan, 1927,p. 5-87.
88. Fisher I., The Theory of Interest, New York, Augustus M. Kelley, 1965, p. 12-13.
89. Greene W.H., Econometric Analysis, 5th edition, Prentice-Hall, Upper Saddle River, New Jersey, 2003, p. 31.

90. Grossman G., Helpman E., Innovation and Growth in the Global Economy, Cambridge, MA: MIT Press, 1991, p. 359.
91. Hayami Y., Development Economics from the Poverty to Wealth of Nations, Oxford, 1997, p. 37.
92. HelliwellI., Puntam R., Education and Social Capital//Eastern Economic Journal, 2007, Vol. 33, N 1, p. 3-6.
93. Hendricks L., How Important is Human Capital for Development? Evidence from Immigrant Earnings//American Economic Review, 2002, Vol. 92, N1, p. 200-217.
94. Hirschman A., Rival Interpretations of Market Society: Civilizing, Destructive or Feeble?, Journal of Economic Literature, Vol. 20.,N 4, p. 1463-1484.
95. Hirschman A., The Passions and the Interests, Princenton, PrincentonUniversity Press, 1977, p. 872.
96. Kaldor N., Capital Accumulation and Economic Growth, Macmillan& GO LTD, 1961, p. 177-222.
97. Kalleberg A., «Nonstandard Employment Relations: Part-time, Temporary and Contract Work»// Annual Review of Sociology, 2000y., Vol. 26, p. 341-365.
98. Kiker B. F., The Historical Roots of the Concept of Human Capital // Journal of Political Economy, 1966, Vol.74, N 5.
99. Lutz F., Hague D., The Theory of Capital, Proceedings of a Conference held by the International Economic Association, London, 1961, p. 1-94.
100. Leslie L., Brinkman P., The Economic Value of Higher Education//ACE, Macmillan Publishing Company, N. Y., 1988, p. 288.
101. Lipset S. M., Political Man: The Social Basis of Modern Politics, N.Y.: Doubleday, 1960, p. 442.
102. Lucas R. E., On the Mechanics of Economic Development, Journal of Monetary Economics, 1988, N 22, p. 3-42.
103. Machlup F., Krowledge: Its Greation, Distribution and Economic Significance, Vol.11, The economics of Information and Human Capital, Princeton, Princeton Universition Press, 1984, p. 419.
104. Machlup F., The Economics of information and Human Capital // Princeton, 1984, p. 419.
105. Macleod Henry D., The Elements of Economics, Vol 11, New York: D Appleton @ Co. 1881, p. 134, 205-206, 213.
106. Maddison A., Dynamic Forces in Capitalist Development: Along Run Comparative View, Oxford: Oxford Universiti Press., 1991, p. 333.
107. Mahbub ul Haq., Reflections on Human Development, chapters 2 and 3, Oxford University Press., 1995, p. 288.

108. Mankiv N., Romer D., Weil N., Contribution to the Empirics of Economic Growth// Quanterly Journal of Economics, May, 1992, № 107, p. 407-438.
109. McCullox J. R., The Principles of Political Economy, Alex Murrey @ Son, 1870, p. 57, 67.
110. Medoff J., Abraham K., Are those Paid More Really More Productive? The Case of Experience// Journal of Human Resources, 1981, Vol. 16, p. 186-216.
111. Mincer Y., Schooling: Experience and Earnings, N. Y. 1974, p. 94.
112. Mulligan C., Sala-i-Martin X., Measuring Aggregate Human Capital // NBER Working Paper N 5016, 1995, p. 2.
113. Nie N. H., Junn J., Stohlik-Barry K., Education and Democratic Citizenship in America, Chicago: University of Chicago Press, 1996.
114. OECD (2001) Science, Technology and Industry Scoreboard 2001, Towards a knowledge-based economy.
115. OECD jobs Study (1994), Bazen S. and Benhayoun G., Low Pay and Wage Regulation in the European Community, British Journal of Industrial Relations, 1992, p. 623-638, www. worldbank.org.
116. Picot G., Building Community in the Workplace//The Community of the Futur. San Francisco, 1998, p. 99-135.
117. Pritchett L., Understanding Patterns of Economic Growth// The World Bank Economic Review, 2000, Vol. 14 №2, p. 221-250.
118. Psacharopoulos G., Woodhall M., Education for Development. An analysis of investment choices, Oxford University Press, 1985, p. 3-329.
119. Romer P. M., Increasing returns and long-run growth, Journal of political economy, Vol. 94, No. 5. (Oct., 1986), p. 1002-1037.
120. Schultz T., Investment in Human Capital // the Role of Education and of Research.N. Y., 1971, p. 64-65.
121. Schultz T., The Economic Value of Education, N. Y.: Columbia University Press, 1963.
122. Shultz T., Investment in Human Capital, N. Y., London, 1971, p. 26-28.
123. Shultz T., Human Capital in the international Encyclopedia of the Social Sciences, N. Y. 1968, vol .6.
124. Shultz T., Investment in Human Capital //Economic Growth an American Problem, Englewood Cliffs, 1964, p. 48.
125. Solow R. M., Contribution to the Theory of Economic Growth// Quarterly Journal of Economic 1956, February, p. 65-94.
126. Solow R. M., Technical Change and the Aggregate Production Function/ The Review of Economics and Statistics, 1957, Vol 39, № 8, p. 312-32.
127. Soskice D., Wage Determination: The Changing Role of Institutions in Advanced Industrialized Countries // Oxford Review of Economic Policy 1990y., Vol.6., N 4, p. 36-61.

128. Stroombergen A., Rose D., Nana G., Review of fhe Statistical Measurement of Human Capital/Statistics New Zealand, Wellington, 2002, p. 4.
129. Taubman P., The relative Influence of Inheritable and Environmental Factors and the Importance ofIntelligence in Earnings Functions, Personal Income Distribution, Krelle Ed. W., Amsterdam, 1978, p. 393.
130. The role of Human Capital in Economic Crowth: The Case of Spain // Working Paper of International Monetary Fund., http: // www.inf.org.
131. Thurow L., Invesment in Human Capital / L. Thurow, Belmont, 1970, p. 104, [22], [104], [118].
132. Uzawa H., Optimal Technical Change in an Aggregative Model of Economic Growth//International Economic Reviwe, 1965y., Vol. 3, N 1, p. 18-31.
133. Walras L., Elements of Pure Economics, Translated by William Jaffe. Homewood: Richard D. Irwin, 1954, p. 40, 214-216, 271.
134. Wolsh J. R., Capital Concerp appled to Man// The Quarterly Journal of Economics, 1935, N 2, p. 255-285.

ՖԻՐՈՒԶԱ ՆՈՐԱՅՐԻ ՄԱՅԻԼՅԱՆ

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Խմբագիր՝ **Ս. Ալավերդյան**
Էջադրող և սրբագրող՝ **Ս. Բոյաջյան**

Չափս՝ 60x84 1/16:
8,25 տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128, հեռ. 010 59 34 70